Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2059

24
Σ-70

2010

614
p 2454

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԵՒ

ԾԱՂԿԱՔԱՂԻ ՍԱՂՄՈՍԱՑ

Printed in Turkey

224
Հ-70

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԵՒ

ԾԱՂԿԱՔԱՂ Ի ՍԱՂՄՈՍԱՑ

ՏԱՂԱՁԱՓԵԱԼ ԵՒ ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ

Ի ՁԵՌՆ

ՏԵԱՌՆ ԵՂՈՒԱՐԴԱՑ Վ. ՀԻՒՐՄԻՒՋ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1864, ՌՃԺԳ

36624ա

ՑԻՇԱՏԱԿ

ԲԱՐԵՊԱՇՏԻ ՈՒՐՈՒՄՆ

(1900
39)
20209-60

2001

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քաջածանօթ են ամենեցուն օրհնութիւնք հին կտակարանաց՝ 'ի մարգարէից անտի և յառաքելական արանց և 'ի կանանց նուագեալք, ոչ միայն ըստ հոգեշունչ իմաստիցն՝ այլ և ըստ քերթողական յօրինուածոյն չքնաղագեղք։ Բայց գեղեցկութիւն բնագրի նոցա, որ 'ի չափ տաղի է գրեալ, նուազեալ է ոչ սակաւ 'ի թարգմանութիւնս նոցին վասն արձակ շարագրածոյն. որպէս և սաղմոսացն Դաւթի առ հասարակ։ Վասն որոյ խորհեցայ և զայնոսիկ, և ծաղկաքաղ ինչ 'ի սաղմոսաց՝ ոլորել 'ի չափ. պահելով զիմաստս նոցա և զբացատրութիւնսն ևս ըստ կարի։ Ութ 'ի նոցանէ կոչին աւագ օրհնութիւնք վասն որ 'ի նոսա բովանդակեալ բարձրագոյն խորհրդոցն և կանխասացութեանց զՔրիստոսէ։ Եւ յութից աստի երկոքին՝ Մովսեսի առն Աստուծոյ են օրհնութիւնք, յորոց երկրորդն յերիս բաժանեալ է 'ի սաղմոս մեր. որով լինին աւագ օրհնութիւնք տասն։ Սովորութիւն էր յառաջին ժամանակս 'ի գիշերային ժամերգութեան քաղել ութ կանոն սաղմոսաց,

մանաւանդ 'ի կիրակէս, և զհետ այնոցիկ յարել զօրհնութիւնքս կցորդ չարականաց։ Վասն որոյ 'ի խորհրդական միտս օրհնութեանցս այսոցիկ պատշաճեալ են Ստեփանոսի սիւնեցւոյ երգեալ չարականքն յինանց, որ այսր իսկ աղաչաւ աւադ օրհնութիւնքն կոչին։ Զի զիրկական խորհուրդս տնօրէնութեան փրկչին, յորս ակնարկեն օրհնութիւնքն մարգարէականք, երգէ 'ի նոսին ըստ ութ ձայնից յեղյեղելով. յորոց վառ ևեթ ձայնին օրհնութիւն համարի Շնորհալւոյն։ Յետկոյս իւրաքանչիւրոց 'ի տասնեցունց օրհնութեանցս յաւելումք և զայնոսիկ, առ 'ի տալ զճաշակ խորհրդական իմաստից սոցա։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԵՍԻ

(Ելից ԺԵ. 1:)

Յաղթական օրհներգութիւնք այնմ, որ փառաւորեալ. (1)
Ըզհեծեալսն Թշնամեաց եւ զերիվարս ընկէց ի ծով:
Օգնական ընդունելի եղեւ ինձ տէր ի փրկութիւն.
Սա է Աստուած իմ, օրհնեցից ըզսա եւ բարձր արարից.
Սա է Աստուած հօր իմոյ, երգեսս սրմա նրւագեցից:
Տէր խորտակէ զպատերազմունս, և տէր է յոյս անուն նորա:
Ըզկառս ըզզէն եւ զզօրութիւն Փարաւոնի ընկէց ի ծով.
Ընտիրք հեծելոց եւ սպառազէնք ըրնտաւորին
Կորեան անդընդասոյզ, ընկղմեցան 'ի ծով Կարմիր.
Խորք ծածկեցին ըզնոսա, ընկլան յանդունդս իբրեւ ըզվէմ:
Աջ քո տէր, աջ քո հզօր, փառաւորեալ է զօրութեամբ.
Աջ քո տէր, աջ քո հզօր հար խորտակեաց ըզթշնամին.
Եւ ի ճառանչ փառաց քոց ըզնդդիմամարտսն մանրեցեր:

(1) Օրհնութիւնս այս որպէս երգ քերթողական երիցագոյն է քան զամենայն տաղս, որ պահին անկորուստ. վասն որոյ և առաջին քերթիչս Մովսէս: Այսմ և առասպելք հեթանոսաց վկայեն, որք զառաջին քերթողս իւրեանց Մուսայս անուանեցին, և զերաժշտութիւն՝ մուսական արուեստս: Արդ 'ի սմա երգէ մարգարէն դյաղթութիւնն մեծ՝ զոր արար Աստուած յեգիպտոսէ, պատառելով զծովն կարմիր յանցս ժողովրդեան իւրոյ ընդ այն իբրև ընդ ցամաք, և զլեռնակարկառ ալիսն 'ի վերայ եգիպտացւոց ածելով՝ որ զհետ մտեալ հալածէին զնա: Այլ 'ի գոհաբանել անդ զողորմութիւնն Աստուծոյ 'ի վերայ իսրայելի, ակնարկէ 'ի միւս ևս մեծագոյն յոյժ ողորմութիւն նորա 'ի վերայ միւս այլ ժողովրդեան իւրոյ՝ որոյ օրինակ էր Իսրայէլ, վասն որոյ աւետարանիչն Յովհաննէս ասէ՝ (Յայտն. ԺԵ. 3.) թէ երանեալքն, որք անցին ընդ ծով աշխարհին, և ազատեալք յանմարմին փարաւոնէ՝ մանին յարքայութիւն երկնից, «Երգէին զերգս Մովսեսի ծառային Աստուծոյ»:

Առաքեցեր ըղբարկութիւն քո, եւ եկեր ընտրեա
Որպէս ասց՝ զի Հաբակկի ծախէ զցամաքն եղէգնաշամբ.
Եւ հոգմամբ սրբոմբրութեան քո պատառեալ ալիք ծովուն (1)
Պաղեցան գրպէս պարիսպ, պաղեցան ջուրքն վիմատառեալ:
Ասաց Թըշնամին. Հալածեցից եւ հասից,
Բաժանեցից ըզկապուա, ըզցուցից զանձն իմ աւարաւ.
Սատակեցից սրբով իմով, տիրեսցէ ձեռն իմ ի նոսա:
Առաքեցեր ըզհողմն քո, եւ ծով ծածկեաց ըզթըշնամիս.
Ընկըղմեցեր ըզնոսա որպէս կապար ի խորս ալեաց:
Ո՞վ է Աստուած իբրեւ ըզքեզ փառաւորեալդ ի մէջ սրբոց,
Որ սքանչելի փառաւք ստատես, եւ հնազանդին քեզ համագոյք.
Զըգեցեր զաջ քո եւ եկուլ երկիր ընկլոյզ ըզնոսա. (2)
Ածեր արդարութեամբ ըզժողովուրդ քո զայս փրկեալ,
Եւ զօրութեամբ քո տիրեցեր ի բանակեալսն սուրբ քոյին:
Լուան ազգք եւ բարկացան, երկունք կալան ըզհեթանոսս.
Յայնժամ իշխանք մովաբացւոց եւ դատաւորքն Եդոմայ
Ահիւ մեծաւ տագնապեցան, անկաւ դողումն ի նոսա.
Եւ բնակիչք քանանացւոց ըլքան լուծան վըհատեցան:
Անկցի զնոքօք ահ եւ երկիւղ, ի սատ բազկի քո քարացին,
Մինչեւ անցցէ տէր ժողովուրդ քո այս ազգդ քով փրկեալ,
Մինչեւ անցցէ անվրտանգ ժողովուրդ քո՝ զոր ըստացար.
Տարեալ ի լեառն անդր ըզնոսա ժառանգութեան քո տընկեսցես, (3)
Ուր պատրաստեալ քո բնակութիւնդ է ի տեղւոջն սրբրութեան,
Զոր ձեռք քո տէր պատրաստեցին, զոր արարեր տէր սրբրութիւն:
Տէր թագաւոր յաւիտեան, եւ յաւիտեանս անդր ի յեւեւս.
Զի երիվարք Փարաւոնի հանդերձ կառաւք եւ հեծելովք
Եւ սպառազէնք նորա ընկրկեցան անդընդախորս.
Եւ ի վերայ նոցա տէր ըղեւնոցեալ ջուրսն ծովուն,
Գնալով որդւոցն Իսրայելի ցամաքաթեւ ի մէջ ալեաց:

---

(1) Հողմ իմա ասա զՀոգի և զզօրութիւն Աստուծոյ, զփչումն վրէժխնդիր զօրութեանն Աստուծոյ, որպէս ի միւս թարգմանութեան մերում՝ որ ի սաղմոսին՝ ասի. « Հոգւով զօրութեան սրտմոլութեան քո պատառեցան ջուրք »:

(2) Կլանել ասէ զնդիպատացիս, ոչ ծովս, այլ երկրի. զի ջուրք որպէս գերեզմանք եղեն նոցա, որպէս թէ երկիր պատառեալ կլաներ զնոսա:

(3) Աստանօր նախապատմէ որ ինչ պատրաստեալն էր Աստուծոյ ժողովրդեան իւրում ածել զնոսա յերկիր բնակութեան Աբրահամու Իսահակայ և Յակոբայ, յերկիրն սուրբ՝ ուր հանդերձեալ էր առնել իւր բնակութիւն ի տաճարին, և ուր փրկիչն աշխարհի ծնանելոցն էր:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՑԻՆԱՆՑ

Ա. ՁԱՑՆ

Երգեսցուք երգ նոր Աստուծոյ փրկչին մերոյ, որ փրկեաց 'ի Թշնամւոյն ծառայութենէ զմեզ հզօրն իւր կարողութեամբ, և ապրեցոյց փառաւորեալն փառաւք:

Դու յանձն առեր Աստուած ելանել 'ի խաչ վասն մեր, և ընդ նոցին բևեռել զհնութիւն մեղաց մերոց. վասն որոյ երկրպագեմք և վերօրհնեմք զքո զանձառ խոնարհութիւնդ:

Զոր ընտրեաց Աստուած յամենայն ազգաց երկրի՝ ծնանել 'ի նմանէ, ապրեցուցանել զմեզ կռոցն 'ի պաշտելութենէ, որպէս զաստուածածին միշտ փառաւորեսցուք:

Ա. ԿՈՂՄՆ

Երգեցէք տեառն երգ նոր, և օրհնեցէք զանուն նորա յաղթական օրհներգութեամբ. զի նա փառաւք է փառաւորեալ:

Որ սեամբ հրոյ և ամպոյ առաջնորդեաց Ժողովրդեանն Իսրայէլի 'ի յանապատ, և ընկղմեաց զՓարաւոն զօրքն իւրովք 'ի ծով Կարմիր՝ երգեցէք, զի նա փառաւք է փառաւորեալ:

Ընդ-քեզ աղաչեմք հանապազ սուրբ աստուածածին, բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ, փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Բ. ՁԱՑՆ

Օրհնեսցուք զտէր, որ օրհնեաց զԻսրայէլ և փրկեաց զԺողովուրդն 'ի ձեռաց Փարաւոնի ամենազօր և սքանչելի փառաւքն իւրովք:

Տէր խորտակէ զպատերազմունս, տէր է յոյս անուն նորա, որ փրկեաց զամենեսեան 'ի ձեռաց նեղչաց իւրեանց ամենազօր և սքանչելի փառաւքն իւրովք:

Բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ, որ ծնար զտէր Աստուած՝ որ հովուէրն զԻսրայէլ ամենազօր և սքանչելի փառաւքն իւրովք:

ԱՌԱԳ ԿՈՂՄՆ

Փարաւոն հանդերձ կառաւքն ընկղմեցաւ 'ի հոսանս ջուրց, և որդիք Իսրայէլի գնացին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն:

Յորժամ հերձեաց Մովսէս խաչանիշ գաւազանաւն, պատառեցան անդունդք, և առաջնորդէր նոցա անմեկնելի լոյսն:

Սա է Բանն Աստուած՝ որ յառաջ քան զյաւիտեանս, անձառելի գալստեամբն իւրով յայտնեցաւ ալեզերաց՝ ծնեալ 'ի Կուսէն:

Գ. ՁԱՑՆ

Օգնական ընդունելի եղև իմ տէր ինձ 'ի փրկութիւն. սա է իմ Աստուած, և փառաւորեցից զսա:

Ի խաչին բևեռեցաւ, և զդժոխոց ելոյծ զբանութիւն. սա է իմ Աստուած, և փառաւորեցից զսա:

Աստուածածին դու ես յոյս և ապաւէն խոստովանողացս զքեզ, որդւոյդ քո և Աստուծոյ բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

ՎԱՌ ՁԱՑՆ

Երգեցէք տեառն երգ նոր ձայնիւ ցնծութեան,
Որ խոնարհեցաւ 'ի հայրական ծոցոյ փրկել զաղարածս,
Օրհնութիւնք նմա յաղթական երգով:
Որ բաժանեաց զծով աշխարհի խաչին խորհրդով,
Եւ ազատեաց յանմարմին Փարաւոնէ զնորս Իսրայէլ,
Օրհնութիւնք նմա յաղթական երգով:
Աստուածածին սիւն լուսոյ, ամպ հովանաւոր,
Եւ բնակարան Բանին՝ որ բանիւ հովուէր զԻսրայէլ,
Բարեխօսեա նմա վասն անձանց մերոց:

Դ. ՁԱՑՆ

Օրհնեսցուք զտէր, և զյաղթող զօրութիւն նորա փառաք երգեսցուք, զի փրկիչ և ապաւէն և օգնական մեր է:

Սա է Աստուած մեր, որ յաթոռ փառաց ընդ Հօր՝ յերկրի երևեալ. սմա փառաք երգեսցուք, զի փրկիչ և ապաւէն և օգնական մեր է:

Յաղթական օրհներգութիւն՝ որ ապրեցոյցն զԻսրայէլ 'ի ձեռաց Փարաւոնի, Քրիստոսի փրկչին մերոյ ամենեքեան երգեսցուք, զի փառաւորեալ է:

Որ մահու խաչին իւրոյ կենդանացոյց զմահացեալս, և մարմնոյն իւր բևեռմամբ զկապանս մահու ելոյծ, ամենեքեան երգեսցուք, զի փառաւորեալ է:

Որ տարար յորովայնի զանտանելին ամենեցուն, և ծնար անձառապէս զՔրիստոս յոյս ազգի մարդկան, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

Զկառս Փարաւոնի և զզօրութիւն նորա տէր ընկէց 'ի ծով Կարմիր, այն որ հզօրն է կարողութեամբ՝ նմա փառաք երգեսցուք, զի փառաւորեալ է տէր:

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Յաղթական քեզ օրհնութիւնք, տէր, որ զնորոց ծովուն հերձեր զջուր, զի 'ի նմա զբանաւորին ջաղխեցեր զդլուխ, և զարդելեալսն 'ի ձեռն խաչի քո վերածեր 'ի կեանս:

Կամաւոր մահուամբ 'ի քէն, տէր, արձակեցեր զհոգի զօրութեան. 'ի մեջ մահու զմահ աւերեալ վանեցեր, և զարդելեալսն 'ի ձեռն խաչի քո վերածեր 'ի կեանս:

Մինչեւ քեզ 'ի կանայս կոյս յետ ծննդեան երգեմք զօրհնութիւն, զի ըստ 'ի լուսոյ քո յայտնեցաւ աշխարհի, և զնախամօրն եբարձ զանէծս անՀաւ ծննդեամբն 'ի քէն:

ՆՈՐԻՆ ՄՈՎՍԵՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(Բ Օր. ԼԲ. 1–21:)

Լուարուք երկինք եւ խօսեցայց, լուիցէ երգոց իմոց երկիր.
Որպէս անձրեւ բարբառ շրբեցանց իմոց լիցի ընդունելի. (1)
Ինչպէն պատգամք իմ որպէս ցօղ քաղցրաձաւալ ցօղեալ յարօտ,
Իբր երկնառատ տեղատարափ 'ի ծարաւուտ տեղեալ յերկիր.
Զի զանուն տեառն կարդացից, և տուք նմա օրհնութիւն:
Զի Ճշմարիտ են գործք նորա, զի Ճանապարհք իւր իրաւամբք.
Հաւատարիմ է, չիք 'ի նմա ինչ անիրաւ. արդար է տէր.
Մեղան նմա որդիք ժանտք, ոչ եւս որդիք նորին, ազգ չար. (2)
Զայդ տեառն հատուցանեա դու ժողովուրդ խել և յիմար.
Ո՞չ նա է հայր քո որ փրկեացն զքեզ, որ ստեղծ և պահպանէ:
Յուշ քեզ աւուրքն յաւիտենից, յուշ լիցին դարք յազգէ ի յազգ.
Հարց դու զհայրըս քո, գուցէն. հարցիր զծերս, եւ պատմեացեն. (3)
Ի բաժանել զազգս ի սրփուել տեառն զորդիս Ադամայ,
Կացոյց սահմանս նոցա ըստ Թուոյ որդւոցն Իսրայելի.
Եղև բաժին տեառն Յակոբ, ժառանգութիւն իւր Իսրայէլ:
Բաւական եղեւ նմա յանմարդաբնակ անապատին,
Եւ պաշտպանեաց յանկիրդուոջ ընդն ի տօթ ծարաւահիւծ.
Խրատեաց ընդնա, պահպանեաց իբրեւ զբիբ ական իւրոյ.
Որպէս ի բոյն իւր թեւարկեալ արծուի ի ձագս իւր գրրգայ, (4)

Զօրհնութիւնս զայս երգեաց Մովսէս 'ի վերջկոյս քառասնամեայ ուղեւորութեանն յանապատին, 'ի կատարած կենաց իւրոց, ցուցանելով որդւոցն Իսրայելի զբարերարութիւնս Աստուծոյ, և նախապատմելով զապերախտութիւն նոցա և որդւոց նոցա առ Աստուած. վասն որոյ և զմերժել Աստուծոյ զնոսա 'ի սպառ, և առնուլ զհեթանոսս 'ի ժառանգութիւն:

(1) Այսինքն զի պատգամք իմ լիցին շայեկանք 'ի սիրտս ընդունելեաց որպէս ցօղ արօտոյ, և անձրեւ ծարաւուտ երկրի:

(2) Որդիք, որ ոչ եւս արժանի էին կոչելոյ որդիք Աստուծոյ, վասն խոտորելոյ իւրեանց 'ի նմանէ և զդիս պաշտելոյ:

(3) Ի ցրուել տեառն զնահապետս ազգաց 'ի Բաբելոն, եւ իւրաքանչիւրոց երկիր ընակութեան. և որոց յայնժամ ընակէին 'ի Քանան' եղ սահմանս ըստ թուոյ որդւոցն Իսրայելի, որ հանդերձեալ էին ապա ընակել 'ի տեղի նոցա:

(4) Արծուի բազմագորով 'ի վերայ ձագուց իւրոց, զնէ զբոյն իւր 'ի բարձունս անմատոյց օձից. այսպէս և Աստուած խնամեաց զորդիս իւր, բազկատարած 'ի խաչին՝ պատասպարեալ զնոսա 'ի խայթուածոյ հնոյ օձին:

Այնպէս եւ ինքն ի ժողովուրդ իւր հայրօրէն խանդաղատեալ,
ի Թիկնամէջքս իւր երեր ընտա բարձեալ թեւատարած.
Ինքն միայն բերեր ընտա, չէր ընդ նոսա առաւուած օտար:
Աչ բնակեցոյց ընտա յերկիր բերրի, մնանել յարդիւնս անդոց,
Դիել նոցա մեղր ի վեմէ, յապառաժուս իւղ ի ժայռից, (1)
Կոգի զկովուց, կաթն ի մաքեաց, ըզՃարպ գառին, Ճարպ 'ի խոյոց,
Զորթուց ցըլուց եւ նոխազաց ի յագեցումն կըշտասպինդ.
Եւ հասկաթուռ ցորեան ի Ճաշ, եւ զնաղողոյ արիւն ի յումպ:
Եկեր Յակոբ եւ յագեցաւ, եւ անդուշեաց ըզսիրելին.
Գիրացաւ եւ ստուարացաւ, եթող ըզտէր իւր եւ զհաստիչ.
Ապըստամբեաց նա յԱստուծոյ, յետս ի փըրկչէն իւրմէ եկաց.
Դառնացոյց օտարոտիւք իւրովք ըզնա եւ գրոչելովք.
Զոհեաց դիւաց եւ ոչ Նըմա, դից՝ զորս ոչքն Ճանաչէր,
Նորանորք եւ առ ժամայնք՝ զորս ոչ հաբք իւր գիտէին.
Եթող ըզտէր՝ որ ծնաւն ընտա, եւ զկերակրիչ իւր մոռացաւ:
Եռեա տէր եւ բարկացաւ ուստերց նորա եւ դրստերաց,
Ծանրացաստուն եղեւ յոյժ, զարթեաւ նախանձ իւր եւ ասէ.
Դարձուցից ի նոցանէ զերեսս իմ ի բաց,
Ցուցից նոցա որ ինչ գալոց է ի վախճան ժամանակի.
Ազգ անհաւան նախանձեցոյց զնա չաստուածովք իւրովք եւ կռովք,
Հանպա եւ ես արկից նախանձ ի նա չազգաւ ի պատուհաս, (2)
Հանպա եւ ես զայրացուցից ըզնա անմիտ ժողովրդեամբ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՉԱՑՆ

Նայեցայ ես յամենաղօր 'ի քո անօրէնութիւնդ, և երկիւղիւ փա-
ռաւորեցից զքեզ Քրիստոս:

Ի խաչէն քո մեռուցեր զմահ, և յաղբերէ կողի քո ակեղերաց
արբուցեր զանմահութիւն:

Աստուածածնին անարատ կոյս՝ առ քեզ ապաւինիմք, բարեխօսեա
առ Քրիստոս վասն անձանց մերոց:

(1) Զի բազումք են պարք մեղուաց 'ի Պաղեստին, և ինքնին 'ի խոռոչս վիմաց
կազմեն զմեղր. և ձիթենիք անդ առատ յապառաժուս 'ի բլուրս:

(2) Ակնարկէ 'ի հեթանոսս՝ զորս Հրեայք արհամարհէին և կոչէին զնոսա
չազգ. այլ Աստուած կոչելոց էր զնոսա 'ի հաւատս, և լուութեամբ շնորհաց Հո-
գւոյն՝ նախանձելի զնոսա առնելոց էր Հրէից, որպէս առաքեալն բացատրէ (Հռ.
ԺԱ. 19): Զի Աստուած 'ի պատիժ անհնազանդութեան Հրէից՝ փոխան նոցա զՀե-
թանոսս անկրօնս և անօրէնս ընտրեաց իւր ժողովուրդ, զհաւատս և զարդեգրու-
թիւն և զճանաչութիւն պարգևաց Հոգւոյն առ նոսա աղբերացուցանելով ակն յան-
դիման հրէական ազգին: Եւ այս ամենայն, փոխանակ յորդորելոց զՀրեայս ըստ
կամացն Աստուծոյ 'ի նախանձ բարի, որպէս յաւելու նոցն առաքեալ (Հռ. ԺԱ.
11.) առ չարութեան նոցա եղև մխանաց և գրգռութեան պատճառ, որպէս
գուշակէ սաստ մարգարէս:

Ա. ԿՈՂՄՆ

Նայեցարուք Ժողովուրդք 'ի սքանչելիս Աստուծոյ մերոյ, ունկնդիր լերուք հաւատացեալք Քրիստոսի, և 'ի միտ առէք զարդարութիւն Ճշմարտութեան. զի նա է յոյս հաւատացելոց:

Իւրութիւն անեղ անբաժանելի Բանն Աստուած կամաւորութեամբ յանձն էառ զմահ խաչի, և թաղեցաւ 'ի նոր գերեզմանի, և յարութեամբ իւրով շնորհեաց մեզ կենդանութիւն:

Ուրախ լեր, մայր անՃառ լուսոյ Մարիամ, սուրբ աստուածածին. քանզի 'ի քեզ կրեցեր զհուր աստուածութեանն, լուսեղէն տաճար Աստուծոյ Բանին, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Բ. ՁԱՑՆ

Աստուած խօսեցաւ 'ի բարձանց, լուարուք բնակիչք երկրի, որ եկն և փրկեաց զամենայն արարածս, զի զանուն տեառն կարդասցուք, և տուք օրհնութիւն 'ի բարձունս:

Նոր Խարայէլ կոչեցաք 'ի Քրիստոս, եղաք բաժին տեառն և Ժառանգակիցք Քրիստոսի, զի զանուն տեառն կարդասցուք, և տուք օրհնութիւն 'ի բարձունս:

Ի վիմէն կենդանութեան Ճաշակեցաք, զի քաղցր է տէր, և յիշ սրբութեան օծաք հաւատով, զի զանուն տեառն կարդասցուք, և տուք օրհնութիւն 'ի բարձունս:

Ի քեզ եմք ապաւինեալ, որ մայրդ ես և ապախին Քրիստոսի. լեր բարեխօս վասն մեր, զի զանուն տեառն կարդասցուք, և զքեզ մեծարեալ պատուեսցուք:

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Ի յերկնից խոնարհեցար, և նայեցաք 'ի սքանչելիս օրինաց քոց տէր, կենդանութեանց տուօղ ազգի մարդկան:

Իսկ փայտ խաչի քո կենատու գաւազան զօրութեան յայտնեցաւ տիեզերաց. եկիր կամաւ 'ի խաչ վասն արարածոց փրկութեան:

Ուրախ լեր, Մարիամ, նորատունկ բուրաստան, երկնաբերձ աշտանակ, ձոյլ ոսկի և Ճեմարան Բանին Աստուծոյ:

Գ. ՁԱՑՆ

Նայեցարուք երկինք և խօսեցայց և վերօրհնեցիք զՔրիստոս վառաց թագաւորն:

Փառք քեզ՝ որ յարեարդ 'ի մեռելոց Քրիստոս, պարգևեցեր մեզ զկեանսն յաւիտենից:

Բարեխօսեա անդադար առ որդիդ քո և Աստուած մեր, ծնօղ և ապախին տեառն:

ՎԱՌ ՁԱՑՆ

Նայեցարուք Ժողովուրդք 'ի սքանչելիս փրկութեան մերոյ, որ մարդասիրապէս Բանն 'ի Հօրէ որպէս ցօղ խոնարհեալ յերկիր. առաք օրհնութիւն տեառն Աստուծոյ մերոյ:

Որ զանարատ բաղուկս իւր միածինն տարածեաց 'ի վերայ խաչին, և զբաժանեալ որդիսն Ադամայ Ժողովեաց ընդ Թևաքն իւրովք. տուք օրհնութիւն տեառն Աստուծոյ մերոյ։

Զանապական Կոյսն Մարիամ՝ աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարար. տուք օրհնութիւն նմա հոգևոր երգով։

Դ. ՁԱՑՆ

Նայեցան զինուորութիւնք երկնայինք յահաւոր անօրէնութեան քո խորհուրդ, և փառաւորեցին զանպատում սքանչելիս քո մարդասիրութեանդ։

Բոցով սրտմտութեամբ քով Քրիստոս 'ի խաչին կիզեր զբանսարկուին բռնութիւնն, և կենարար յարութեամբ քո զեկեղեցի քո փրկեալ՝ փառս քեզ վերառաքեալ ուսուցեր։

Ցեսին դասք իմանալի զօրութեանց զԱստուած մարմնով առ 'ի քէն ծնեալ, իսկ եկեղեցի որդւոյ քո՝ աստուածածին զքեզ խոստովանի, որ միայն կուսութեանց ես մայր։

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Նայեցարուք 'ի բարբառ մարգարէին և 'ի պատգամս կենդանիս, որ քարոզեաց մեզ զյօղն կենաց 'ի յերկնից։

Զիմաստն քո Քրիստոս գուշակեաց մեզ մարգարէն, և զկամաւոր չարչարանս խաչին գոչէր ասելով. տարածեաց զձեռս իւր, ընկալաւ զնա, և բարձեալ բերէ 'ի փրկութիւն աշխարհի։

Քեզ միայնոյ մարմնացելոյդ 'ի սուրբ Կուսէն օրհնութիւն 'ի բարձունս վերերգեմք ասելով, փառք քեզ Քրիստոս՝ որ եկիր կամաւ Հօր կեցուցանել զմեզ։

ՆՈՐԻՆ ՄՈՎՍԵՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(Բ Օր. ԼԲ. 22–38։)

Հուր ի սաստէ իմմէ ելցէ, բորբոքեսցի բոցածաւալ. (1)
Ինչպէս ի գժոխս անդր ի ներքինըս լափիլցէ համաճարակ
Զերկիր նոցա եւ զբոյս երկրի, զայգեստանեայս և զարմտիսի.

(1) Շարայարութիւն սպառնալեացն Աստուծոյ ընդդէմ Հրէից, և ամենայն ամպարշտաց. զոր հուր սրտմտութեանն Աստուծոյ ոչ 'ի յաւիտենից եւեթ յայսմիկ, այլ անդր ևս յանվախճան յաւիտեանս պրեսցէ։ Թուի ակնարկել և 'ի կատարած աշխարհիս, յորում բնութիւնք հրդեհեալ լուծցին, ըստ առաքելապետին բանի (Բ. կիր. գ. 10. 12)։ Աղէտք և անձկութիւնք, որ հասին Հրէից 'ի քաղդէացւոց անտի և 'ի հռովմայեցւոց, օրինակք էին պատուհասից՝ որոց պատուհասէ տէր զամպարիշտս ասա և 'ի հանդերձելումն։ Վասն որոյ փրկիչն մեր զոյգ ընդ աւերածոյ Երուսաղէմի և կործանման տաճարին կցորդէ զաղէտս՝ որ հասանելոց են երկրի նախ քան զդալուստ նորա 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Վառեցին հիմունք լերանց նոցա, ածից կուռեցից
Զարիս ի դլուխ նոցին, ընդեռաս իմ ի նոսա սպառեցից։
Սովորեալ-ի գաղանաբեկք եւ գեշ թրուչնոց երկնից անկցին,
Կապեալք ի տոռունդս կաշկանդեալք անխուսելի.
Ժանիս ի նոսա արձակեցից ըզդազանաց,
Եւ զսողնոց՝ որ ընդ երկիր ի քարշ զերան իւրեանց ածեն.
Արտաքուստ ըզնոսա մանկակորոր արասցէ սուր,
Եւ ի ներքուստ արհաւիրք շուրջ ըզնոսա պաշարեսցեն,
Զերիտասարդն հանդերձ կուսիւ, եւ զսաղնդեային հանդերձ ծերով։
Ասացից, ո՞ւր լցեն արդ. ըզյիշատակ նոցա բարձից,
Այլ ոչ վաղվաղակի՝ ի վրէժ նոցին թշնամեաց, (1)
Զի մի խրոխտեալ ասիցեն՝ թէ զորութեամբ բազկի իւրեանց
Եւ ոչ ի Բարձրելոյն եհաս նոցա այս ամենայն։
Նա աւանիկ ազգ անխորհուրդ, չիք ի նոսա իմաստութիւն՝ (2)
Ի միտ առնուլ որ ինչ յապայս է հանդերձեալ կորուստ նոցա։
Զարմանք մեծ. եւ զի՞նդ մին ըզհազարս հալածեսցէ, (3)
Եւ թէր երկուք եւեթ ըզբիւրեսս մատնեսցեն ի պարտութիւն,
Թէ ոչ ի ձեռս նոցա տացէ տէր ինքն ըզթշնամիս.
Զի չեն եւ չեն, ծեւ եւ ծեւ, որպէս զԱստուած մեր դիք նոցա։ (4)
Այլ ի աստուածատունկ փոխեցաւ յորթ սոդոմական, (5)
Եւ տունկ նորա սորեկ ի յուռ այգեստանեացն Գոմորայ.
Խաղող նոցա խաղող լեղի, եւ դառնահամ ողկոյզ նոցա.
Գինի նոցա թոյն վիշապաց, եւ մաղձ խժից անբուժելի։
Ո՞չ ապաքէն կընքեալ առ իս այս ամենայն պահի ի վրէժ. (6)
Ո՞չ ապաքէն արձանագրեալ ի դրպրութիւնս իմ կայ անջնջ.
Յաւուր վրիժուց հատցեն պատիժք, վիհ ընդ ոտիւք բացցի նոցա.
Զի մերձ է օր բարկութեան, եւ մօտաւուտ կորուստ նոցա.

(1) Այլ ոչ վաղվաղակի. առ վայրիկ մի յամեցից զվրէժխնդրութիւն իմ, զի մի հակառակորդք ժողովրդեան իմոյ՝ զօրութեամբ իւրեանց կարծեսցեն կործանել զնա։

(2) Այս ինքն՝ ժողովուրդ իմ խորհրդակորոյս ոչ ի միտ առնու, թէ որպիսի կործանումն և կորուստ ապերախտութեամբն իւրով պատրաստէ անձին։

(3) Այս եւեթ շատ էր առ ի սալ նոցա ի միտ առնուլ, զի յորժամ հաւատարիմքն էին Աստուծոյ՝ սակաւք թուով, զդէմ ունէին հզօր բանակաց։ Իսկ յայնժամ մի ի թշնամեաց զհազար, և երկուք զբիւրս յիսարյելէ հալածէին։

(4) Զայսորիկ քաջ զփորձ առին եգիպտացիք, ամաղէկացիք, մովաբացիք և մադիանացիք, թէ որպէս Աստուած պաշտպանէր ժողովրդեան իւրում։

(5) Զի յետ երկնատեղաց հրոյն անբեր և ամուլ էին բոլոր երկրին սոդոմացւոց և գոմորացւոց, որպէս ասէ գիր. (Ծն. ԺԹ. 25.) « Կործանեաց տէր զքաղաքսն զայնոսիկ . . . և զամենայն բնակիչս քաղաքացն, և զամենայն բոյս երկրին »։ Եւ պլուր (Բ Օր. ԻԹ. 23.) « Մի ելցէ ի վերայ նորա ամենայն գեղ դալար, որպէս կործանեցան Սոդոմ և Գոմոր »։

(6) Այս ինքն զի արձանագրեալ կան առ իս ամենայն անօրէնութիւնք, և ի ժամանակի խնդրելոյ զվրէժ ամենայնի։

Զի դատեսցի նա զԺողովուրդ իւր, ի ծառայս իւր զբԹասցի, (1)
Քանզի լքեալս ըմբռնսա էառս մատնեալս ի գերութիւն.
Եւ ասէ. ցն, ո՞ւր են աստուածք ձեր՝ յորս էիք դուք յուսացեալ,
Զորոց ըզՀարսլ զոհից նոցա Հաշակէիք, եւ ըմպէիք
Ըզդիւանուէր բաժակ նոցին. արդ յարիցեն, օգնեսցեն ձեզ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՑՆ

Հրով աստուածութեանդ քո Քրիստոս այրեցեր զդրունս դժոխոց և լուծեր զմահ, և անմահութիւն պարգևեցեր ազգի մարդկան:

Յայգուցդ անմահութեան Հաշակեցաք և տեսաք, զի քաղցր և ուղիղ ես տէր, և վասն ամենեցուն փրկութեան եկիր յաշխարհ:

Սրբուհւոյ աստուածածնին բարեխօսութեամբ պարգևեա երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից:

Ա. ԿՈՂՄՆ

Հուր բորբոքեցաւ 'ի զօրութենէ խաչի քո Քրիստոս, կիզելով ըզԹշնամին 'ի վերայ երկրի՝ որ հակառակէր ստեղծուածոց ձեռին քո:

Իջանելով քո 'ի դժոխս գերասանծ խշնանութեամբ, յաղթեցեր մահու հզօր զօրութեամբ՝ կենդանարարելով զըմբռնեալսն առ 'ի նմանէ:

Ծանուցար տիեզերաց Աստուած և մարդ գոլով, մարմնացար 'ի սուրբ Կուսէն 'ի փրկութիւն ազգի մարդկան, միշտ փառաւորեալ յանմարմնոց զինուորութեանց:

Բ. ՁԱՑՆ

Սքանչելի հուր աստուածութեան քո, տէր, տարածեցաւ առհասարակ. և հրդեհեալ բոցակիզեաց զպատրանս նախաստեղծին, զի զամենեսեան վերակոչեաց 'ի մահուանէ յանմահութիւն:

Յայգուցդ անմահութեան Հաշակեցին սուրբք առաքեալքն, և լցին զտիեզերս աւետեաւք սուրբ յարութեանն, զի ընդ նոսին վայելեսցուք յանվախՀան ուրախութիւնսն:

Որ զՀուրն Աստուած յորովայնի քում ընկալար, և ծնար անՀնասակս զկենդանարարն ամենեցուն, բարեխօս զքեզ ունիմք որ երանելագոյն ես 'ի կանայս:

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Հրով աստուածութեամբդ քո Քրիստոս իջեր 'ի սորին վայրս մահու, և զնիպս դժոխոցն այրեցեր հզօրեղապէս, զքեզ բարեբանեմք ընդ հրեղէն օրհնաբանսն:

(1) Ի պատուհասել զյանցանս ժողովրդեան իւրոյ, զԹասցի յանմեղս 'ի նոցանէ, տեսանելով զվիլաս և զանձկութիւն նոցա:

Որ անկեցար յերկրի որթ Աշխարհիս, և Ամբեցար 'ի խաչին ողկոյզ անապատ յուրախութիւն ամենայն տրամեցելոց, զքեզ բարեբանեմք ընդ հրեղէն օրհնաբանսն։

Որ զՀուրն Աստուած յորովայնի քումմ կրեցեր, անբոցակեզ մնրենի, դառնաձաշակ պտղոյն քաղցրացուցիչ, զքեզ ունիմք բարեխօսս առ տէր վասն անձանց մերոց։

Գ. ՁԱՑՆ

Աստուածային հուր կենդանի՝ զօրութեամբ սուրբ Հոգւոյն այրեաց զդրունս գժոխոց, և զարգելեալսն 'ի նմա կորզեաց 'ի կեանս, և պարգևեաց մեզ կենդանութիւն։

Յանմահական 'ի յայգւոյն Ճաշակեցին սուրբ առաքեալքն. և ըստ հրաբաժակ դառնութեան այրմանն ընկալեալ Սոդոմ 'ի յաւուրն սոչորման։

Ի բարեխօսութիւն փութացեր մեզ սուրբ աստուածածին, առ 'ի փրկել զԺողովուրդս 'ի մեղաց և յապականութենէ։

ՎԱՌ ՁԱՑՆ

Որ զՀուր աստուածութեան քո, Քրիստոս, բորբոքեցեր ընդ տիեզերս ամենայն, բոցակիզեալ զբռնութիւն թշնամւոյն։

Ի յայգւոյն անմահութեան Եդեմայ Ճաշակեցին դասք առաքելոցն, զբաժակ կենաց քոց, տէր, և մեզ արբուցին։

Զտաճար անապական Բանին Հօր բարեբանեն դասք հոգեղենացն, գովեմք և մեք ձայնակցելով երկնայնոցն։

Դ. ՁԱՑՆ

Աստուածային բարիութեամբ հրոյ քո, Քրիստոս, կիզեր զգըժոխս, և զստորինս արձակեցեր զլմբռնեալսն առ 'ի նմանէ. զքեզ օրհնեմք Թագաւոր յաւիտենից։

Որ փոխանակ դառնութեան տնկոյն Եդեմայ զնաչ քո ետուր մեզ, Քրիստոս. և արբուցեր 'ի կողահոս աղբերդ զանապատ և զանվախճան ուրախութիւն։

Աստուածածին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի հրոյն տանջանաց, և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւնն։

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Ծագիս հարէք ամենայն հեթանոսք, և օրհնեցէք զԱստուած. զի հուրն Աստուած Բանն մարմնացաւ 'ի Կուսէն, աւերեաց զդժոխս և զզօրութիւն մահու եղոյծ։

Ընկալեալք զբաժակն ուրախութեան յայգւոյն անմահութեան սրբոց առաքելոցն, որք ընդ հանուր ընթացան ընդ տիեզերս, լուսաւորեցին հրաւիրելով յերկնից արքայութիւնն։

Յաւուր վերիժուց հատուցման ամպարշտաց վերածիցես զմեզ ընդ հոգեղենաց դասն 'ի տեղի անկելոց հրեշտակաց, բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին։

(1800) 39 20209-60

ՆՈՐԻՆ ՄՈՎՍԵՍԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(Բ Օր. ԼԲ. 39։)

Ծաներ՛ուք եւ տեսէք զի ես եմ տէր, եւ չկայ այլ ոք.
Որ հարկանեմ եւ ըժշկեմ, կեցուցանեմ եւ սպանանեմ,
Եւ չկայ ոք՝ որ ի ձեռաց իմոց ըզձեզ ապրեցուսցէ։
Զեռս ի յերկինս ամբարձեալ՝ երդուայ ի յաջ իմ, ասացի.
Կենդանի եմ ես տէր, եւ կենդանի ի յաւիտեան,
Զի սրեցից որպէս փայլակըն սայրասուր ըզսուսերս իմ,
Եւ ի խընդիր վրէժուց ըզձեռն իմ ընդ երկիր արձակեցից,
Հատուցումն թշնամեաց հատուցանել եւ ատելեաց.
Արբուցանել յարենէ նոցին ըզնետս իմ ի յադուրդ,
Ճարակ սրոյ իմոյ տալ ըզգերելոց գլուխս իշխանաց։
Ուրախ լերուք երկինք նովաւ, տուք նըմա փառս որդիք նորա.
Ուրախ լերուք հեթանոսք ընդ ժողովուրդ նորա փրկիչեալ.
Խրախոյս տացեն նըմա հրեշտակք Աստուծոյ, երդս առեալ տօնիւ, (1)
Զի վրէժ արեան որդւոց նորա ի թշնամեաց նորին խընդրի,
Վրէժ յատելեաց. եւ տէր քաւիչ ժողովրդեան իւրում լինի։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՑՆ

Ծանեաք զքեզ, Քրիստոս, թագաւոր յաւիտենից, և տեսաք ըզքեզ իշխան մահու և կենաց, զի դու ես տէր, և չկայ այլ ոք բաց 'ի քէն։

Աջով քով բարձրելոյ առցես զվրէժս 'ի թշնամւոյն, և նեռք քո արբցեն զարիւն նորա, զի դու ես տէր, և չկայ այլ ոք բաց 'ի քէն։

Յերրորդում մասին ասա օրհնութեանս 'ի սպառնալ Աստուծոյ պատուհաս Հրէից, ոչ անտես առնէ զնոսա 'ի սպառ. զի գալով չափ առաքելական բանին (Հռ. ԺԱ. 26.) յետ մտանելոյ բազմութեան ազգաց հեթանոսաց յեկեղեցի, այնուհետեւ և ամենայն Իսրայէլ, ոչ ըստ մասին ինչ որպէս յառաջն՝ այլ բովանդակ ազգն Իսրայելեան կիցցէ, ընդունելով զՀաւատս Քրիստոսի։ Նմին իրի հրաւիրէ ասա Մովսէս զհեթանոսս՝ ուրախ լինել ընդ նմա, և առաքեալն ասի խակ առեալ ցուցանէ զկցորդութիւն Հրէից և հեթանոսաց 'ի մի հաւատս, զմովսիսական բան երկրորդելով. (Հռ. ԺԵ. 10.) «Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա»։

(1) Յերբայականն և 'ի թարգմանութիւնս այլոց ազգաց պակասէ տողս այս, այլ յեօթանասնիցն և 'ի մերումս յերկոսին խակ թարգմանութեան պահի. և եթէ հրեշտակք ըստ տերունական բանին ուրախ լինին 'ի վերայ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, որչափ ևս առաւել վասն դարձի Իսրայելեան ազգին։

Որ յարեւարդ 'ի մեռելոց, նորոգեցեր զաղգս մարդկան, սրբուհւոյն աղաչանօք հաստատեա զՀիմունս եկեղեցւոյ սրբոյ քո, զի դու ես տէր, և չկաք այլ ոք բաց 'ի քէն։

Ա. ԿՈՂՄՆ

Ի սուրբ Երրորդութենէն ծանեաք, որ յառաջ քան զյաւիտեանս Բանն Աստուած՝ 'ի հայրական ծոցոյ խոնարհեալ վասն մեր. և ոչ ոք իցէ այլ Աստուած բաց 'ի նմանէ։

Որ բարձրացեալ բազկաւ 'ի վերայ խաչին՝ խորտակեաց զասպատամբ զթշնամին, իջանելով 'ի ստորինս՝ ազատութիւն շնորհեաց նրստեղոցն 'ի խաւարի. և ոչ ոք իցէ այլ Աստուած բաց 'ի նմանէ։

Անարատ տաճար Աստուծոյ Բանին, որ զնախամօրն Եւայի զանէծն բարձեր անձառելի ծննդեամբն 'ի քէն, առ նա միշտ բարեխոսեա վասն անձանց մերոց։

Բ. ՁԱՅՆ

Ծանեաք զքեզ, տէր, էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր խոնարհեցար 'ի յերկինից, ծանեաք ոչ այլ Աստուած բաց 'ի քէն։

Ծանեաք զքեզ, Քրիստոս, որ 'ի խաչին բեւեռեցար, և հեղմամբ արեանդ քո փրկեցեր զտիեզերս, ծանեաք ոչ այլ Աստուած բաց 'ի քէն։

Որ զթագաւորն ամենեցուն յորովայնի քում կրեցեր, սրբուհի մայր և կոյս և աղախին Քրիստոսի, բարեխօսեա առ տէր վասն մերոց փրկութեան։

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Դու ես Աստուած, անձառ ծանուցար մարդարէիցն, և միայնոյ քեզ Ճշմարտի և անմահի միշտ երկրպագեն ամենայն հաւատացեալք։

Որ զօրութեամբ բազկի քո խնդրեցեր զվրէժս յատելեաց, և հաստատեցեր զհաւատացեալս 'ի քեզ նշանաւ խաչիւդ ազատեցեր յաւիտենից 'ի մահուանէն։

Արդ խնդրեմք 'ի քէն թագաւոր փառաց Քրիստոս, աղաչանօք սրբուհւոյ անարատ մօր քո և Կուսի, ապրեցո զմեզ յաւիտենից 'ի մահուանէն։

Գ. ՁԱՅՆ

Ի սուրբ Երրորդութենէն ծանեաք զաէր մեր Յիսուս Քրիստոս, զԲանն Աստուած, որ 'ի ծոցոյ Հօր յառաջ քան զյաւիտեանս որդի. փառաւորեմք որ եկիր 'ի փրկել զարարածս քո։

Անձառ անօրէնութեամբ 'ի միշտ Կուսէն զանիծիցն բարձեր զդատապարտութիւն, և կամաւոր խաչելութեամբ քո տէր կեանս շնորհեցեր անոխակալ փրկիչ, առաւել վերօրհնեմք և երկրպագեմք որ ուրախութիւնդ ես երկնի և երկրի Քրիստոս Թագաւոր։

Աղաւնիմք 'ի քո բարեխօսութիւնդ, աստուածածին Մարիամ, մայր տեառն և Կոյս սուրբ, հարսն երկնից և դուռն կենաց, զոր մարդարէն ետես։

ՎԱՌ ՁԱՑՆ

Որ յանսկզբնական Հօրէ ծնեալ նախ քան զյաւիտեանս որդի, և ծանուցար մարդարէիւք Աստուած ընդ Հօր գոլով. զքեզ օրհնեմք զեկեալդ 'ի փրկութիւն արարածոց քոց տէր:

Որ 'ի խաչին մարմնով պատարագեալ՝ հեղեր զարիւն քո սուրբ, և արբուցեր զնեա քո յարեան խարդախողին մերոյ. զքեզ օրհնեմք զեկեալդ 'ի փրկութիւն արարածոց քոց տէր:

Որ զհուրն Աստուած 'ի քեզ կրեցեր մորենի անկիզելի, դառնաՀաշակ պտղոյն քաղցրացուցիչ անՀառելի քոյին ծննդեամբդ, 'ի քէն հայցեմք, մաղթեա փրկել զմեզ 'ի հրոյն յաւիտենից:

Դ. ՁԱՑՆ

Ցեսեալ զքեզ մահու՝ լուծաւ, և զԺոխոց սարսեալ դողային, որ զմահ մահու ծանուցեր մահ:

Որ Հոգւովդ քով սրբով ծանուցար քո արարածոցս, որ էնդ և եսդ և էդ Աստուած:

Հովանացեալ սուրբ Հոգւոյն 'ի վերայ քո, սուրբ կոյս Մարիամ, որ ծնար մարմնով զԲանն Աստուած:

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Ծանեալք զքեզ, Քրիստոս, փառակից Հօր և Հոգւոյն, նախապատմող մարգարէիցն զխոնարհելդ քո յերկնից. ծաներուք և տեսէք, զի սքանչելիս արար տէր:

Ցարևելից մեզ փայլեաց արեգակն արդարութեան. իշխանութեամբ բաղմեալ տեսաք զնա 'ի կառս խաչին. ծաներուք և տեսէք, զի սքանչելիս արար տէր:

Որում երկինք և երկիր ոչ բաւէին տանել լուսոյն, բնակարան բնութեան Բանին, սպասաւորեցեր. աղաչեա վասն մեր զմիածին քո զորդիդ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՑԻ ՄՕՐ ՍԱՄՈՒԷԼԻ

(Ա. Թգ. Բ. 1։)

Հաստատեցաւ սիրտ իմ ի տէր, ի տէր եղջիւր իմ բարձրացաւ.
Բացաւ բերան իմ ի վերայ նեղչաց իմոց եւ նախատչաց։ (1)
Ուրախ եղէ ի փրկութեան քում, տէր, զի դու միայն ես սուրբ,
Զի չկայ ոք այլ բաց ի քէն սուրբ, չկայ ոք արդար որպէս ըստքեզ։
Մի ի մնասիս պարծիցիք, եւ մի զամբարտաւանս բարբառիք. (2)
Մի ընդ շրթունսըս ձեր ելցէ զբրոյց հրպարտ եւ մեծաբան.
Զի Աստուած ամենագէտ ինքն է ընաւիցս տուիչ գիտութեանց։
Աղեղունք հրզօրաց արկարացան կորովաձիգք,
Եւ տարկարք վառեալ զինու խրախուսեցին արիասիրտք.
Լիք հացիւ նըւաղեցան, եւ շատմարանք զերան քաղցից.
Ամուլն եղեւ մայր բազմածին, եւ բազմածինն անզաւակ։ (3)

Զօրհնութիւնս զայս երգեաց Անննա մայր Սամուէլի մարգարէի, ըստ հաւանագոյն կարծեաց՝ յընծայել զնա 'ի տաճարին։ Գոհանայ 'ի սմա զտեառնէ, և ինչ ինչ 'ի հանդերձելոց նախապատմէ. զորմէ ասէ սուրբն Օգոստինոս (յՂ. քաղաքին Աստուծոյ. գիրք ԺԷ. գլ. Դ.) «Մի թէ կնոջ լոկոյ համարիցին բանքս՝ ընդ ծնունդ որդւոյ իւրոյ խրախացելոյ, կամ թէ ցոյնվայր օտարանայցէ հանճար մարդոյ 'ի ճշմարտութեանն լուսոյ՝ մինչև չիմանալ թէ անցանեն զանցանեն ասացուածքս այս մաղթանաց 'ի վեր քան զկար կնոջ։ Բայց արդ որ միանգամ ըստ պատշաճի մտառու որ իցէ իրացն՝ որ յերկրաւոր պանդխտութեանս սկսան առնուլ զկատարումն, ոչ՞ահա 'ի յուշ բերէ և տեսանէ և ճանաչէ՝ թէ 'ի ձեռն կընոջս այսորիկ... այնպէս խօսեցաւ մարգարէահրաշ Հոգւով՝ նա ինքն կրօնք քրիստոսական, նա ինքն քաղաքն Աստուծոյ՝ որոյ թագաւոր և կերտող Քրիստոս է, և միով բանիւ՝ նա ինքն շնորհքն Աստուծոյ, յորմէ ամբարտաւանք օտարանան՝ զի անկցին, որով խոնարհք ընուն՝ զի կանգնեսցին. զոր և մեծարարքառ հնչեցոյց երգդ այդ»։

(1) Քանզի նախատեալ մնաւանդ 'ի Փեննանայ վասն ամլութեանն, չկարէր տալ պատասխանի. վասն որոյ բանայր յայնմհետեւ բերան իւր ընդդէմ՝ նախատչացն, մնաւանդ ընդունելովն 'ի տեառնէ զաւակ, և փրկելով նովաւ յամլութենէն։

(2) Պատճառս առեալ 'ի մնապարծութենէ նախատչացն՝ դովէ զխոնարհութիւն, Աստուծոյ ընծայելով զամենայն յաջողութիւն և զվառս։ Դիտելի է 'ի տողս յայսոսիկ զնմանութիւն իմաստից ընդ օրհնութեան Կուսին. «Ցրուեաց զամբարտաւանս... քակեաց զՀզօրս յաթոռոց... բարձրացոյց զխոնարհս... զքաղցեալս լցոյց հացիւ և զմեծատունս արձակեաց ունայնս»։

(3) Ամուլն եղեւ մայր բազմածին. զի և այլ հինգ որդիք եղեն Անննայի յետ Սամուէլի. են եւ՝ որք համարին ոչ եւս յայնմհետեւ Փեննանայ լեալ որդիս։ Ակնարկէ բանիս յեկեղեցի հեթանոսաց, որ ամուլն էր և եղև բազմածին, իսկ հրէականն ամլացաւ, որպէս դեղեցիկ բացատրէ սուրբն Օգոստինոս անդ. «Վասն զի քաղաքն Աստուծոյ ամուլ էր յամենայն հեթանոսս մինչև ծագեալ էր զաւակն՝ զոր տեսանեմք. տեսանեմք և զնախ բազմածինն որդւովք՝ այժմ նուազեալ զերկրաւորն Երուսաղէմ»։

Ինքն է մահու եւ կենաց տէր, տայ եւ առնու ըստ կամս ի բաց.
Իջուցանէ ի գերեզման, և ի դժոխոց հանէ ի լոյս։ (1)
Զաղքատութիւն եւ զմեծութիւն ինքն տայ, ինքն է որ բառնայ.
Խոնարհ առնէ զամբարտաւանութիւն կործանեալ մինչեւ յերկիր,
Եւ բարձր առնէ զաղքատս յերկրէ եւ զտառապեալս ի յաղբեւոյ.
Նստուցանէ զնոսա ի շքանս ընդ զօրաւորս ժողովրդեան,
Եւ պատրաստէ աթոռ փառաց նոցա յաւերժ ժառանգութիւն։
Կատարէ զուխտս ուխտաւորի, օրհնէ զյամսոյր ամս արդարոյ։
Մի խնամառուն յիմաստութիւն իւր, մի հրզօրն ի զօրութիւն, (2)
Եւ մի մեծամտուն ի մեծութիւն իւր պարծեսցի.
Այլ որ պարծիցի՝ ի տէր Աստուած իւր պարծեսցի, գիտել զընտ
Եւ ծառայել նմա, առնել զարդարութիւն եւ զիրաւունս։
Տէր էլ յերկինս եւ որոտայ, ինքն դատի ըստ երկրի.
Տայ զօրութիւն թագաւորաց մերոց իշխել արդարութեամբ,
Եւ զծերոյ իւրոյ զեղջիւր փառաց ի փառս բարձր առնէ։ (3)

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՅՆ

Հաստատութիւն իմ լեր տէր, որ յաղթող խաչիւ քո զդժոխս ա-
ւերեցեր. քանզի յարեաւ երեքօրեայ, զանկեալն կանգնեցեր զԱդամ։
Օգնեա՝ փրկիչդ Աստուած՝ պարծելոցս 'ի խաչ քո, յուսոցայս 'ի
քեզ տէր. և փրկեա մեսն բարեբար 'ի վանդակ զանձինս մեր։
Միայն օրհնեալդ 'ի կանայս, մայր և միշտ կոյս, և խմանալի լոյս.
Ծնող արարչին մերոյ, անդադար մեծացուցանեմք։

Ա. ԿՈՂՄՆ

Սիրտ իմ հաստատեցաւ 'ի քեզ հաւատով Քրիստոս Աստուած,
և բարձրացաւ յոյս իմ 'ի փառս քո, որ յանճառելի ծոցոյ Հօր խո-
նարհեցար վասն մեր, և երևեցար մարդ Աշխարհատեսիկ։
Որ զկենդանարար մարմին և զարիւնդ քո բաշխեցեր քաղցելոց, և
'ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ՝ արբուցանելով տիեզերաց զան-
մահութիւն 'ի Հաշակիմանէ մահաբեր պտղոյն։

(1) Ի դժոխս, այսինքն 'ի գերեզման, որպէս բազում ուրեք 'ի սուրբ գիրս նշանակէ։

(2) Զայնն և 'ի ձեռն Երեմիայի մարգարէի ասէ տէր. (Թ. 23.) «Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, և մի պարծեսցի հզօրն 'ի զօրութիւն իւր, և մի պարծեսցի մեծն 'ի մեծութիւն իւր. այլ յայն պարծեսցի որ պարծիցին՝ իմանալ և ճանաչել զիս, թէ ես եմ տէր Աստուած՝ որ առնեմ զիրաւունս»։ Եւ զայս երկրորդէ առաքեալն առ Կորնթացիս. (Ա. Կոր. գլ. Ա. 31։)

(3) Թէպէտ և 'ի թագաւորս Իսրայելի ակնարկէ ըստ գրոյն, այլ իմանայ զՔրիստոս, և զիշխանութիւն նորա՝ զոր եղջերն յայտ առնէ։

Մայր Քրիստոսի և ընակարան բանին Աստուծոյ, անհասութեան խորհրդոյն սպասաւորեցեր, միջնորդ եղեր Աստուծոյ և մարդկան, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

Բ. ՁԱՑՆ

Հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և բարձրացաւ յոյս իմ 'ի փառս քո, որ նստիս 'ի քրովբէական աթոռ, հաստատութիւն իմ լեր տէր քոյով յարութեամբդ։

Որ զանարատ բաղուկս քո տարածեցեր 'ի վերայ խաչին, ժողովել զհեռացեալսն ամենակարող զօրութեամբ, հաստատութիւն իմ լեր տէր քոյով յարութեամբդ։

Ցոյս մեր և ապաւէն, մայր տեառն և կոյս սուրբ, որ հուր աստուածութեանն ոչ բոցակիզեաց զքո սուրբ զորովայն, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան։

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Հաստատութիւն իմ լեր տէր և յոյս փրկութեան, որ զառաջին Ադամն ազատեցեր 'ի մեղայ, նորոգեա և զիս զապականեալս մեղաք։

Որ յատենի կացեր անպարտ կողին պատրանաք, և արբուցեր մեզ 'ի կողահոս աղբերդդ, նորոգեա և զիս զապականեալս մեղաք։

Աստուածածին անարատ մայր տեառն և կոյս Մարիամ, որ եղեր ընդունող Բանին Աստուծոյ, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան։

Գ. ՁԱՑՆ

Հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած իմ, զի փառաւոր յարութեամբն իւրով աւերեաց զդժոխս։

Ընդարձակեցաւ բերան իմ, տէր, 'ի վերայ թշնամեաց իմոց. քանզի հարեր զպատերազմ քո հզօր զօրութեամբդ։

Որ տարար զԲանն Աստուած յարդանդի քում, և ծնար զնա մարմնով ապրեցուցիչ, աստուածածին բարեխօսեա կեցուցանել զմեզ։

ԿԱՌ ՁԱՑՆ

Հաստատեցան սիրտք մեր առ քեզ փառաց թագաւոր,
Որ 'ի յերկնից խոնարհեալ լիցեր փրկել զարարածս։
Պահեա ըստեղ նշանաւ յաղթող խաչի քո Քրիստոս,
Յոր բարձրացար կամաւ հօր, բարձեր զանէծս Ադամայ։
Որ զնախամօրն ըզյանցանս լուծեր ծնընդեամբ քո սուրբ Կոյս,
Բարեխօսեա անդադար վասն մերոյ փրկութեան։

Դ. ՁԱՑՆ

Աղեղն հզօրաց նուաղեցան, և որք 'ի նուաստութեանն էին որ-կաբեն զգեցան զօրութիւն. վասն այնորիկ հաստատեցաւ սիրտ իմ և խորհուրդ իմ 'ի տեառնէ խմիզ։

Ձէն ընդունելութեան, Քրիստոս, մեք ընկալաք սուրբ զխաչ քո

նշան անպարտելի զօրութեան, վասն այնորիկ հաւատացաք մեք 'ի յօրհնել զքո սուրբ զարշաւանս:

Զգրունս դժոխոց պղնձիս խորտակեցեր, Քրիստոս, յորժամ յարեար 'ի մեռելոց հզօր զօրութեամբ. վասն այնորիկ հաւատացաք մեք 'ի յօրհնել զքո սուրբ զյարութիւնդ:

ՎԵՐՋԻՆ ՁԱՅՆ

Հաստատեցան սիրտք մեր առ քեզ, Քրիստոս Աստուած, և ուրախացաք մեք 'ի փրկութեան քումմ. ընկալ զաղաչանս մեր միայն մարդասէր:

Որ պատրաստեցեր քո խնամատութեամբդ զգիտութիւն յարատածս, և ծանուցեր քո յարութեամբդ զյարութիւն մեր, ընկալ զաղաչանս մեր միայն մարդասէր:

Խնդա Մարիամ, որ եղեր մայր Քրիստոսի, և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ Բանն Աստուած, զի փրկեսցէ զմեզ 'ի փորձութենէ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

(ԻԶ. 9:)

Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ,
Վասն զի լոյս են ի վերայ երկրի հրամանք քոյին տէր: (1)
Ուսարուք զարդարութիւն եւ զիրաւունս բնակիչք երկրի.
Այլ ամպարիշտն կարկեցաւ, և մի ուսցի զարդարութիւն.
Բարձցի յերկրէ ամպարիշտն, եւ մի տեսցէ զփառս Աստուծոյ:
Բարձր ես դու, տէր, հրաշք բաղկաւ, եւ նոքա ոչ գիտացին.
Ի միտ առցեն զայն անապան, եւ խռովեսցին ամաչեցեալ:
Նախանձ ի սիրտ անկցի անիսրատ եւ ապառուամ ժողովրդեան.
Տոչորեսցին նախանձու, հուր ըղթըշնամիս քո կերիցէ:
Տէր Աստուած մեր, տուր մեզ շնորհեա զխաղաղութիւն քո զերկ-
Որ ըստ գործոցս մերոց զամենայն ինչ հատուցեր մեզ: [նային,
Տէր Աստուած մեր, սատիր ըզմեզ, զի բաց ի քէն ոչ զոք գիտեմք, (2)
Եւ զքեզ միայն կարդամք, զանուն քո անուանեմք զօրհանապազ.
Զի ոչ մեռեալք թէ զկեանս երբեք տեսանիցեն վերակենցաղք,
Եւ ոչ բըժիշկք թէ զնոսա յարուցանել կարացին:

Յորդորէ մարգարէն 'ի սմա զմարդիկ յարդարութիւն, ցուցանելով նոցա ըզպատուհաս անօրինաց, և խրախուսելով զնոսա 'ի յոյս յարութեան: Եւ ինդրէ 'ի տեառնէ զխաղաղութիւն հոգւոյ, որ երկնայնոյ խաղաղութեանն է առհաւատչեայ:

(1) Մթան գիշերոյ հակադրէ զՀրամանս Աստուծոյ, որ լոյս են ճշմարիտ:

(2) Ակնարկէ 'ի կռապաշտութիւն խորայեալացուց, յորմէ զգաստացելոցն ինդրէ զխաղաղութիւն և զաստուածպաշտութիւն, զնա եւթ գիտել, նմա միայնոյ ծառայել, և զանուն նորա կարդալ:

Հարեր սատակեցեր, ոչ թողեր Ձեռ արու նոցա.
Յաւէլ տեր արդ, յաւել նոցա չար ի վերայ ածել չարեաց,
Զար ի վերայ անօրինաց մինչեւ ի ծագս ածել երկրի։
Այլ մեք ըզքեզ տեր յիշեցաք ի նեղութեան, եւ ծանեաք
Զի փոքրը մի ի կենցաղումս նեղութիւն է խրատ քո մեզ.
Որպէս յղի զի ի յերկունսն Ճչչիցէ առ ի ցաւոց, (1)
Այնպէս եղաք մեք առաջի քո յերկիւղ քումմէ տեր.
Զի յղացաք եւ երկնեցաք եւ զիբրկութեան ծընաք հոգի։
Ոչ եւրս մեք կործանեսցուք, այլ երկրաքարշք անկցին կործան.
Զի յարիցեն մեռեալք ի կեանս, կենդանացին ամենեքեան.
Զի զարթիցեն ուրախութեամբ՝ որք հողացեալ կան ի շիրմի.
Վասն զի ցօղդ, որ ի քէն է, բըժշկութիւն է նոցա. (2)
Բայց երկիրն ամպարըշտեալ սատակմամբ կործանեսցի։ (3)
Խոյս ժողովուրդ իմ՝ տուր, եւ գնա ի շտեմարանսս քոյին մուտ. (4)
Փակեա ըզդրուանսս քո թագիր առ ժամանակ մի փախըստեայ,
Մինչեւ անցցէ սրբոմբարութիւն աստուածասաստն բարկութեան։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՑԻՆԱՆՑ

Ա. ՁԱՅՆ

Ի գիշերաց կանխելով վերօրհնեմք զքեզ Քրիստոս Աստուած, որ վասն մեր խոնարհեցար, յանձն առեր զամենայն, և խաչի համբերեցեր։

Լուսաւորեցաք 'ի հրամանաց քոց թագաւոր թագաւորաց Աստուած, որ զմահու լուծեր զիշխանութիւն, յանձն առեր զամենայն և խաչի համբերեցեր։

Քերովբէական թեւովք պարածածկեցար սրբուհի աստուածածին, Կոյս և մայր, և բնակարան աստուածութեանն, վերօրհնեալ յամենայն առաքելական քարոզութեանց։

Ա. ԿՈՂՄՆ

Լոյս Ճշմարիտ Քրիստոս Աստուած, առ քեզ հոգի իմ՝ առաւօտէ, 'ի յերկրի երեւեցո ինձ զերեսս քո։

Քոյով պատուական խաչիւ, Քրիստոս Աստուած, և հրաշափառ առաւօտու յարութեամբդ՝ երեւեցո ինձ զերեսս քո։

(1) Ցդարձ և զապաշաւ մեղաւորի նմանեցուցանէ երկանց ծննդականի, որ զկնի տրամութեան ածէ ուրախութիւն։

(2) Որպէս ցօղ զի կենդանարար զբոյս թառամեալ և խոնարհեալ 'ի հող, այսպէս և հրամանն Աստուծոյ կենդանացուցանէ զմեռեալս. և ցօղ արեանն Քրիստոսի յարուցանէ զմեզ 'ի մեռելութենէ մեղաց։

(3) Երկիրն, ուր գերեալ կային խրայելացիք։

(4) Ակնարկէ 'ի կատարած աշխարհիս՝ սպասել մեալ արդարոց 'ի գերեզմանս առ ժամանակ մի, մինչև բարկութիւն Աստուծոյ հրայրեաց լուծցէ զաշխարհ։

Հոգւոյն զքեզ հովանացեալ՝ միայն սրբութիւն, ծնաբ զԲանն Աստուած զանձառելոյ Հօր ծնունդ, և յայանեցաւ միութիւն Երրորդութեանն։

Բ. ՁԱՅՆ

Ի գիշերայ կանխեցեալ փառաւորել զԲանդ Աստուած, որ վասն իմ խոնարհեցար 'ի յերկինից, արարեր խաղաղութիւն 'ի յերկինս և 'ի յերկրի։

Տուօղ խաղաղութեան Քրիստոս, որ զդատակնիք մահու լուծեր 'ի վերայ սուրբ խաչին, և հաշտեցուցեր զՀայր ընդ արարածս, արարեր խաղաղութիւն 'ի յերկինս և 'ի յերկրի։

Փառաբանակից Հօր և սուրբ Հոգւոյն, որ լուսափայլ յարութեամբդ քո կենսագործեցեր զաղգս մարդկան, տուր մեզ տէր զքո զխաղաղութիւնդ։

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Ի գիշերայ կանխեալ վերօրհնեմք զանձառ տնօրէնութեան քո խորհուրդ, որ վասն մեր խոնարհեցար 'ի յերկինից, խաղաղացո զկեանս մեր միայն մարդասէր։

Որ բարձրացար 'ի խաչին յաղագս դատապարտութեանն Ադամայ, և բարձեր զիշխաբեր անիծագրութիւն հեղմամբ արեան քո սրբոյ, խաղաղացո զկեանս մեր միայն մարդասէր։

Որ 'ի վեր քան զքերովբէսն երևեցար աստուածածին Մարիամ, տանելով յորովայնի զանհասանելի զբնութիւնն, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան։

Գ. ՁԱՅՆ

Հոգի իմ յամենայն ժամ զքեզ փառաւորէ տէր, վասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ երկրի։

Հոգի քո սուրբ և բարի զէն ինձ Քրիստոս եղիցի ընդդէմ թշնամւոյն հակառակողի։

Հոգւոյն սրբոյ հովանացեալ զքեզ աստուածածին, մարմնացեալ Հօր հաճութեամբ Որդին միածին մեզ 'ի փրկութիւն։

ՎԱՌ ՁԱՅՆ

Լոյսդ որ ընդ Հօր նախ քան զյաւիտեանս՝ եկիր լուսաւորել ըզխաւար մեզս աշխարհի, ծագեալ 'ի սմա զլոյս հրամանի, առ քեզ հոգի իմ առաւօտ։

Կեանք 'ի կենաց և լոյս յարութեան, որ արարեր խաչիւ քո զխաղաղութիւն յերկինս և յերկրի, տուր մեզ տէր զքո զխաղաղութիւնդ որպէս սրբոց քոց առաքելոց։

Զմայրդ լուսոյ Բանին Աստուծոյ, որ եղեր արևելք արեգականն 'ի մեզ ծագողին, բարեխօս ունիմք փրկել զմեզ 'ի փորձութենէ։

Դ. ՁԱՑՆ

Որ բանիւ հրամանի քո հաստատեցեր զերկինս և զերկիր, արա-
րիչդ ամենայն եղանուիթեանց, վասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ
երկրի :

Որ 'ի ձեռն փրկական խաչի քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, և
եռուր պարիսպ ամրութեան հաւատացելոց, վասն զի լոյս են հրա-
մանք քո 'ի վերայ երկրի :

Որ եկիր 'ի կատարումն կանխասաց մարգարէիցն, յանձն առեր
մարմնանալ 'ի սրբոյ Կուսէն մարդ Ճշմարտապէս, վասն զի լոյս են
հրամանք քո 'ի վերայ երկրի :

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Ի գիշերաց կանխեալ աղաղակեմք լուր մեզ տէր, վասն զի բաց 'ի
քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր :

Տուր մեզ տէր զքո զնաղաղութիւնդ, և փրկեա 'ի ձեռաց անօրի-
նաց խստաց ապստամբողաց, վասն զի բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք
մարդասէր :

Բարեխօսութեամբ Ծնողի քո և միշտ կուսի հայցեմք 'ի քէն Քրիս-
տոս փրկիչ աշխարհի, վասն զի բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մար-
դասէր :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԱՑ

(Եսայ. ԼԷ. 10։)

Ի վերանալ յինէն աւուրց՝ ասացի ցանձն իմ՝ վերհատեալ.
Հասանէ՛ ուրեմն ինձ արդ կոխել ըզսեամբս դըժոխոց.
Ոչ եւս ապա այսուհետեւ ոչ եւս է ինձ յոյս կենաց,
Եւ ոչ զերկիրս այսուհետեւ տեսից բնակչօք հանդերձ իւրովք։
Պակասեցայ յազգատոհմէ, ըստ բաղ թողլ զկեանս աշխարհի.
Եղ եւ գնաց յինէն հոգի իմ մեկնեցաւ որպէս այն՝
Որ քակէ զտաղաւար, որպէս ոստայն եղծեալ սարդի. (1)
Որպէս զոստայն ոստաբաց կեանք իմ մերձ եղեն ի հատանել։
Իբր ի Ճիրանս առիւծու յառաւօտէ կայի մատնեալ,

Եզեկիա արքայ ծանուցեալ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի զօրհաս իւր, խընդ-
բեաց 'ի տեառնէ խնայել յինքն, և լսելի լեալ՝ ընկալաւ այլ ևս հնգետասան
ամս կենաց։ Վասն որոյ յառաջնալ իւրում 'ի հիւանդութենէն՝ մատոյց Աս-
տուծոյ զօրհնութիւնս զայս։

(1) Զմարմին մարդկեղէն նմանեցուցանէ տաղաւարի՝ ընդ որով բնակեն հո-
վիւք, առ 'ի ցուցանել զանհաստատութիւն նորին. և համարի զկեանս որպէս
սարդի ոստայն դիւրեղծանելի, և որպէս թեզան ոստայնանկաց դիւրախզելի։

Որպէս առիւծ կայր մահ առ իս ժանեօք զոսկերս իմ ի մանրել.
Յառաւօտ մինչեւ ցերեկ կրէի զերկունս մահու, (1)
Որպէս ծիծառն այնպէս ճրչեալ, իբր աղաւնի այնպէս մրնչեալ.
Զի նուաղեցան աչք իմ, եւ ոչ լոյս ի տուընջեան նըշմարէի:
Հայեցայ ի բարձունս յայնժամ առ տէր ամենազօր,
Եւ տէր փրկեաց զիս, տէր ըզցաւս անձին իմոյ փարատեցոյց.
Զի դիմեցի առ քեզ տէր, եւ զարթուցեր զիս իբր ի քնոյ.
Ի դրաց մահու զիս դարձուցեր, եւ սթափեցայ ես եւ կեցի:
Ահա յանդորր ըզդառնութիւն իմ դարձուցեր, զի մի կորեայց.
Փրկեցեր զանձն իմ եւ յեակոյս թիկանց ըզմեղս իմ ընկեցեր.
Զի ոչ գըժոխք թէ խոստովան առնիցին քեզ, զի ոչ թէ մահ (2)
Օրհնեսցէ զքեզ, եւ ոչ ի դժոխս խրեալք ի քեզ թէ յուսայցեն.
Այլ կենդանիք եւեթ տէր, այլ կենդանիքս ըզքեզ օրհնեն.
Որպէս եւ ես այսուհետեւ ծընայց մանկունս օրհնել ըզքեզ, (3)
Զարդարութիւնքս քո պատմել, որ ես մահու եւ կենաց տէր:
Եւ ոչ ես այսուհետեւ դադարեցայց մինչեւ ցըմահ
Ի տաճարի քում սրբութեան յօրհնութիւն նոր օրհնել ըզքեզ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՅՆ

Յոյս և յարութիւն ազգի մարդկան, Քրիստոս Աստուած, զհիւանդութիւն հոգւոյ իմոյ կենդանացո որպէս երբեմն զԼեզեկիայն:

Զչարչարանս և զմահ յանձն առեր կենդանատու ամենեցուն, ըզհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո որպէս երբեմն զԼեզեկիայն:

Առ քեզ տապալեալք, խորան և տաճար Աստուծոյ Բանին, Մարիամ մայր և կոյս բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Ա. ԿՈՂՄՆ

Աղաչեցի զքաղցումողորմ Աստուած, և լուաւ ձայնի խնդրուածոց իմոց, զի նուաղեցան աչք իմ 'ի տեսանելոյ, և յիսեն փոխարատեցոյց զցաւս անձին իմոյ:

(1) Ակնարկէ 'ի ծանրութիւն մահացու հիւանդութեանն, որում հազիւ մարթէր տեսել յայդուէ ցերեկոյ:

(2) Զի որք 'ի դժոխս այսոքան 'ի գերեզմանս կան, չկարեն օրհնել զքեզ և խոստովան լինել նմա:

(3) Երկու ինչ դառնացուցանէին և ես զմահ Եզեկիայ. մի՝ զի 'ի քառասներորդի ամի կենաց իւրոց տարաժամ մեռանէր, որ իբր պատուհաս 'ի տեառնէ հաւատարեր 'ի կէս աւուրց զաւուրս 'ի կենաց. վասն որոյ և սաղմոսերգուն աղաչէ ըզտէր. «Մի հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց». (Սղմ. ՃԱ. 25.) և կէս աւուրց էր հասակ քառասնամեայ, որպէս նա ինքն ասէ. (ԶԹ. 10.) «Թիւ աւուրց ամաց մերոց եօթանասուն ամ, ապա թէ առատեալ ես՝ ութսուն ամ»: Եւ երկրորդ՝ զի ոչ թողոյր զաւակ, որ յանէծս համարեալ էր. վասն որոյ խնդրէ և զայն 'ի տեառնէ ընդ կեանս, ծնանել որդիս. որպէս և ծնաւն յետ այնորիկ զՄանասէ:

Զ Թագաւորն Քրիստոս բարեբանեցէք, որ 'ի յանձն էառ զմահ խաչի, և խափանեաց զմահու Թագաւորութիւնն, և յինէն փարատեցոյց զցաւս անձին իմոյ:

Փութացիր յօգնութիւն սուրբ աստուածածին, և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ Բանն Աստուած, զի յահաւոր և 'ի միւսանգամ գալստեանն իւրոյ պարգևեսցէ մեզ զկեանսն յաւիտենից:

Բ. ՁԱՑՆ

Զ Նզեկիային քեզ մաղթեմ հառաչմամբ սրտի իմոյ, որ վասն իմ խոնարհեցար 'ի յերկնից, յոյս կենդանութեան և փրկութեան իմոյ տէր:

Որ 'ի խաչին բարձեր զդատակնիք մահու՝ տարածելով զբազուկս քո, արձակեա և զիս 'ի կապանաց բանտարկութիւն, յոյս կենդանութեան և փրկութեան իմոյ տէր:

Որ յամենայն աղգաց երանեցար սրբուհի և կոյս Մարիամ, աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալն Աստուած, ապրեցուցանել զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն:

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Ընմահ Թագաւոր, որ կամիս զկեանս ամենայն մարդկան՝ որ կարդան առ քեզ՝ լուր աղաչանաց մերոց, և նորոգեա Հոգւով գիտութեան:

Որ զառաժամանակեայ զցաւսն բարձեր 'ի մարմնոյն Եզեկիայ, ցուցանելով նմա զհոգևորական առողջութիւն, լուր աղաչանաց մերոց, և նորոգեա Հոգւով գիտութեան:

Անոխակալ և բարեգութ, բարեխօսութեամբ սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի, լուր աղաչանաց մերոց և նորոգեա Հոգւով գիտութեան:

Գ. ՁԱՑՆ

Հառաչեցի զանլռելի զհեծութիւն առ բարեգութն Աստուած, և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ, և եհան զկեանս իմ յապականութենէ:

Աւերեաց զմահու կարողութիւնն՝ որ խաչեցաւ վասն մեր, և յարեաւ 'ի մեռելոց որպէս յամենայնի կարող, փրկելով զկեանս իմ յապականութենէ:

Աստուած է՝ որ ծնաւ 'ի միշտ Կուսէն, 'ի փրկութիւն աղգի մարդկան, լուսաւորելով զիրեղերս 'ի գիտութիւն Աշմարտութեան, և բարեբանեմք զնորա բարեգթութիւնն:

Զանարատն օրհնեսցուք զաստուածածին՝ որ կոյս մնաց յետ ծնընդեան, և տարաւ յորովայնի զանտանելին ամենեցուն, զհամբնակիցն հօր և ամենասուրբ Հոգւոյն:

ՎԱՌ ՁԱՑՆ

Զ Նզեկիային քեզ մաղթեմ, փրկիչ, որ կենարար բանիւ քով լուծեր զերկունս մահու, փարատեա և զիմ զհիւանդութիւնս, յոյս կենդանութեան մեր կեցո զմեզ:

Որ անմահաբար քո մեռելութեամբն աւերելով զդրունս դժոխոց՝ մեռուցեր զմահ, կենդանարարեա և զիս զմեղաց զմեռեալս, յոյս կենդանութեան մեր կեցո զմեզ:

Մաքուր և ամբիծ կոյս յետ ծննդեան, որ մարմնով ծնար զարձակողն 'ի կապից մահու, բարեխօս լեր վասն անձանց մերոց՝ փրկել 'ի սպառնալեաց գեհենոյն:

Դ. ՁԱՅՆ

Յոյս կենդանութեան և փրկութեան խնոյ տեր Աստուած իմ, յիշեա զիս որպէս երբեմն զԵզեկիայն, և դարձո զՀոգի իմ 'ի դրաց դժոխոց:

Որ կամաւոր մահուամբ քո մեռուցեր զմահ Քրիստոս Աստուած, և լուսափայլ յարութեամբ քո կենդանարարեա զաշխարհս, կենդանարարեա և զիս զմեղաց զմեռեալս:

Առ քեզ ապաւինիմք, սուրբ աստուածածին, բարեխօսեա անդադար առ որդիդ քո և Աստուած մեր, փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ՎԵՐՋԻՆ ՁԱՅՆ

Ի վերանալ յինէն աւուրց խնոց, տեր, օգնեա ինձ միայն մարդասէր:

Զչարչարանս խաչի և մահու յանձն առեր, տեր, օգնեա ինձ միայն մարդասէր:

Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին և միշտ կուսի, տեր, օգնեա ինձ միայն մարդասէր:

ՆՈՐԻՆ ԵՒԱՆԳԵԼԱՅ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(ԹՂ. 10. ԽԵ. 8:)

Օրհնեցէք ըզտէր յերկինս յօրհնութիւն նոր ազգք եւ ազգինք,
Զի ի բարձունս իշխանութիւն նորա փառաւորի,
Զի է անուն իւր ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի օրհնեալ.
Ոյք ինչանեն նաւաք ի ծով կըղզիք հանդերձ բնակչաք իւրեանց:
Ուրախ լեցի անապատան եւ ամենայն բնակիչք նորա. (1)
Ուրախ լեցին բնակիչք Վէմին, բանակ եւ բակքըն Կեդարու,
Ի գրլխոց լերանց ըզփառս Բարձրելոյն հրաշակ հարցեն.
Եւ զքաջութիւն նորա կըզգիք հեռաստանեայք քարոզեսցեն:

(1) Զամենայն ծագս երկրի հրաւիրէ մարգարէս 'ի փառաբանութիւն Աստուծոյ վասն ողորմութեան՝ որ 'ի ձեռն Քրիստոսի ընդ ամենայն աշխարհ սփռելոց եր. վասն որոյ յետ հրաւիրելոյ զծով և զկղզիս՝ որ յարևմտից կան հրեաստանի, հրաւիրէ և զանապատն Պաղեստինու և Ադարբիոյ՝ որ կայ յարևելից, և Վէմ մայրաքաղաք է նորին, և Կեդար՝ մի 'ի գաւառաց:

Տէր զօրութեանց դիմեալ դայ զարթուցանել ըզպատերազմ, (1)
Յարուցանել ընդնախանձ, փող հարկանել աւադափող,
Եւ ի վերայ թշնամեաց գոչել մեծաւ զօրութեամբ:
Ուրախ լեցին վերուստ երկինք, ամպք ցօղեսցին զարդարութիւն. (2)
Բղխեսցէ ի ծոցոյ իւրմէ երկիր զողորմութիւն,
Զարդարութիւն յայնժամ երկիր առհասարակ բղխեսցէ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՑՆ

Զփառաւորեալն յամենայն արարածոց, և 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի երկրպագեալն, զմարմնացեալ Բանն 'ի Կուսէն, ձայնիւ երգով օրհնեսցուք:

Որ դիմեալ դայ յԵգիպտոս բարձրացեալ փողով, յարուցեալ 'ի պատերազմ՝ ընկզմեաց զանեւրեայսն Ամաղէկ. զկնքեալ Բանն 'ի գժոխս ձայնիւ երգով օրհնեսցուք:

Ծագումն 'ի Հօրէ փառակից սուրբ Հոգւոյն, կենդանութիւն աղգի մարդկան, որ յարեաւն այսօր 'ի մեռելոց՝ զհամբարձեալ Բանն 'ի յերկինս ձայնիւ երգով օրհնեսցուք:

Ա. ԿՈՂՄՆ

Ատուած երևեցաւ մարմնով՝ ապրեցուցանել զաղգս մարդկան կռոցն 'ի պաշտելութենէ, նմա միայնոյ երգեսցուք:

Քրիստոս բևեռեցաւ 'ի խաչին, և եղոյծ զգատապարտութիւն Ադամայ նախաստեղծին, նմա միայնոյ երգեսցուք:

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, և յարոյց ընդ իւր զԱդամ զանկեալն 'ի պատրանաց, նմա միայնոյ երգեսցուք:

Բ. ՁԱՑՆ

Զէկեալն 'ի փրկութիւն մեզ զԲանն Ատուած խորհրդով անօրէնութեամբ՝ նոր երգով օրհնեսցուք զանուն նորա, զի 'ի բարձունս է փառաւորեալ յանմարմնոց:

Զխաչեցեալն պատմեսցուք զքաջութիւն, որ գոչմամբ ձայնի զպատերազմն չարին վանեաց, և մահուամբ զմահացեալն կենդանարարեաց, զկնքեալն 'ի գժոխս վերածեաց զհոգիս:

Ուրախացան զօրք երկնից 'ի վերուստ, քանզի ցօղն անապական 'ի քէն հեղեալ, միշտ կոյս և մայր Բանին անտեսութեան լուսածին ամպ, ծագեալ 'ի մեզ զարդարութեան արեգակն:

(1) Ակնարկէ 'ի պատերազմ և 'ի յաղթանակ Քրիստոսի ընդդէմ սատանայի:

(2) Զխորհուրդ մարդեղութեան Բանին ցուցանէ, որ 'ի Հոգւոյն սրբոյ յղացեալ օրպէս ցօղ յամպոց, և ծնաւ 'ի Կուսէն բղխեալ յերկրէ Նոցն Ատուծոյ արդարութիւնն: Որպէս և սաղմոսերգուն ասէ. (ՁԴ. 12.) «Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ»: Եւ դարձեալ (ԷԱ. 6.) «Իջցէ.. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր. ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն»:

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Զ Աստուածն ամենեցուն օրհնեն սրբասաց բանական կենդանիք, յաղթական երգով և մեք օրհնեսցուք զանուն նորա:

Որ 'ի վերայ խաչին դատապարտեաց զբանսարկուին բռնութիւնն, յաղթական երգով և մեք օրհնեսցուք զանուն նորա:

Անարատ տաճար անվայրապատակ Բանին Աստուծոյ, Մարիամ սուրբ կոյս, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան:

Գ. ՁԱՑՆ

Յօրհնութիւն նոր օրհնեսցուք զտէր, որ 'ի վերայ քերովբէիցն հանդչի, և 'ի զօրաց երկնաւորաց փառաբանի սրբասաց ձայնիւ:

Որ կամաւոր խաչելութեամբ իւրով աւերեաց զզօրութիւն մահու, և երեքօրեայ յարութեամբ իւրով պարգևեաց մեզ կենդանութիւն:

Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ, և 'ի միւսանգամ գալստեան իւրոյ նորոգեսցէ 'ի փառս:

ՎԱՌ ՁԱՑՆ

Զփառաւորեալն 'ի հրեշտակաց զամենասուրբ Երրորդութիւնն օրհնեցէք 'ի սրբութեան նորա գասք հողեղինաց յօրհնութիւն 'ի նոր:

Զ յաղթողն 'ի մարս պատերազմի դիմեալ կամաւ 'ի մահ խաչին գովեցէք, որ էառ աւար, բաշխեաց որդւոց մարդկան բարձրացեալ փողով:

Ուրախութիւն երկնի և երկրի, ամէն թեթև յօդեալ 'ի մեզ զարդարութիւն, բարեբանեմք զլուսեալն 'ի քէն մարմնով յարմատոյն Յեսսեայ գաւազան ծաղկեալ:

Դ. ՁԱՑՆ

Զանձառդ քո Քրիստոս փառաւորեմք զմարդանալդ, 'ի գլխոց լերանց հրատարակեմք զքո քաջութիւնդ. քանզի հարեր զպատերազմ եկեալդ 'ի փրկութիւն մեզ:

Զ յաղթողդ քո, Քրիստոս, գովեմք զզօրութիւնդ. քանզի վանեցեր զընդդիմամարտ թշնամին, և դարձուցեր զդերութիւն, եկեալդ 'ի փրկութիւն մեզ:

Բղխեսցէ երկիր զողորմութիւն, և նորացուսցէ զօրհնութիւն. քանզի Աստուած ծնանեամք 'ի միշտ Կուսէն 'ի փրկութիւն մեզ յայտնեցաւ, աւերեաց զդժոխս:

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Ամենասուրբ Երրորդութեանդ երկրպագեն զօրք երկնայինք, և ըստեղծուածք անարատ ձեռացդ, փառաւորելով զտերութիւնդ քո հանապազ:

Ամենազօր խաչի քո տէր երկրպագեսցուք, որով բարձեր զդատակնիք մահու քո արարածոց, փառաւորելով զտերութիւնդ քո հանապազ:

Ամենօրհնեալ աստուածամայր Մարիամ, քերովբէական աթոռ արարչին մերոյ անօրհնութեան, զոր երանեն ամենայն ազգք:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

(Բ. 2:)

Ի նեղութեան իմում առ տէր կարդացի,
Եւ տէր լուաւ ձայնի իմում յորովայնէ դժոխոց,
Եւ տէր զաղօթս իմ ընկալաւ։
Ընկեցեր զիս ի սիրտ ծովու, եւ ջուրք զիս շուրջ պաշարեցին.
Ամենայն ըղձսանք քո եւ ալիք անցին ընդ իս,
Եւ ասացի՝ թէ մերժեցայ յերեսաց քոց։
Արդ իցէ՞ թէ յաւելից ըղձաձար սուրբ քո տեսանել.
Զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յոգիս,
Եւ անդունդք անհընարինք պատեցին զիս.
Եմուտ գրլուխս իմ ընդ փայտարքս լերանց, (1)
Իջի յերկիր՝ զոր նիգք իւր ազիք յաւիտենից.
Եկցեն անապական աստի քեւ կեանք իմ ի լոյս։ (2)
Աւ քեզ Աստուած իմ ի նեռազել անձին իմոյ կարդացի.
Յիշեցի զքեզ, եւ ի տաճար սուրբ քո աղօթք իմ եկեսցեն.
Զի որք ըզսուտ եւ զնանրութիւն պաշտէին, (3)
Ի գրթութեանց քոց մերժեցան.
Այլ ես ի ձայն օրհներգութեան քեզ պատարագս մատուցից,
Քեզ խոստովան եղէց, եւ զուխտ իմ հատուցից ի փրկութեան։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ՁԱՑՆ

Որ լուաւ Աստուած գոչմանն Յոնանու յորովայնէ կիսին, ապրեցս և զիս յաներևոյթ թշնամւոյն՝ փրկիչ գոլով, որ նստիս 'ի քրովբէական աթոռս։

Օրհնութիւնս այս Յոնանու նման է ըստ մասանց ինչ ԿԲ և ԽԱ Սաղմոսաց, ուր սաղմոսերգուն ասէ. «Կեցս զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղմեալ ես 'ի խորս անդնդոց... և ջրանք ընկղմեցին զիս... Ամենայն զբօսանք քո և ալիք անցին 'ի վերայ իմ». և այլն։ Սաղմոսերգուն այլաբանօրէն խօսի զանձնէ, իսկ Յոնանն ըստ իրին. այլ երկոքին ևս խորհրդաւոր զՔրիստոսէ։

(1) Զնշանագաց ծովու ասի՝ թէ սովոր էին բունել 'ի ստորոտս անդնդախորս լերանց 'ի ծովու. և Յոնանն 'ի փոր կիսին իջեալ անդր, համարի զանձն 'ի բանտ անել ամբափակեալ, և 'ի տեառնէ ակնթ յուսալ զազատութիւն իւր։

(2) Զայս 'ի դիմաց Քրիստոսի ասէ, և է հանգոյն բանի սաղմոսերգուին ԺԵ. «Ոչ տայցես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։

(3) Սուտ և նանրութիւն կոչէ զդիս. և գիտելի է, զի և 'ի փոր կիսին մարդաբէս թողեալ զաղէտս և զարհաւիրս իւր՝ խորհի 'ի կուրութիւն մարդկան, որոց թողեալ զԱստուած՝ զդիս և զունայնութիւն պաշտեն։

Որ ընարեցեր քեզ վերստին քարոզող նենուէացւոց զյափշտակեալն 'ի կիտէն երեքօրեայ խմմամբ 'ի դժոխս, և զնա զբաղմամբեալ արձակեա 'ի կապանաց մահու 'ի կեանսդ յաւիտենից:

Եկեալդ 'ի փրկութիւն ստեղծուածոց քոց պատկերակից եղեր հողեղէն մարդոյն, զմեզս սպաներ, և զմահու դերեալն ազատեցեր 'ի մեղաց:

Ա. ԿՈՂՄՆ

Ատուած, զքեզ փառաւորեմք, որ 'ի յերկնից խոնարհեցար, ծառայի առեր զկերպարան, և զոմիեզերս ազատեցեր 'ի մեղաց:

Զմարդարէն ապրեցուցեր, ասէր, 'ի կիտէն որպէս մարդասէր, որ նշանակէր զքո 'ի մեռելոց զերեքօրեայ յարութիւնդ:

Զհայր փառաւորեացուք, և Որդւոյ երկրպագեսցուք, և սուրբ Հոգին հաւատացեալքս ամենեքեան օրհնեսցուք:

Բ. ՁԱՑՆ

Ի նեղութեան խոտ ապաղակեցի առ տուօղն կենդանութեան, և լուաւ ձայնի ազօթից իմոց, և եհան զկեանս իմ յապականութենէ:

Յորժամ ընկալայ ես 'ի խորս անդնդոց, ընկղմեցայ 'ի Ժանիս վիշապին, և փրկեաց զիս փրկիչն աշխարհի, և եհան զկեանս իմ յապականութենէ:

Միայն օրհնեալ սրբուհիդ 'ի կանայս, բնակարան և առագաստ ապարշին, բարեխօսեա առ տէր վասն անձանց մերոց, զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն:

ԱՌԱՋ ԿՈՂՄՆ

Անապականութեան աղբիւր և 'ի մահու կեանք զքեզ ծանեան հրանիւթիցն սեռքն և բանական կենդանիք, որ զՅոլնան 'ի կիտէն կորզեալ արտաքսեցեր, գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան ներմարդացեալ Բանիդ Ատուծոյ:

Ցանսաղարթաբեր արմատ փայտին մակադրեալ զքեզ անհպելի հպմամբ և սեւեռեալ բեւեռաբ. և 'ի հրացայտ կողն քո 'ի ձեռն զենուտիպն հոսանս վտակաց գործեցեր. գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան ներմարդացեալ Բանիդ Ատուծոյ:

Խմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տաւիցն մովսիական օրինաց, որ զԱտուածն ամենեցուն խկատէս մարմնով 'ի գիրկս քո բարձեր, Մարիամ. ներբողական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան, ամենօրհնեալդ 'ի կանայս:

Գ. ՁԱՑՆ

Զհրաշալի խորհուրդ անօրէնութեան քո, տէր, ցուցանելով մարգարէին, 'ի փոր կիտին լինել զերիս տիւս և զերիս գիշերս՝ պահելով 'ի խաղաղութեան:

Համագոյից հաստիչ գոլով՝ խոնարհեցար յերկնից, և խաչեցար կամաւ Հօր վասն մեր, թաղելով 'ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս՝ պահելով 'ի խաղաղութեան:

Ա՛յլ մեք ձայնիւ վերնոց փառաբերեցուք զքեզ, Քրիստոս, որ հաստատեցար Հօր և սուրբ Հոգւոյն, զի միաբանեսցես զեկեղեցի քո սուրբ պահելով 'ի խաղաղութեան :

ԿԱՌ ՁԱՅՆ

Ընդ Յովհաննու անձն իմ ծփեալ յալիս մեղաց ծովու՝ աղաղակեմ 'ի նեղութեան իմում առ փրկողդ և յոյս, լուր ձայնի իմում:

Որ փրկեցեր զմարդարէն յորովայնէ կիսին, ապրեցո և զբնակեալս 'ի Ժանեաց չար վիշապին կենարար խաչիւ :

Բարեխօսեա առ միածինն յարուցեալ 'ի մեռելոց, մայր Աստուծոյ, փրկել զանձինս մեր 'ի յաւիտենից 'ի հրոյն, աղաչեմք զքեզ:

Դ. ՁԱՅՆ

Որ լուար, Աստուած, մարգարէին ձայնի գոչմանն, և ես նովին ձայնիւ գոչեմ, և զիս մի անտես առներ, այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քո :

Որ քոյին հրամանաւդ զմահու լուծեր զիշխանութիւն, և անիծիցն եղեր քակտումն, և զիս մի անտես առներ, այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քո :

Որ ելեր 'ի յերկինից և մարմնացար 'ի սուրբ Կուսէն անճառելի քոյին ծննդեամբդ, և զիս մի անտես առներ, այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քո :

ՎԵՐՋԻՆ ՁԱՅՆ

Մարգարէն 'ի փորոյ կիսին աղաղակեր և ասէր, տէր նայեաց յիս, և մի տար զիս հղօրիս այս :

Ձայն բարձի 'ի խորոց անդընդոց առ Աստուած ողորմած, և ձայն աղաղակի իմոյ հասցէ 'ի լսելիս քո տէր :

Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին և միշտ Կուսի աղաչեմ, տէր փրկեա զիս 'ի յորոգայթէ աներևոյթ թշնամւոյն :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՑ

(Գ. 1:)

Լուայ ըղձուր քո տէր, լուայ եւ երկեայ.
Հայեցայ տէր ի գործս քո, եւ զարհուրեալ դողացայ.
Ի մէջ երկուց դու կենդանեաց յայտնեսցես. (1)

Զաղաւութիւն Հրէից 'ի գերութենէն Բաբելոնի մարգարէք առ հասարակ համարին օրինակ փրկութեան աղգի մարդկան 'ի ձեռն Քրիստոսի : Վասն որոյ մարգարէս 'ի խօսելն զայնմանէ՝ յաւելու բաղում ինչ զՔրիստոսէ խորհրդաբանել, զորս ոչ է մարթ իմանալ ըստ գրոյն՝ առանց բանաբարելոյ զնմաստս նոցին :

(1) Զերկուս կենդանիսն կէսք իմանան ըստ գրոյն գիրարեհ և զԿիւրոս, առ որոյք ազատեաց տէր զիսրայելացիս 'ի գերութենէ. այլք իմանան զերկոսին քրիստոնեայ, զորս ոչ է մարթ իմանալ ըստ գրոյն՝ առանց բանաբարելոյ զնմաստս նոցին :

Ի մերձենալ ամաց ի գալ Ժամանակին երեւեցիս.
Ի տառապել անձին խոյ
Ի բարկութեան զողորմութիւն քո յիշեցիս։
Ահա Աստուած ի Թեմանայ եկեսցէ, (1)
Ահա սուրբն ի հովանուտ անտառախիտ ի լեռնէ։
Ծածկեցին փառք զնորա զերկինս, (2)
Եւ օրհնութեամբ նորա լցան տիեզերք։
Ճառագայթք որպէս լուսոյ հատան ցոլեալ ի նմանէ,
Եւ ի ձեռին նորա եղջիւրք, անդ զօրութիւն իւր հաստատեալ։ (3)
Առաջի նորա հարուածք երթիցեն,
Եւ մեծամեծք ըզհետ նորա ի թըռչնոց։ (4)
Եկաց նա, եւ շարժեցաւ զդրդեալ երկիր.
Յակնարկել իւրում զահի հարան ազգինք.
Լերինք հալեցան, վաստեցան բլուրք յաւերժականք. (5)
Տիեզերք առհասարակ յոտին իւրում սասանեցան։
Տեսի զԿուշաց խռովեալ բանակ, (6)
Եւ զդողանի զվորանս հարեալ Մադիամու։

բովքէն, յորոց միջի կայր սրբութիւնն։ Այլք ի հինգերորդ դարէ և այսր՝ խորհրդական իմաստիւք յարեն զայս բան յերկուս կենդանիսն, որ աւանդին գրեալ ի մուրն՝ ուր ծնաւ Քրիստոս, յարմարելով ի բան Եսայեայ. (Ա. 3.) « Ծանեաւ եզն զտատցիչ իւր, և էշ զմսուր տեառն իւրոյ »։ Այլ չիք որ ի Հարց և ի մեկնեցս, որ ի բանս յայս ոչ իմանացէք զփրկիչն մեր ի մէջ երկուց աւազակաց խաչեալ։

(1) Ակնարկէ ի բան Մովսէսի. (Բ Օր. ԼԳ. 2.) « Տէր ի Սինայէ եկեսցէ, և երեւեցաւ մեզ ի Սէիրայ, և փութացաւ ի լեռնէն Փառանու »։ Թեման թարգմանի հարաւ. Սէիր և Փառան լերինք ի հարաւոյ կան հրէաստանի, ուր էր և Սինա լեռն՝ յորում տուան օրէնք, օրինակ Սիոնի՝ յորում նորոյ օրինացս եղև ըսկիզբն։ Ապրն Նոյն տէր, որ ի Սինա երեւեցաւ, յայտնեսցի դարձեալ՝ ասէ մարգարէս, և ծածկեսցին փառք նորա զերկինս և զերկիր։

(2) Արժան է բաղդատել զբանս ընդ բանից աւետարանին՝ զոր ի ծնանելն Քրիստոսի ասէ Ղուկաս, թէ փառք տեառն ծագեցին առ հովիւս, և թէ բազմութիւն զօրաց երկնաւորաց օրհնէին զԱստուած և ասէին՝ փառք ի բարձունս Աստուծոյ, և այլն։

(3) Եղջիւրք ի սուրբ գիրս նշանակէ սովորաբար զօրութիւն և փառք. արդ Քրիստոս խաչիւն իւրով՝ յորում բեւեռեցան ձեռք իւր՝ յաղթեաց դժոխոց, և արար մեզ փրկութիւն։

(4) Նկարագրէ զասատկութիւն աստուածասաստ հարուածոց ընդդէմ թշնամեաց. զի զդիակսյտ անկելոց ցուցանէն թռչունք մեծամեծք գիշատանաք։

(5) Այս ամենայն զկործանումն հպարտութեան ի ձեռն Քրիստոսի, և զբարձումն դժուարութեանց նշանակէն, որ խափանեին զփրկութիւն մեր։ Վասն որոյ և աւետարանիչն ի սոյն միտս ածէ զբան Եսայեայ. (Ղկ. Գ. 5.) « Ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին, և եղիցին դժուարինքն ի դիւրինս »։

(6) Քուշք կամ քուշայիք Եթիոպացիք են, և Մադիամ՝ Եթիոպիա. արդ ի դէմն սոցա զկռապարիչսն առհասարակ ասէ խռովեալ յերեսաց Քրիստոսի։

Մինթէ գեռոց բարկասցես տէր, եւ կամ ընդ գէտս սատս քոյին, (1)
Կամ տասպատակք քո ի ծովու. զի դու ի կառքս քո եկեր,
Հեծելութիւնքդ քո եղեւ մեզ փրկութիւն:
Զարթեաւ աղեղն քո, եւ զնետս կապարձիցդ արբեցուցեր.
Ըզգետս ցրուեցեր, շարժեալ զերկիր դողացուցեր
Ի հեղեղաց՝ որ աւերած նրմա սպառնան:
Եղուն անդունդք ձայն ահեղ, արգելաւ լոյս արեգական.
Դարձաւ լուսին ի խաւար, զի բարկացար դու երկրի.
Ի փայլուն փայլատական նետք քո գնացին, (2)
Եւ առաթուր երիվարաց քոց կոխեցեր ըզթշնամիս:
Երեւեցար ի փրկութիւն ժողովրդեանդ
Առ ի փրկել զընտրեալս քո.
Եւ ըզգլխով անօրինաց արկեր կորուստ,
Մինչեւ յանդունդս ծովու ընկղմեցան խորասուզեալ.
Խորտակեցեր՝ ապշութեամբ հարեալ ըզգլուխ բրոնաւորաց.
Սատանեցան ոյք յուսացեալ էին յիւրեանց յանդգնութիւն,
Որպէս այն որ ի գաղանիս կլանէ զաղքատն եւ ըզտրնանկ:
Աւաքեցեր դու զերիվարս քո ընդ ծով,
Եւ յաղթաջուր ալիք ծովուն խռովեցան:
Կացի ես, գեղան աղիք իմ ի ձայնէ շրթանց իմոց. (3)
Եմուտ յոսկերս իմ սարսափիւն, և ընդտաւ անձն իմ արհաւրոք:
Զայդ դու յաւուր նեղութեան պահեսցես, տէր, ածել ազգի,
Որ ընդդէմ ժողովրդեան քո յարիցէ ի պատերազմ.
Մի ըզպարսաւղ իւր թրզենի եւ մի այգի տացեն նրմա,
Սրաեսցէ բեր ձիթենւոյ, մի դաշտորայք բերցեն հաց.
Պակասեսցէ հօտից ճարակ, մի առ մսուր կացցեն եղինք:
Այլ ես ի տէր յուսացայց, ուրախ եղէց ի փրկիչ իմ.
Զի տէր տէր ես ինձ զօրութիւն, եւ կացոյց զոտս իմ հաստատուն,
Ի վերայ պարանոցի թշնամւոյն զոտս իմ կացոյց,
Եւ հանդոյց զիս երադ երադ:

(1) Մի թէ որպէս երբեմն սատեցեր Յորդանանս՝ և յետս դարձաւ, ծովուն՝ և պատառեցար, և սրտմտեալ թօթափեցեր զեգիպտացիսն ի ծով, նովին սրտմտութեամբ դայցես և ի փրկել զազգ մարդկան. այլ այս քոյին հեծելութիւն ի փրկութիւն ըստրեալ է. կառք քո՝ խաչն կենդանաբար, երիվարք քո և տասպատակք՝ մարգարէք և առաքեալք քարոզք քոյին, որ ածին ի ծագս տիեզերաց զշնորհս փրկութեան քո:

(2) Զահեղ զօրութիւնն Աստուծոյ ընդդէմ թշնամեաց, և խորհրդաբար ընդդէմ դժոխոց, նկարագրէ:

(3) Ի տեսիլ ահեղից իրացս պակեայ խռովեցայ կարկեալ կացի. և այսպէս դու՝ յաղթանակեալ ընդդէմ դժոխոց, տացես և քոյոցդ զօրութիւն նոյնպէս յաղթանակելոյ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՅԻՆԱՆՑ

Ա. ԶՄՏՑՆ

Հիացան զօրք երկնից ընդ քո յանձն առնուլ զծառայի զկերպ, և մարդարէն զարհուրեալ ասէր. Լուայ զլուր քո և երկեայ, նայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ:

Քանզի դու՝ որ յառաջ քան զյաւիտեանս որդի՝ Հօր և Հոգւոյն փառակից, եկեալ՝ 'ի մէջ երկուց կենդանեացն երևեալ, բարձրացար 'ի խաչին, առնելով զհեծելութիւն փրկութեան. քանզի լուծեալ եղեն երկունք մահու:

Երևեցար 'ի փրկութիւն ստեղծուածոց քոց՝ ոչ մեկնելով 'ի Հօրէ, յանձն առեր կամաւ զնաչն և զթաղումն, և յարուցեալ 'ի մեռելոց իշխանութեամբ, քանզի լուծեալ եղեն երկունք մահու:

Ատուածածին անհարանցեալ սրբուհի, զքեզ աղաչեմք անդադար ձայնիւ, որ զէակ Բանն Հօր 'ի քեզ կրեցեր և ծնար անճառապէս, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Ա. ԿՈՂՄՆ

Որ անքննիդ ես յԻՒԹեան ընդ Հօր, անբաժանելի Բանդ Ատուած, խոնարհեցար 'ի լուսոյ օրինաց և մարդարէից, և 'ի մէջ երկուց կենդանեացն բարձրացեալ եղեր 'ի վերայ խաչին, զոր յառաջն երգեաց մարդարէն Ամբակում:

Որ 'ի կաս քերովբէականս վերանստեալ հանդէպէր իսկակից Հօր և սուրբ Հոգւոյն, հաճեցար երանել 'ի կաս հողեղէնս, և հեծելութեամբդ քո փրկեցեր զտիեզերս, վերականգնելով զանկումն Ադամայ:

Որ առաքեցեր զերիվարս քո սուրբ զմարդարէսն, աւետարանել զկենսաբեր տնօրէնութիւնդ քո 'ի սրբոյ Կուսէն, և երևեցար մարդ ճշմարտապէս:

Բ. ԶՄՏՑՆ

Լուայ զսքանչելի տնօրէնութեան քո զլուր, քանզի անճառ Բանդ Ատուած մարմնացար 'ի Կուսէն, վերածեր զբեկումն Ադամայ, և զարմացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ:

Մարգարէին ձայնեալ զքո քաջութիւնդ, ասէ. Ելեր դու 'ի կաս փրկութեան, և խաչեան ջաղեսեալ զգլուխ վիշապին, սուրբ յարութեամբդ զմեզ կենդանարարեցեր:

Ուրախացիր սրբուհի և միշտ կոյս, քանզի որ 'ի քէն մարմնացաւ՝ զգժոխս աւերեաց, սուրբ և անհամեմատդ 'ի կանայս, բարեխօսեա առ տէր վասն անձանց մերոց:

ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

Անեղին եղեալ մարդ, տեսեալ զարմանայը մարգարէն. և հեղուսեալ բեռոք զմարմին 'ի խաչին, ներգործեալ 'ի մէջ երկուց կենդանեաց:

Պատմեցէն երկինք զվայելչութիւն փառաց Քրիստոսի, և ընկալեալ լուսաձեմ տարերց զգոյնս արեան անեղին, և օրհնութեամբ խաչելոյն լցան տիեզերք։

Ձիաւորեալ ոչ միայն 'ի վերայ բուսաբեր արմատոյն, այլ քրովբէական կառօքն ստորիկեալ 'ի դժոխս, կենագործեաց հզօրեղապէս զերամն արդարոց։

Աղաղակէր աստուածային բարբառովն տէր Յիսուս 'ի խաչին և ընդդէմ աստեղաց կնքէր հրացեալ աստուածային սուրբ ձեռօքն. և բարկութեամբ զարթուցեալ 'ի վերայ խաւարասէր իշխանին։

Տիրուհի անարատ մայր տեսան և կոյս Մարիամ, քրովբէական աթոռ զքեզ տեսաք 'ի յերկրի, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան։

Գ. ՁԱՑՆ

Տէր, զլուր քո լուայ ես, և զարհուրեալ դողացայ յոյժ. նայեցայ 'ի գործս քո, և փառաւորեցից զքեզ Քրիստոս որպէս մարդասէր։

Զի աղբիւրն կենաց Քրիստոս անապական մարմնացաւ 'ի քէն Կոյս, զմեզս մեր բոցակիզեալ շնչոյց. վասն որոյ զքեզ անդադար բարեբանեսցուք։

Զի 'ի քէն ցնծութիւն ծնաւ տիեզերաց նախայաւիտեան Բանն, փառակից Հօր և սուրբ Հոգւոյն, զնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց։

ՎԱՌ ՁԱՑՆ

Որ յանքնին ծոցոյ Հօր խոնարհեալ որդի, երևեցար 'ի մէջ երկուց կենդանեացն. զոր նախագուշակ տեսլեամբ ծանոյց մարգարէն։

Որ յաթոռս հրակերպեանս բազմեիր ընդ Հօր, բարձրացար կամաւ 'ի կառս խաչին, և հեծելութեամբդ քով ազատեցեր զդերեալսն։

Որ կուսական ծննդեամբ 'ի փրկութիւն յայտնեալ, և առաքեցեր զերիվարս քո քարոզս՝ աւետարանել զկենսաբեր յարութիւնդ։

Դ. ՁԱՑՆ

Տէր, զլուր քո լուայ, վերօրհնեալդ 'ի բազմաչեայս. և տեսաք զզքեզ մարմնով 'ի վերայ խաչին 'ի մէջ երկուց կենդանեաց, զոր երդեաց Ամբակումն նախմանց սուրբ Հոգւովն։

Հեծելութիւնդ քո, Քրիստոս, փրկութիւն եղև ազանց. յերանելն քո 'ի կառս զուարճացան արարածք. և օրհնութեամբ նոր երգով լցան տիեզերք։

Երևեցար 'ի փրկութիւն նախահօրն Ադամայ, և առաքեցեր զերիվարս քո քարոզս աշխարհի աւետաւոր յարութեանն, որք ընդհանուր պատմեին զմիւսանգամ քո գալուստդ։

ՎԵՐՋԻՆ ՁԱՑՆ

Լուայ զքանչելի տնօրէնութեան քո զլուր, քանզի յերկնից խոնարհեալ մարմնացար 'ի սուրբ Կուսէն, և զարհուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ։

Զիշխանաբար զյարութիւնդ գուշակեաց մեզ մարգարէն, ասէ. Եկեր դու 'ի կառս քո, հեծելութիւնդ քո Փրկութիւն եղև յերանելդ քո։

Երևեցար 'ի փրկել զարարածս 'ի մահուանէ. և զժողովք հիացեալ ասասնեցան 'ի յահէ ամենազօր փառաց քոց։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԵԲՈՎՐԱՑ

(Դատ. Ե. 1։)

Ի սկզբանէ զօրավարացն Իսրայելի յաղթականաց
Զինուորեալքդ ի պատերազմին տեառն ըզտէր օրհնեցէք.
Ես տեառն երգեցից, երգս Աստուծոյ Իսրայելի։
Տէր յերանելդ քո լուսեղէն սեամբ ի լերանցն Սէիրայ,
Եւ ի ջուրել փառաց քոց ընդ անդաստանս իդումական,
Երկիր շարժեցաւ, երկինք յոտին քում խռովեցան.
Ամպք ցօղեցին ջուր յերեսաց տեառն Ելովայ Սինայի, (1)
Յերեսաց տեառն Իսրայելի լերինք սարսեալ դողերդեցան։
Յաւուրց Սամեգարայ մինչեւ ցաւուրսն Յայելի
Կուրացան արահեալք, եղեն անկոխ յերթևեկաց. (2)
Ոչ եւս իշխանք անցին ընդ այն, դնացին ընդ հետս կամակորս.
Պակասեցին փարաղունք բնակեալք ի մէջ Իսրայելի,
Պակասեցին մինչեւ յարեաւ Դեբովրա, մայր Իսրայելի. (3)
Յոր վայր ըզհետ եղեն մեռուեաց դից, աստուածոց օտարաուոց,
Փոխանակեալ ըզհայ սուրբ ընդ դարեղէն Ելկամակի,
Զէր ոչ ուրուք ի քառից բիւրուց արանց Իսրայելի

Զօրհնութիւնս զայս, որ ըստ քերթողական մասին գեղեցկագոյն քան զայլսն է, յօրինեաց Դեբովրա մարգարէուհի յետ յաղթութեանն ընդդէմ Սիսարայ զօրավարի Յաբինայ արքային քանանացւոց. որում մատնեաց տէր զիսրայելացիս 'ի պատուհաս կռապաշտութեան նոցա, և 'ի կարդալ նոցա առ տէր՝ փրկեաց զնոսա 'ի ձեռն Դեբովրայ և Բարակայ և Յայելի։

(1) Նկարագրէ որպիսի փառօք երևէր Աստուած ժողովրդեան իւրում ընդ լերինս Սէիրայ, ընդ երկիր եդովմայեցւոց, և 'ի լեառն Սինա 'ի տալ նոցա զօրէնս. զի երկինք և երկիր, ասէ, և ամպք և լերինք ցուցին՝ որպէս մարթէրն նոցա՝ զըստպատ մեծարանաց առ արարիչն իւրեանց։ Ըստ այմ և սաղմոսերգուն ասէ. (կԶ. 8.) «Աստուած ընդ երանելի քեզ առաջի ժողովրդեան քո, ընդ անցանել քեզ ընդ անապատս, երկիր շարժեցաւ. քանզի և երկինք ցօղեցին յերեսաց Աստուծոյ 'ի Սինէ»։

(2) Յօրէ խոսորելոյ Իսրայելացւոց 'ի կռապաշտութիւն՝ անմարդացան ճանապարհք առ ահի քանանացւոց, պակասեցին նոցա պատերազմողք։

(3) Մայր Իսրայելի կոչէր Դեբովրա, ոչ միայն վասն մայրենի գթոյն՝ զոր առ ազգն ունէր, այլ և զի մարգարէութեամբն ունէր ընդարձակ առ ժողովրդեան, և առ նա ամենեքեան դիմէին 'ի դատաստան։

Շրկահեալ նեռ ի կապարձից, շղեալ սուսեր ի պատենէ։
Ցընծասցէ սիրտ իմ ի վերայ զօրավարացն Իսրայելի.
Զօրաւորք ժողովրդեանն տեառն ըղձեր օրհնեցէք։
Ի լուսափայլ հեծեալքդ ի նուռ երիվարաց, խօսեցարուք.
Տուք ձայն երթեալքդ ընդ արահետս եւ որ բազմեալքդ էք ի յա-
Ո՛ւր թշնամեաց բեւեան կառք, ուր ընկալան զօրք նոցա յալիս։ [տեան, (1)
Անդ պատմեսցի վրէժխնդրութիւն տեառն ի վերայ անպարշտաց,
Անդանօր ողորմութիւն տեառն ընդ որեարն Իսրայելի։
Յայնժամ էջ անդր ի քաղաքքս ժողովուրդ տեառն յաղթական,
Եւ ի դրունս տապարանից աթոռք արկան, եդաւ յատեան։ (2)
Զարթիր զարթիր Դեբովրա, ըղբիւրաւորս ընդ քեզ զարթո.
Զարթիր հանդերձ ժողովրդեամբ քով, ամ. քընար, խօսեաց երգով.
Արի Բարակ զօրացիր, արի զաւակդ Աբենեմեան,
Հար պատերազմ, ամ. աւար, ի ձեռակապս արկ ըզգերեն։
Յայնժամ յաղթեաց զօրացաւ, տէր ընդ Նիմա եւ պատերազմ.
Հրեզօրագոյնք ընկըրկեցան, տէր ընկըրկեաց ինձ ընդառաջ.
Յայնժամ զարթեաւ Եփրեմ երկոյժ վրէժ ի հովիտս անդ ի նոցունց. (3)
Յայնժամ փրկեալ ըզքեզ ի սպառ Բենիամին, ո՛ Ամաղէկ.
Իջին յինէն ի Մաքիր բարեառաղէնք խուզարկուք,
Յերկեաց որեարք Զաբուղոն, յերկեաց իշխանս անդր ի խրախոյս.
Զօրավարքք Իսաքարու գումարեցան ընդ Դեբովրայ, (4)
Դիմեցին ընդ Բարակայ իբր ի վախեց գահավիժեալ։
Պառակտեցաւ Ռուբէն, ըստ սիրտք ի բաժինքս Ռուբենի. (5)
Ընդէր նստիս ի Մոսփաթիմ, ո՛հ, ըղշաչիւն լսել զնուագ.
Մեծամտեալք ի քեզ տագնապք գնայցեն ընդ սիրտս հետազօրք։
Անդ յայնկոյս Յորդանանու բնակէ եւ Գադ անկարեկիր.
Եւ դու ընդէր, Դան, ընդ ծով յածիս նաւուք սահեալ նրժգեհ.

(1) Յառաջագոյն անմարդացեալ ասաց զՃանապարհս, և զիշխանս պակասեալ. արդ աւետէ զյաղթութիւն և զդարձ ժողովրդեանն 'ի քաղաքս, դատաւորաց 'ի յատեան, և ամենայնի յառաջին կարգն։

(2) Զի առ դուրս 'ի զաւթի բազմին դատաւորք յատեան։

(3) Ի պատմութեան պատերազմս ոչ յիշատակին մանրապատում որ ինչ յաւելու ասա Դեբովրա. զի 'ի յարձակել Բարակայ 'ի վերայ Սիսարայ զօրքք Զաբուղոնի և Նեփթաղիմայ, և 'ի ցրուել զօրացն Սիսարայ 'ի փախուստս, հասեալ 'ի վերայ նոցա ասէ զզօրս Եփրեմի, և հարեալ զնոսա 'ի հովիտսն։ Զնոսն և զզօրաց Բենիամինի ասէ, և եղբայր Եփրեմայ կոչէ զԲենիամին, զի էր հօրեղբայր նորա։

(4) Դրուատէ զզօրավարս Իսաքարու, որք մեծաւ քաջութեամբ 'ի բարձանց անտի գոգցեալ իմն գահավիժեալք 'ի հովիտս անդր ընդդէմ թշնամեաց, օգնականք եղեն Դեբովրայ։

(5) Սուրբ գիրքս ոչ ցուցանեն զպատճառս առանին խռովութեանց Ռուբենի, յորս սակս չէին 'ի պատերազմն։ Ընդ Նմին և զԳադ և զԴան և զԱսեր պարսաւէ, զի ոչ եկին լինել պատերազմակիցք, կէսք առ ահի, կիսոց ոչ ինչ փոյթ ըզհամազգեացն լեալ, և կէսք 'ի վաճառս իւրեանց պատաղեալ։

Հիմ եւ Ասեր զէնընկէց բաղմեալ ի զրահս առ Ծովեզեր,
Մինչ Ջարուղն մինչ Նեփթալիմ անձնանախատ գիմեն ի մահ։
Հասին Թագաւորք, Ճակատեցան ի պատերազմ.
Իշխանք Քանանու հասին եռուն մարտ ի Թանաք.
Հարան խորտակեցան ի վերայ Ջուրց Մակեդդովայ։
Աստեղք ի վերուստ ընդդէմ նոցա Ճակատեցան, (1)
Ցիւրաքանչիւր յօրինուածոց տալ պատերազմ ընդ Սիսարայ։
Հեղեղատն Կիսոնի ըզդիակոյտ նոցին մերժեաց, (2)
Ալիք Կադեսիմայ եւ հեղեղատն Կիսոնի։
Կոխեսցէ անձն իմ ըզնոսա, ոչ արձակեալ աչս ի յաւար։ (3)
Կարթակոտորք եղեն յայնժամ ի Ճեպրշտապ խուճապմանէն
Գարշապարք սալասրմեակ երիվարաց Մադդաբովայ.
Կարկեաց խրբիսինք նոցին եւ խրոխտ պարանոցին հրաշարտութիւն։
Նըզովեցէք ըզՄարովզ, ազգէ հրեշտակն յերկնից պատգամ. (4)
Նըզովեցէք, եւ բնակչաց նորին անէծս կարդացէք,
Փոխանակ զի հրաժարեաց զինուորել տեառն ի յօգնութիւն,
Զի չէառ յանձն ախոյենաց հըզօրին դալ նրսատա ի կռիւ։
Օրհնեալ Յայէլ ի կանայս, կին Կինեցւոյն Քաբերայ, (5)
Օրհնեսցի նա ի կանանց հանդերձ իւրովքն խորանաւ,
Արիութեան նորա խորանն այն սասարէզ արձանացեալ.
Ջուր խընդրեաց, եւ ինքն կաթն առեալ մատոյց փերփրատեսակ,
Դաշխուրանաւ զօրաւորաց անուշահամ մատոյց կոգի.
Ըզձեռն իւր ձախ ձըգեաց ի ցից, եւ զաջ ի յուռն անդր ի հարուած,
Անցոյց ի գլուխ նորա ցից, ընդ ծամելիս նորին վարսեաց,
Ի սպառըսպուռ ջաղջախանս հար սատակեաց ըզՍիսարա.
Ի մէջ ոտից նորա անկաւ նիրհեալ ի քուն յաւերժական,
Ի մէջ ծընգացն՝ ուր կորացաւ, անդ անկաւ հէքն եւ չուտռական։

(1) Որպէս բանակ իմն զաստեղս երկնից համարի Ճակատեալ ընդդէմ Սիսարայ, պատերազմակիցս իւր, թօթափելով որոտընդոստ շանթիս կարկուտ և մրրիկ, որպէս Յովսեպոս 'ի պատերազմի անդ պատմէ լեալ (Հնախօս. գիրք Ե. 6։)

(2) Հեղեղատս այս, յորում կորեան զօրք Սիսարայ, յերկուս առաջս բաժանէր. միումն անուն՝ Կիսոն, միւսումն Կադեսիմ։

(3) Զի ընդ դիակոյտ թշնամեաց անցանէին առանց ագահելոյ յաւար և 'ի կողոպուտ անկելոյն։

(4) Մարովզ թուի լեալ քաղաք մերձ 'ի հեղեղատ անդր Կիսոնի, անուն իսկ նորա և տեղի անհետացեալ յաստուածահրաման անիծից անտի, վասն չգալոյ նորա յօգնութիւն ժողովրդեան տեառն, թերևս և վասն ձեռնտու թշնամեաց նորա լինելոյ։

(5) Քաբեր իշխան էր Կինեցւոց, և Կինա քաղաք Ցուդայ մերձ Յեդովմ, ուստի էր Յոթրոր աներ Մովսեսի, և կին Մովսեսի Կինեցի։ Արդ Յայէլ կին Քաբերայ բարեկամութեամբ ընդ Իսրայէլացիս, զրկից փեղկի խորանին՝ ուր ապաւինեալն էր Սիսարա 'ի փախստին՝ վարսեաց ընդ ծամելիս նորա, և սպան զնա։

Յայնժամ մայրն Սիսարայ վանդակապատ պատուհանէն (1)
Հայեցեալ դէտակն ունէր եկաւորացն ի Սիսարայ.
Զի յետնեցան կառք նորա, զի կասեցին անիւքն ի գիլ,
Եւ հետք կառաց նորա ընդհէր իսկ յամէին դեռ եւս ի գալ:
Տիկնայք խմաստունք պատասխանի եառուն անդրէն,
Եւ ինքնին անձամբ անձին կրկնէր նա զնոյն պատասխանի.
Ոչ դառնիցեն աւարաբաշխք ընդ ի սէր բարեկամաց: (2)
Եւ գերլուին ի յուշ աղիք իւր ընդ կապուտն Սիսարայ,
Ընդ կապուտ երանգոց երփնագեղիցն նրկարուց.
Նարօտ պէսպէս նրկարուց, այն էր ուշան նորին կապուտ:
Աչսպէս կորիցեն տէր թշնամիք քո առ հասարակ.
Իսկ որ ըղձեղջն սիրեն, լուսափայլեն արփիսահրաշ
Որպէս ընդ այդն յածել ըղտիւ ծագէ արփին Ճաճանչագեղ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅՈՒԴԻԹԱՑ

(ԺԶ. 1:)

Օրհնեցէք ըղտէր թշմբկօք եւ ծընծղայիւք,
Երգս նրմա ուղղեցէք, բարձր արարէք զանուն նորա.
Տէր խորտակէ զպատերազմունս, եւ տէր անուն է նորա.
Ինքն ի միջի Ժողովրդեան իւրոյ ընդ մեզ հարեալ բանակ,
Ի հալածչաց մերոց հրաշօր բաղկաւ ըղմեզ ապրեցոյց:
Եկն Ասուր բիւրաւորօք, եկն ի լերանց հիւսիսոյ. (1)
Բազմութիւն զօրաց նորա եղից ըղձորս,
Եւ ամբոխ երիվարաց նորա ըղբլուրս.

(1) Քերթողական գեղեցկութիւն տողիցս 'ի վեր է քան զամենայն գովութիւն. դիտելի է և զսովորութիւն վանդակապատ զպատուհանս կանանուցն ունելոյ անգստին 'ի վաղ ժամանակաց անտի:

(2) Աւարառուք 'ի պատերազմունս սովոր են զաւազորեարն յանկելոյց անտի հետազօտել առ 'ի կողոպուտ. վասն որոյ տիկնայք իշխանաց, և ինքն իսկ մայրն Սիսարայ, առ 'ի տիսել զանձն յուսով՝ ասէր թէ չիցէ Սիսարա անկեալ, և ոչ դառնիցեն զնա աւարառուք՝ դիակապուտ առնել զնա, և խրախուսս ընդ բարեկամս իւրեանց յօրինել: Բայց գերլուին աղիք նորա 'ի յիշել զնա, և զգէն և զարդ նորա գունագոյն:

Յայտնի են անցք Հողեվեռնեայ զօրավարի արքային բաբելացւոց՝ որ պաշարէրն զԲետիզուա, և գործ քաջութեանն Յուդիթայ՝ որ սպան զնա: Այդ օրհնութիւնս այս, զոր յետ յաղթութեանն երգեաց Յուդիթ, պակասէ յերբայական բնագրին և յարաբացի թարգմանութեան. այլ յոյնն, լատինն, ասորին և մերս ունին զայս:

(1) Ի լերանց հիւսիսոյ, այս ինքն Կիլիկիոյ:

Երդուաւ զերկիր իմ տալ բոցոյ ի Ճարակ,
Աւար ըզտղայս իմ հարկանել,
Եւ ըզկուսանս առեալ տանել ի գերութիւն։
Այլ տէր Աստուած զօրութեանց կորոյս ի ձեռն ըզնա կընոջ.
Զի ոչ անկաւ հրզօրն ի սրոյ արի արանց,
Եւ ոչ որդիք տիտանացւոց արկին ըզնա դիտապատս. (1)
Ոչ ի վերայ նորա յարեան հրսկայք բարձունք,
Այլ Յուդիթ դուստրը Մերարեայ.
Գեղեցկութիւն երեսաց յոյժ խաբեաց ըզնա.
Զի մերկացաւ նա ըզհանդերձ այրիութեան,
Օծ ի յանոյշ ըզդէմս ի յիւղ, զարդս ըզգլուխս իւր յօրինեաց,
Հրապարշատեան արկ ի նորին խաբէութիւն,
Եւ ի գեղ կոչկաց իւրոց մոլորեցաւ սիրտ նորա.
Գեղեցկութիւն գերեաց ըզնա, եւ անց ընդ փող նորա դաշոյն։
Դողացան Պարսք ի բազկէ կնոջ, (2)
Մարք ի նորին քաջութենէ խուովեցան.
Յայնժամ բանակն ի պարտութիւն մատնեալ եբարձ աղաղակ.
Յայնժամ որդիք մանկամարդաց խոցոտեցին ըզնոսա, (3)
Հարին կոտորեցին ըզփախչատեսս իբր ըզմանկան.
Պատերազմաւ տեառն Աստուծոյ խնդ կորեան։
Օրհնեցէք ըզտէր Աստուած յօրհնութիւն նոր.
Մեծ ես դու տէր, փառաւորեալ եւ սքանչելի զօրութեամբ.
Ծառայեսցեն քեզ ամենայն քո արարածք։
Զի ասացեր եւ եղեն,
Առաքեցեր զՀոգի քոյին եւ ստեղծան.
Եւ հրամանի քում ո՞ կացցէ հակառակ.
Քանզի լերինք ի հիմանէ դեռսվք հանդերձ սասանեցան,
Եւ յերեսաց քոց վէմք հալեալ իբրեւ ըզմոմ ըսպառեցան.
Իսկ դու քաւիչ երկիւղածաց քոց լինիս,
Եւ զդոյզն զոհ եւ ըզչնչին Ճարսն ընդունիս քեզ յողջակէզ։
Վա՜յ ազգաց որ ի վերայ մեր յանդգնին ի պատերազմ,
Զի տէր յաւուր դատաստանի խընդրեսցէ վրէժ ի նոցանէ.
Հուր եւ որդունս յայնժամ հարցէ տէր ի մարմինս նոցա. (4)
Լացցեն ի սուգ անվախճան։

(1) Որդիք տիտանացւոց, այս ինքն հսկայազունք։

(2) Ի բանակի անդ Հողեփեռնեայ էին և զօրք պարսիկք և Մարք, զի իշխեր յայնժամ արքային ասորեստանեայց և ի վերայ ազգացս այսոցիկ։

(3) Որդիս մանկամարդաց խնդ մանկան դեռահասակ և տկար հակառակ հրսկայից պատերազմողաց։

(4) Հուր և որդունս ըստ տէրունական բանին (Մրկ. թ. 45.) «Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի»։

ՍԱՂՄՈՍ Ա.

Չի երանելի եւ արդարք, և բշուառ մեղաւորք:

Երանի առն՝ որ ոչ գընաց ի Ճանապարհս ամպարիշտաց,
Չեղեւ չարին խորհրդակից, եւ ոչ յաթոռս Ժանտից նստաւ.
Այլ ի հրամանս աստուածային, յօրէնսս տեառն են կամք նորա,
Այլ ի տուէ եւ գիշերի յօրէնս ի նոյն խորհեսցի նա:
Զի եղեցի նա որպէս ծառ տընկեալ զառուիւ ի գնացս ջուրց, (1)
Որ ըզպտուղ իւր ի ժամու տացէ պըճնեալ մշտատաղարթ.
Եւ զամենայն գործս նորա յաջողեսցեն երկինք նըմա: (2)
Ոչ այսպէս ոչ են ամպարիշտք, այլ երերեալ եւ տատանեալ
Որպէս փոշի զի ընդ երկիր հոսի վարեալ ի մրրրկէ:
Վասն այսորիկ ոչ յարիցեն ընդ արդարոց ի դատաստան. (3)
Տէր Ճանաչէ զուահ արդարոց, կորիցեն ուահք ամպարիշտաց: (4)

---

(1) Բազում ուրեք սուրբ գիրք՝ ի ձեռն ջուրց զշնորհս Աստուծոյ յայտ առնեն, զոր և՝ ի շարականս երգեմք. ի մարգարէէն. «Այսօր բղխեաց ջուր կենդանի Յերուսաղէմ, յորմէ լցան գեաւ աստուածային». այսինքն առաքեալք՝ ի շնորհաց Հոգւոյն: Եւ վէմն իսկ՝ յորմէ բղխեցոյց Մովսէս ջուր, որ և երթիայրն զՀետ խաչելեալ՝ ի յանապատին, օրինակ էր Քրիստոսի՝ ըստ առաքելոյն (Ա. Կոր. Ժ. 4.) «Եւ վէմն էր ինքն Քրիստոս». որոյ շնորհօքն աճեն և պտղաբերեն արդարք, որպէս ծառք՝ ի գնացս ջուրց տնկեալք:

(2) Նոյն է այս ընդ առաքելոյն բանի (Հռ. Ը. 28.) «Որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի՝ ի բարիս»:

(3) Երբայական եղանակ խօսից. այս ինքն զի ամպարշտաց վաղ իսկ լեալ է դատակնիք, և դատապարտեալ են յառաջ քան զյառնել՝ ի դատաստան: Որպէս և փրկիչն մեր ընտ բարւոյ մասին ասէ զարդարոց. (Յոհ. Ե. 24.) «Որ զբանն իմ լսէ... ոչ մտանէ՝ ի դատաստան, այլ փոխեցաւ՝ ի մահուանէ՝ ի կեանս»:

(4) Ճանաչել Աստուծոյ նշանակէ հաճիլ ընդ այն, վասն որոյ այս են խմաստք սողոմ. Հաճի տէր ընդ գնացս արդարոց, իսկ Ճանապարհքն ամպարշտաց աճեն զնոսա՝ ի կորուստ:

ՍԱՂՄՈՍ Բ

Օրինակաւ բշնամեացն իւրոց ցուցանէ զբշնամեացն Քրիստոսի ձիգն ընդունայն, և զրագաւորեալ նորա 'ի վերայ բոլորիցս :

Զի՞ խռովեցան հեթանոսք, (1)
Եւ ժողովուրդք զի՞ խորհեցան ի սնոտիս.
Հիմ թագաւորք երկրի եղեն յանդիման,
Եւ իշխանք ժողովեցան ի միասին
Ընդդէմ տեառն եւ օծելոյ նորա՝ ասել. (2)
Խզեսցուք ըզկապանս եւ ընկեսցուք ըզլուծ նոցա :
Ծիծաղեսցի բնակեալն յերկինս արհամարհեալ ըմնոքքն,
Եւ ի սաստել սրբամբտութեամբ արկցէ յայնժամ ի նոսա խռով : (3)
Ես թագաւոր ի նմանէ կացի ի լեառն Իւր ի Սիոն, (4)
Ի լեառնն սուրբ, պատմել զնձ անդ ըզպատուիրանսն նորա :
Տէր ասաց ցիս, Դու Իս որդի իմ, Ես այսօր ծընայ ըզքեզ. (5)
Խընդրեա յինէն, եւ զհեթանոսս ողջոյն քեզ ասաց ժառանգութիւն. (6)

(1) Ակնարկութիւն սաղմոսիս 'ի Քրիստոս յայտնի է, ոչ միայն 'ի գործոց առաքելոց (Գ. 25.) և 'ի սրբոց Հարց, այլ և 'ի վկայութենէ բարեբնեայն Հրէից՝ որք զՄեսիայէն խմնան ասացեալ « Որդի իմ Ես դու, և Ես այսօր ծնայ զքեզ » : Վասն որոյ զմեկնութիւն առաջնոյ տան սաղմոսիս որպէս յայտնի ինչ 'ի դէմս ածեն նոցա առաքեալք յասելն. « Ժողովեցան արդարև 'ի քաղաքիս յայսմիկ 'ի վերայ սրբոյ որդւոյ քո Յիսուսի՝ զոր օծերն, Հերովդէս և Պոնտոս Պիղատոս, ազգք և ժողովրդոք Իսրայելի » :

(2) Զայս այսպէս արարին Հրեայք յասելն (Ղկ. ԺԹ. 14.) « Ոչ կամիմք թագաւորել դմա 'ի վերայ մեր » . և (Յոհ. ԺԹ. 15.) « Զի՞ք մեր թագաւոր բաց 'ի կայսերէ » : Որով Ժընկէցք լեալ, մերժեցին զՔրիստոս և զառաքիչն նորա, որպէս ինքն ասաց (անդ Ե. 23.) « Որ ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա » :

(3) Յայնժամ, այս ինքն յորժամ արձակեսցէ 'ի վերայ Երուսաղեմի զՀռովմայեցիս :

(4) Սիոն լեառն, ուր էին արքունիք Դաւթի, և ուր ապա կառուցաւ տաճարն՝ օրինակ եկեղեցւոյ Քրիստոսի, որոյ սկիզբն եղև 'ի Նմին լերին՝ ուր էջ Հոգին 'ի սուրբ վերնատունն, և անտի Քրիստոս զօրէնս և զպատուիրանս Աստուծոյ առանդէ մեզ :

(5) Այս բան սաղմոսին հնդիցս 'ի նոր կտակարանի ածեալ է 'ի վկայութիւն աստուածութեանն Քրիստոսի. և առաքեալն ոչ միայն յԱնտիոք առ ժողովն Հրէից ածէ զայս 'ի վկայութիւն, այլ և 'ի Թղթին առ Եբրայեցիս ձեռնարկելով՝ զի Քրիստոսի միայն ասաց Հայր, և ոչ 'ի հրեշտակաց իսկ ումեք. « Քանզի ցո՞ երբեք ասաց 'ի հրեշտակաց՝ որդի իմ Ես դու » . (Ա. 5 :)

(6) Խոստանայ Հայր զհեթանոսս Քրիստոսի 'ի ժառանգութիւն, զոր և կատարեաց՝ ժողովեալ յամենայն ազգաց զեկեղեցի սուրբ :

Խընդրեա, եւ տաց իշխանութիւն քեզ ընդ համայն ծագս երկրի.
Հովուեսցես զոս ընտրեալս գաւազանաւ երկաթեաւ, (1)
Իբրեւ զանօթ բրրտի փշրեալ խորտակեսցես ընկոսս:
Արդ թագաւորք ի միտ առէք, եւ ոյք դատիքդ երկրիր, (2)
Ծառայեցէք տեառն երկիւղիւ եւ զուարճախառնն դողութեամբ.
Ընկալարուք ըղխրատս նորա զի մի ընդ ձեզ բարկացի տէր,
Եւ կորիցէք յարդարութեան ճանապարհէն անկեալ ի բաց,
Ի ժամու բորբոքելոյ ցասման նորա:
Երանի ամենեցուն, ոյք յուսացեալ են ի տէր:

ՍԱՂՄՈՍ Գ

Այպաւիանել Դաւթի առ Աստուած յերեսաց հալածչաց իւրոց 'ի դեմս Քրիստոսի:

Տէր, զի՛ բազում եղեն նեղիչք իմ, զի՛ բազում
Ի վերայ իմ յարուցեալք. ոյք ասէին զանձնէ իմմէ՝
Չկք փրկութիւն սորա առ տէր Աստուած իւր. (1)
Այլ դու տէր, օգնական իմ ես փառք իմ,
Բարձրացուցիչ գլխոյ իմոյ.
Ձայնիւ իմով ես առ քեզ տէր կարդացի,
Եւ տէր լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:
Ես նընջեցի, ի քուն եղէ. զարթեայ, եւ տէր ընկալաւ զիս: (2)
Ոչ երկեայց ոչ ես ի բիւրուց զօրաց նոցա,
Որ զիս պատեալ շուրջանակի պաշարէին.
Արի փրկեա զիս Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան
Որ ոխացեալ էին ընդ իս տարապարտուց,
Եւ զատամունս անօրինաց փշրեսցես:
Ի տեառնէ է փրկութիւն,
Եւ ի վերայ ժողովրդեան քո եղիցի օրհնութիւն քո:

(1) Գաւազան երկաթի ցուցանէ զանդիմադարձ զօրութիւն իշխանութեանն Քրիստոսի, զորոյ զփորձ առին նախ Հրեայք ապստամբեալք 'ի նմանէ:

(2) Խրատէ զազգս և զթագաւորս դալ 'ի հնազանդութիւն Քրիստոսի, և անհնազանդիցն սպառնայ զբարկութիւն նորա:

(1) Քանզի և իւրքն իսկ թշնամանէին զԴաւիթ որպէս թողեալ 'ի ձեռանէ տեառն: Այս և յանիծից անտի յայտ է, զոր Սեմեի ժպրհեցաւ արձակել 'ի նա: (Բ. Թգ. ԺԹ. 19:) Զնոյն թշնամանս և Հրեայք և քահանայապետք նոցա ասային Քրիստոսի 'ի հայհոյելն (Մտթ. ԻԼ. 40.) « Այլեցո զքեզ, թէ որդի ես Աստուծոյ: . . . Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա »:

(2) Սուրբ Հարք զՔրիստոսէ իմանան զտուն սաղմոսիս. զի որպէս թէ 'ի քուն եղև 'ի վերայ խաչին և զարթեաւ, և յամօթ արար տէր զթշնամիս նորա, և նոփաւ ետ փրկութիւն ժողովրդեան իւրում:

ՍԱՂՄՈՍ Դ

Խնդրէ սաղմոսերգուն՝ ի տեառնէ օգնութիւն ընդդէմ թշնամեաց իւրոց, յորոյոր զնոսա դառնալ առ Աստուած, և քաջալերի յուսացեալ՝ ի նա:

Ի կարգալ խմբում ըստ ինձ Աստուած ըստ արդարութեան.
Ինձ ի նեղութեան անդորր արարեր, ողորմեա ինձ:
Մինչեւ ցէրբ, որդիք մարդկան, մինչեւ ցէրբ իցէք խըստասիրտք,
Աւ իմՀ սիրէք դուք ըզնանրութիւն, էր խընդրէք ըզսուտ.
Ծանեարուք զի հրաշս արար աւասիկ տէր սրբոյ իւրում, (1)
Եւ ոչ փակեացէ ի կարգալ խմբում զունկընն իւր առ իս:
Բարկանայք, այլ մի՛ եւ մի՛ մեղանչէք. այլ զըղջացարուք (2)
Յանկողինս ձեր զոր ինչ ասիցէք ի սրտի ձերում.
Մատուցէք նըմա զոհ արդարութեան, յուսացեալք ի տէր:
Բազումք ասեին՝ ո՞ է որ ցուցցէ մեզ ըզբարութիւն. (3)
Այլ նըշանեցաւ մեզ լոյս երեսաց քոց առհաւատչեայ,
Եւ ուրախութիւն դու սրտիդ մերոց ետուր ի խրախոյս.
Բերովք ցորենոյ գինւոյ եւ ձիթոյ լըցեր ըզնոսա: (4)
Նընջեսցուք յանդորր ի քուն, զարթիցուք ի յայսմ եւ ի սոյն, (5)
Զի դու տէր միայն առանձին յուսով ետուր մեզ բնակել:

(1) Սրբոյ իւրում, այս ինքն օծելոյ. զոյս յերրորդ դէմս զանձնէ իւրմէ ասէ մարգարէն, այլ զՔրիստոսէ այլաբանելով:

(2) Այս ինքն եթէ բարկանայք երբէք, զդոյշ լերուք՝ ի բարկութեան ձերում մի՛ մեղանչել. իսկ եթէ մեղանչիցէք ասելով ինչ չար՝ ի սրտի ձերում, յանկողինս ձեր ընդ երեկս զղջացարուք. զոր և առաքեալն ասէ. (Եփես. Դ. 46.) «Արեգակն՝ ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մոցէ»:

(3) Ակնարկէ յայնոսիկ՝ որք թերահաւատեն զաստուածային խոստմանց, և գոհանայ՝ ի դէմս՝ յուսացելոց յԱստուած՝ որ լուսով հաւատոց քաջալերէ ըզսիրտս նոցա: Վասն որոյ զասղմոսս զայս՝ ի տօնի սրբոյ խաչին երգեմք. քանզի նշանաւ խաչին խրախուսէ տէր զհաւատացեալս՝ ի նեղութեան:

(4) Ի յանդիմանութիւն թերահաւատից յիշեցուցանէ զլիութիւն բարեաց, զոր առատաձեռնէ նոցա Աստուած: Ի նեղել Դաւթի յերեսաց Աբեսողոմայ, յորժամ պակասէին նմա համբարք՝ ի բանակին, և՝ ի լքանել և՝ ի թերահաւատել եկելոցն ընդ իւր, հասուցին նմա յանկարծ անակնկալ Վէսքի Մաքիր և Բերզելի գինի ցորեան ձէթ և այլ պաշարս. (Բ Թագ. Ժէ. 28.) և այս են ըստ նկարագրին իմաստք տան սաղմոսիս: Այլ խորհրդաւոր երեքին այսոքիկ ցորեան գինի և ձէթ նշանակեն զաղբիւրս ընտրեալն Քրիստոսի, զսուրբ խորհուրդս՝ որ նոքօք կատարին: Այս իմաստ՝ ի դէպ ևս զայ յետ գոհանալոյ սաղմոսերգուին զԱստուծոյ վասն տալոյ նորա մեզ զսուրբ նշանն՝ ի հաստատութիւն հաւատոց: Սրբոյն Գրիգորի աստուածաբանին են իմաստքս յաստուածայայտնութեան Ճառին:

(5) Գոհութեամբ կնքէ զբանն, քաջալերեալ աներկեան յուսովն՝ զոր շնորհէ Աստուած երկիւղածաց իւրոց:

ՍԱՂՄՈՍ Բ.

Հիսանայ ընդ արարածս Աստուծոյ, և ընդ խնամս նորա առ մարդն, այլաբանելով զՔրիստոսն :

Զի՛ սքանչելի է յամենայն երկրի անուն քոյին տէր. (1)
Ամբարձան ահեղահրաշ փառք քո ի վեր քան զերկինս.
Ի բերանոյ ստնդիեցուց մանկանց ընդդէմ թշնամեաց քոց
Կատարեցեր զօրհնութիւն, զի եղծցի վէճն հակառակորդ.
Տեսից զերկինս ըզգործ մատանց քոց, ըզլուսին, (2)
Տեսից զաստեղսն՝ զորս դու հաստատեցեր :
Ո՞վ է մարդ՝ զի յիշեսցես դու զնա, կամ ո՞վ որդի մարդոյ՝
Թէ դու նրմա այց արասցես.
Փոքր ինչ ընդնա խոնարհագոյն քան ըզհրեշտակս արարեր, (3)
Փառաւք ընդնա պըսակեցեր եւ պատուով,
Եւ ի վերայ ձեռակերտաց քոց կացուցեր :
Զամենայն ինչ ի նեղքոյ ոտից նորա հնազանդեցեր,

(1) Զտուն սաղմոսիս սուրբ Հաբք զմարգեղութենէ Բանին Աստուծոյ խմանան, քանզի նոմաւ անուն նորա սքանչելի եղև. մինչև ի ծագս երկրի, և փառք նորա գեր ի վերոյ քան զերկինս ամբարձան: Զայս խմաստ և փրկիչն ինքնին հաստատէ ի մոռանելն փառաւք Յերուսաղէմ, զյաջորդ տուն սաղմոսիս ածելով ի վերկայութիւն, յորժամ քահանայապետքն և գրիչքը բարկանային ընդ աղաղակել մանկտւոյն՝ օրհնութիւն որդւոյ Դաւթի. (Մատթ. ԻԱ. 16:) Բայց մանկտւով խմանան սուրբ Հաբք և զակար և զանխմաստ որեարն, որովք արար Աստուած ըզգերահրաշ դարձ աշխարհի յաստուածգիտութիւն, յամօթ առնելով զհակառակորդն հպարտացեալ ի վերայ մարգկութեանս :

(2) Զմարդասիրութիւնն Աստուծոյ ի գործոց նորա ցուցանէ, որչափ ինչ ստեղծ վասն նորա, և որչափ ինչ բարերարեաց նմա :

(3) Զէ մարթ երկբայել, զի խորհրդական խմաստ բանիս հայի ի Քրիստոս. քանզի առաքեալն ածէ զայս ի վկայութիւն (Եբր. Բ. 9.) յասելն. « Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուն փառաւք և պատուով պսակեալ »: Վասն որոյ իմաստք մարգարէական բանիս են, Դու զմարդն Քրիստոս, որում անճառ խնամով այց արարեր՝ ի բարձրութիւն աստուածութեանդ վերբերելով, առ սակաւ մի ժամանակ նուազ քան զհրեշտակս ցուցեր. մինչև ի կատարել խորհրդոց կամաց քոց՝ փառաւք և պատուով պսակեցեր զնա; և կացուցեր տէր և իշխան ամենայն արարածոց քոց : Զի որպէս նոյն առաքեալ ասէ. (Փիլ. Բ. 9.) « Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամատականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի՝ թէ տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր »: Վասն այսր ամենայնի հիացեալ սաղմոսերգուն երկրորդէ. Տէր տէր մեր, զի՛ սքանչելի է անուն քո յամենայն երկրի :

Զխաչն եւ զարջառ, զերեւայրի, զԹըռչունս երկնից,
Եւ զձկունս՝ որ ընդ շաւիղս ալեաց գընան.
Զի՛ սքանչելի է յամենայն երկրի անուն քոյին տէր։

ՍԱՂՄՈՍ Ժ.

Խրախուսեալ յԱստուծոյ ընդդեմ խրատուց թերահաւատից, քաջալերելով զհաւատացեալս առհասարակ։

Ի տէր յուսացայ, որպէս ասիցէք ցանձն իմ՝ Թէ փոխեաց (1)
Ե՛ր Լեառն ըղձենայն որպէս ըղձենիղուկ.
Զի ահաւասիկ զաղեղունս իւրեանց լարեն մեղաւորք,
Նետս ի կապարձիս իւրեանց շրջահեալ,
Զըգել ընդ խաւար որոց միանգամ ուղիղ են սրտիւք.
Զի աւերեցին զոր դուն շինեցեր.
Եւ զի՞ իսկ մեղաւ արդարն նոցա։
Ա՛յլ տէր՝ որ բնակէ ի տաճար սուրբ իւր,
Ա՛յլ տէր՝ որ յերկինս է յաթոռ իւրում,
Աչք նորա անքուն ի անանկիս հային,
Եւ արտեւանունք նորա նրկատեն ըզգործս մարդկան.
Քննէ տէր զարդարն եւ զանպարըշտեալ։
Որ սիրէ ըզմեղս, ատեայ զանձն իւր։
Տեղայ որոգայթ տէր ի մեղաւորս. (2)
Հուր ծըծումբ մըրրիկ, այսոքիկ նոցա բաժինք բաժակի. (3)
Զի արդար է տէր, սիրէ զուղղութիւն եւ զարդարութիւն։

---

(1) Բարեկամք Դաւթի խրատեն զնա խոյս տալ յերեսաց Թշնամեաց, զսպասաւորութիւնս և զպատուալիս նոցա յանդիման առնելով. և առ 'ի յանկուցանել զնա 'ի բանս իւրեանց, կարեկցութեամբ վախճան առնեն բանիցն՝ յերրորդ դէմս 'ի նա ինքն ակնարկեալ, Թէ դու արդարդ զի՞ մեղայր նոցա։ Որոց ինքն պատասխանէ յուսումն առ Աստուած, անօրէն ամենայնի զնա խոստովանելով։

(2) Որոգայթիւ սուրբ գիրք սովոր են ցուցանել զանխուսափելի և զյեղակարծ պատուհաս մեղաւորաց։

(3) Բաժին և բաժակ 'ի սուրբ գիրս նշանակէ բազում տարբեր որ ինչ իւրաքանչիւր ումեք է սահմանեալ, մնանանդ վիճակ և պատուհաս։

ՍԱՂՄՈՍ ԺԲ

Հեծութիւնք անձին տառապեալոյ 'ի փորձութեանց, որ խնդրէ յոյս 'ի տնտանէ առ 'ի տնտանել որ ինչ յանձին իւրում անհաճոյ իցէ Աստուծոյ, և յողորմութիւն նորա ապաւինի :

Մինչեւ յերբ տէր մոռանաս զիս ընդառընդուռ,
Մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո յինէն ի բաց :
Ցերբ ըղձորհուրդս յանձն իմ դընեմ, եւ ցաւս ի սիրտ իմ հանապազ.
Ցերբ ի վերայ իմ բարձրանայ թշնամին,
Հայեաց եւ լուր ինձ Աստուած իմ:
Լոյս տուր աչաց իմոց տէր, (1)
Զի մի երբեք լեցի նընջել ինձ ի մահ :
Մի ասասցէ թշնամին՝ թէ յաղթեալ եղէ նըմա,
Եւ կամ նեղիչք իմ ցընծասցեն՝ զի ես դըտայց սասանեալ: (2)
Յողորմութիւն քո յուսացայ, ցընծացաւ սիրտ իմ ի քեզ,
Ի փրկութեան քում ցընծացաւ, (3)
Եւ օրհնեցից ըզբարերարդ իմ ըզքեզ :

ՍԱՂՄՈՍ ԺԴ

Որ ինչ առաքինութիւնք ևն կարևորք վասն արժանի լինելոյ մտանել յարքայութիւնն երկնից :

Տէր ո՞վ կացցէ ի խորանի քում, կամ ո՞վ (1)
Ի լեռնէն սուրբ քո բնակեսցէ :
Որ գնայ ամբիծ, որ ոք գործէ զարդարութիւն.
Որ ի սրտի իւրում խօսի ճշմարտութիւն. (2)

(1) Խնդրէ 'ի տեառնէ լուսաւորել զմիտս իւր, առ 'ի տեսանել զդարանակալութիւնս դիւին, զի մի գուցէ 'ի քուն մեռցս թմբրեալ՝ կորիցէ յաւիտեան. զի այս է ննջել 'ի մահ :

(2) Ազդ առնէ սուրբն Օգոստինոս, զի մարգարէն ողորմութեան և ընտրհացն Աստուծոյ ընծայէ և զպահպանութիւն իւր 'ի սասանելոյ :

(3) Ի փրկութեան քում, այս ինքն 'ի փրկութեան՝ որ 'ի քէն է, Քրիստոսիւ՝ որ ամենեցուն է փրկութիւն :

(1) Խնդրելոյ զսորանն երկնաւոր, զորմէ առաքեալն ասէ. (Եբր. Ը. 2.) «Նստաւ ընդաջմէ մեծութեանն ահռելոյն յերկինս, սրբութեանցն պաշտօնեայ, և խորանին ճշմարտութեան՝ զոր տէրն կանգնեաց» :

(2) Խօսել զճշմարտութիւն 'ի սրտի' է սուրբ պահել զմիտս, չմեղանչել խորհրդովք :

Եւ ոչ ումեք լեզուաւ իւրով նենգաւորէ.
Որ ընկերի իւրում չարիս ոչ նիւթէ.
Ում արհամարհ է չարագործ, (1)
Եւ զերկիւղածս մեծարէ.
Որ ընկերի իւրում երդուեալ՝ ոչ դրժէ.
Զարծաթի իւր ոչ տայ ի վարձու, չառնու կաշառս վասն իրաւանց.
Որ արասցէ զայս ամենայն, նա մի՛ եւ մի՛ սասանեսցի: (2)

ՍԱՂՄՈՍ ԺԵ

Զի գոյութեանն Աստուծոյ վկայեն երկինք, վկայեն և օրէնք նորա գերազանցք. հայցէ թողութիւն մեղաց ընդդէմ նոցին գործեցելոց, և շնորհս՝ ի պահպանութիւն նոցին:

Երկինք պատմեն ըզփառս տեառն, (1)
Եւ զարարածս նորա պատմէ երկնից հաստատութիւն:
Օր աւուր ազգ առնէ զայն,
Եւ գիշեր գիշերի ցուցանէ զայն ի գիտութիւն:
Չիք ուրէք ազգ եւ ոչ լեզու, ոյց ոչ լսին ձայնք նոցա. (2)
Ընդ ամենայն երկիր բարբառ նոցա,
Մինչեւ ի ծագս իսկ աշխարհի են խօսք նոցա:
Յարեւուս անդ ըզխորան իւր հար, եւ ինքն որպէս փեսայ (3)
Զի ելանէ յառագաստէ,
Ցընծայ ի գնալ իւր իբր հրսկայ ընդ ճանապարհս իւր երկնաճեմ:
Ի ծագ երկնից են ելք իւր, մինչ ի ծագս երկնից հանդիստ,

(1) Արհամարհեալ է առաջի արդարոյ այր չարագործ, թէպէտ և՝ ի ծայր մեծութեան և իշխանութեան իցէ հասեալ և ընդ հակառակն զերկիւղածս տեառն սիրէ նա և մեծարէ:

(2) Այսպիսումն զխորանն երկնաւոր և զլեառն սուրբ ապահովէ:

(1) Բարբառ երկնից իմանալի է ամենեցուն, որոց իցեն միտք. կարդ և չարժմունք լուսաւորաց, և ամբաւ տարածութիւն՝ յորում հաստատեալ կան, ցուցանեն զմեծութիւն և զփառս Աստուծոյ. վասն որոյ յաւելու, զի չիք ազգ և լեզու՝ որոց չիցէ լսելի բարբառ նոցա:

(2) Պարզէ աստանօր զայլաբանութիւնն, և յայտ առնէ զքարոզութիւն աւետարանին՝ ի ձեռն առաքելոց և յաջորդաց նոցին, որք դարուց՝ ի դարս զայն աւանդեցին: Աներկբայելի է իմաստս այս վկայութեամբ առաքելոյն, (Հռ. Ժ. 18.) որ զհետ մարգարէութեանն Եսայեայ՝ «Իբրև զի գծագիկ են ոտք աւետարանչացն» յարէ. «Զի ընդ ամենայն իսկ երկիր եւ բարբառ նոցա, և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա»:

(3) Հարկանել Աստուծոյ զխորան իւր յարեւուս՝ յայտ առնէ ցուցանել նորա զինքն՝ ի ձեռն արեգական. որպէս թէ ասէր, վկայէ և արեգակն եթէ դոյ Աստուած:

Եւ ի տապոյ նորա չկցէ ոք որ թաքչել կարիցէ։ (1)
Օրէնք տեառն ամբիծք են, դարձուցանեն նոքա զհոգիս.
Հաւատարիմ է վկայութիւն իւր, իմաստուն առնէ զտրտոյս. (2)
Արդարութիւն նորա ուղիղ է, եւ ուրախ առնէ զսիրտս.
Պատուիրանք տեառն լոյս են, լոյս տան աչաց խաւարելոց. (3)
Սուրբ է երկիւղ տեառն եւ մընոյ յաւիտեան.
Դատաստանք տեառն արդարք են, դատաստանք տեառն ճշմարիտք։
Ցանկալի է նա քան զոսկի եւ քան զականըս պատուականս.
Քաղցր է նա քան զղմեղս ծորեալ խորիսխ։ (4)
Վասն այն ծառայ քո պահեսցէ, եւ ի պահել իւր վարձ բազում։
Ո՛վ ըստ ցանցուածս անձին կարէ առնուլ ի միտ. (5)
Սրբեա զիս տէր, սուրբ ի գաղտնեաց խնոց արա,
Եւ յօտարէն պահեա զծառայս քո Աստուած.
Ապա թէ ոչ՝ տիրեսցեն ինձ, (6)
Յայնժամ ամբիծ ի մեղաց, սուրբ ի մեղաց եղէց մեծաց։
Եւ քեզ հաճոյ եղիցին բանք շրթանց խնոց,
Լիցին խորհուրդք սրտի խնոյ քեզ յամենայն ժամ հաճոյ.
Տէր օգնական եւ փրկիչ իմ։

---

(1) Զկք 'ի յէից՝ յորում զօրութիւն արեգական ոչ ներգործիցէ, և ճառագայթք նորա ծագեն 'ի խորս իսկ ձորոց և 'ի փապարս լերանց։ Այս ամենայն բարձրագոյն իմաստք 'ի դէպ եւս գան արեգականն արդարութեան, զորմէ սաղմոսերգուն նկարագրութեամբն այլաբանէ։

(2) Ի վկայութենէ համագոյից անցանէ 'ի վկայութիւն օրինացն Աստուծոյ, որ ոչ ինչ նուազ ցուցանեն զիմաստութիւն նորա և զմարդասիրութիւն. զի սոքօք երանաւետք զմարդիկ, ծածկեալ զսոսա յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեալ տղայոց. (Մատթ. ժ. 25։)

(3) Յաւէլս և զայլ բարեմասնութիւնս աստուածային օրինաց, և զերկիւղն Աստուծոյ անտի յառաջ եկեալ՝ որոյ արդաւիք յաւիտենականք են։

(4) Այս ինքն պահեմ զօրէնս քո, զի ցանկալի են ինձ և քաղցր. այլ գիտեմ եւս, զի վարձ մեծ շնորհեսս որոց պահենն զայնոսիկ։

(5) Որչափ ոք և արդար իցէ, բազում ինչ յանցանէ անգիտութեամբ ընդդէմ աստուածային օրինաց. վասն որոյ հայցէ սաղմոսերգուն սրբել զանձն 'ի գաղտնեաց անտի յանցուածոց. և յօտարէն, այս ինքն եթէ այլոց եւս տուեալ իցէ պատճառս մեղաց։

(6) Այս ինքն եթէ ոչ տիրեսցէ յիս օրինազանցութիւն, եթէ ոչ ունակութիւն լեալ տարբասցի յիս, զերծ գասցց 'ի ծանուցեալ մեղաց, և հաճոյ լիցին Աստուծոյ բանք իմ և խորհուրդք։

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Գոհութիւն առ Աստուած վասն ազատելոյ 'ի վտանգաց և 'ի հեղուրեանց :

Բարձր առնեմ ըղքեզ Աստուած իմ և տեր,
Զի ընկալար զիս, եւ ոչ լիս զոսոխն ուրախ արարեր :
Կարդացի առ քեզ փրկիչ իմ եւ յոյս,
Եւ ի գըժոխոց հաներ դու զանկեալ անձն իմ խորասոյզ :
Ի վիշտս մահու կացեալ առ իս հուպ, (1)
Բրժըշկեցեր զիս, ոչ ըքեալ թողեր ընդ ինքեան ի դուք :
Սաղմոս ասացէք տեառըն սուրբք սրբոիւք,
Եւ յիշատակի սրբութեան նորա խոստովան լերուք :
Ի բարկութենէ նորա արհաւիրք, (2)
Եւ յասուածայնոց պարգեւք ի կամաց նորին կենդանիքք :
Ընդ երեկս հանդիստ առնուցուն լալիք, (3)
Եւ առաւօտուց լցին ցընծութեան բարբառք բերկրալիք :
Ես ի յօրանալ խմում ի բարիս, (4)
Ասացի ցանձն իմ՝ թէ ի յաւիտեան ոչ սասանեսցիս.
Զի դու հաճեցար ի կամս քոյին
Տալ ինձ զօրութիւն եւ դեղոյ խոյ ճաճանչ գերասրիին.
Այլ գըտայ յանկարծ խռովեալ ես անդրէն,
Զի դու տեր ի բաց զերեսս քոյին դարձուցեր յինէն :
Առ քեզ բողբոջով սրտիւ կարդացի,
Եւ առ Աստուածդ իմ ի նուազել խմում աղաղակեցի,
Զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ,

(1) Զսաղմոսս զայս երգեաց Դաւիթ 'ի դադարել պատուհասին սրածութեան, 'ի դարձուցանել հրեշտակին ստատկչի հրամանաւ տեառն զսուր 'ի պատեան իւր 'ի կալն Ուռնայ. (Ա Մնաց. ԻԲ. 28.) վասն որոյ 'ի գժոխոց, այսինքն 'ի գերեզմանէ, ասէ զերծուցեալ զանձն իւր՝ փրկելով զնա 'ի մահուանէ : Սուրբ Հարք ըզյարութենէ փրկչին խմանան խորհրդաբար զայս տուն սաղմոսիս :

(2) Զի ասատիկ է բարկութիւն սպառնալեաց նորա 'ի վերայ մեղաւորաց, անչափ և անքնին են ողորմութիւնք աւետեաց նորա 'ի վերայ արդարոց :

(3) Զհամառօտութիւն բարկութեանն Աստուծոյ յայտ առնէ երեկոյին լալեօք և այգուն ուրախութեամբ. զի պատիժք, զոր յերեկոյին տայ Աստուած առ 'ի խրատ, դադարեն առաւօտուց ողորմութեամբ նորա : Զայս եւս բան սաղմոսերդուին յարեն սուրբ Հարք 'ի տրտմութիւն առաքելոցն և որոց ընդ նոսա ընդ մահն Փրխտոսի, և յուրախութիւն նոցա ընդ այգն 'ի յարութիւն նորա :

(4) Այս ինքն 'ի յաջողութիւնս իմ ոչ ածի զմտաւ, զի 'ի քէն է բարութիւն. վասն որոյ խրատեցեր զիս արկանելով զիս 'ի նեղութիւն :

Եթէ ի յերկիր սպասկանութեան անձն իմ իջանէ.
Մինթէ հող լեցի առ քեզ խոստովան,
Եւ կամ պատմեցէ ըշշմարտութիւն քո դի անկենդան։ (1)
Լուաւ ինձ Աստուած եւ ողորմեցաւ,
Եւ յուրախութիւն ըզսուգ իմ դարձոյց եւ յանդորր ըզցաւ։
Ըզսրխուր յինէն եղերգ նա ըզբուրգ,
Եւ ըզցնծութիւն փոխանակ սրգոյ ինձ շուրջ ըզգեցոյց.
Որպէս զի սաղմոս քեզ փառք իմ յաւէտ (2)
Առասցեն ի սպառ մինչեւ ի յեռին կենցաղոյս ի կէտ.
Եւ մի եւս ինձ զիրք լեցի յաւիտեան,
Այլ միշտ անդադար Աստուած իմ առ քեզ լինել խոստովան։

ՍԱՂՄՈՍ ԻԳ

Զի տէր է Աստուած ամենայնի, և անմեղաց տացի մուռն յերկիրս՝ 'ի բանալ զայն փրկչին յաղթանակաւ։

Տեառն է երկիր ըրիւ իւրով, աշխարհ բնակչօքն հանդերձ իւրով.
Ինքն ի վերայ ծովու հիմունս արկ նորա, (1)
Եւ ի վերայ գետոց ընդա պատրաստեաց։
Ո՞վ ելցէ ի լեառն տեառն, եւ կամ ո՞ւմ
Ի սրբարան անդրը նորին տացի մուտ։
Այնմիկ՝ որ սուրբ է ձեռօք,
Այնմ՝ որ ամբիծ է սրտիւ.
Որ ոչ սրտեաց, որ ոչ եղբօր իւրում երդուաւ նենգաւորապէս.
Սա ի տեառնէ զօրհնութիւն, սա անդ ի կեանս յաւիտենից (2)
Ընկալցի յԱստուծոյ փրկչէ իւրմէ զողորմութիւն։
Ազգ բարեբաստիկ՝ ազգ որ խընդրէ զտանել ըզնէր,
Որ զԱստուծոյ Յակոբայ խընդրէ զերեսս տեսանել։

(1) Զի՞նչ լաւ 'ի մահուանէ իմմէ, մինթէ 'ի հողանալ իմում կարիցեմ խոստովան լինել քեզ և պատմել զճշմարտութիւնս քո։

(2) Ի յաջողութեան իմում և 'ի փառս այսուհետև օրհնեցից զքեզ, որով ոչ ևս լեցի ինձ կորուստնել զայն։

(1) Ի վերայ ծովու և 'ի վերայ գետոց հաստատել զաշխարհս, իմա ոչ միայն զկալ նորա 'ի վերայ լոյծ օդոց, այլ և զի ծով և գետք ոչ ողողանեն զայն, և ոչ աւերեն որպէս և այլուր ասէ. «Սահման եդ, և ոչ անցանեն»։

(2) Քանզի արդարն յամենայն կեանս իւր օրհնեալ 'ի տեառնէ, և ապա զերանեանսն ևս ընդունի օրհնութիւն՝ «Նկայք օրհնեալք Հօր իմոյ», և զհատուցումն արդարութեան իւրոյ՝ որ է ողորմութիւն ըստ առաքելոյն. «Շնորհք Աստուծոյ կեանք յաւիտենից». (Հռ. Զ. 23։)

Համբարձէք իշխանք ըզդրունսն ձեր ի վեր, (1)
Ամբարձցին նիգք յաւիտենից, մտցէ փառաց Թագաւոր: —
Ո՞վ է սա Թագաւոր փառաց դիմեալ այսր ի յերկրէ: —
Տէր հզօր զօրութեամբ իւրով, հզօր տէր ի մարտի.
Համբարձէք իշխանք ըզդրունսն ձեր ի վեր,
Ամբարձցին նիգք յաւիտենից, մտցէ փառաց Թագաւոր: —
Ո՞վ է սա Թագաւոր փառաց դիմեալ այսր ի յերկրէ: —
Սա ինքն է տէր զօրութեանց, փառաց սա ինքըն Թագաւոր:

ՍԱՂՄՈՍ ԻԸ

Կանխաւասացողութիւն դարձի հեթանոսաց 'ի ճայն ամենազօր աստուածային բանին:

Մատուցէք որդիք Աստուծոյ զորդիս նրմա ըզխոյց.
Մատուցէք նրմա ըզփառս եւ զպատիւ,
Մատուցէք նրմա զփառս անուան նորա,
Եւ երկիր պագէք նրմա ի սրահի սրբութեան նորա:
Ձայն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց ի ջուրց որոտաց, (1)
Տէր ինքն ի վերայ բազմեալ ջուրց բազմաց.

(1) Հարք առ հասարակ և եկեղեցի սուրբ յամենայն ժամանակի իմացաւ ասա զյաղթական մուտ Քրիստոսի 'ի փառս իւր յաւուր համբարձման: Յերկուս դասս բաժանէ սաղմոսերգուն զերկնաւոր զօրս. կոչէ զառաջաւորքն Քրիստոսի ձայն տան այլոց երկնաւորաց, առնուն և տան պատասխանի: Եւ քանզի եցոյց մարգարէն՝ զյք են արժանի 'ի լեառն տեառն յերկինս երթանելոյ, խրախուսէ արդ ըզնոսա նկարագրութեամբ ելից անդր փրկչին՝ որ երթայ նոցա զերկինս: Վասն որոյ ազդէն կարապետք համբառնալ զդրունս երկնից 'ի վեր 'ի մուտս Թագաւորին փառաց. և յաւելուցեալ զդրունսն զայնոսիկ կոչէն, զի փակեալ կային միշտ «մինչև յայտնեալ ճանապարհի սրբութեանցն» ըստ առաքելոյն (Եբր. Թ. 8.), զի և ոչ արդարք կարէին մտանել անդր: Իսկ բարապանք երկնից պակուցեալ ընդ փառս եկատորին՝ հարցանեն. «Ո՞վ է սա Թագաւոր փառաց». և նոքա յայտ առնեն ըզյաղթութիւն նորա ընդդէմ դժոխոց:

(1) Սուրբ գիրքք բազում ուրեք որոտմամբ զբարբառ տեառն այլաբանեն. (Յոբ. Ա. 4։ Սղմ. ԺԸ. 14. և այլն) իսկ ջուրք որք զվեր որոտման յաջորդեն՝ զժողովուրդս այտ առնեն, ըստ Յայտնութեան, (ԺԷ. 15.) որոց լսելի եղև ձայն տեառն 'ի ձեռն առաքելոց. զի ընդ ամենայն երկիր եղ բարբառ նոցա: Եւ հզօր զօրութիւն ձայնին Աստուծոյ յարդասեաց քարոզութեան նոցա յայտնի եղև: Մեկնիչքն սուրբ գրոց ոչ վարկվարագի ասա զեօթնեկոս երկնութիւն ձայնին համարին, նկատելով 'ի նմա զեօթանեսին խորհուրդս եկեղեցւոյ, և զեօթնարփեան շնորհս Հոգւոյն:

Զայն որոտալոյ տեառնէն զօրութեանց, (1)
Զայն տեառն Աստուծոյ մեծվայելչութեանց.
Զայն տեառնէն ջաղխեալ փշրէ ըզմայրիս, (2)
Մանրէ տէր ըզմայրիս Լիբանանու.
Մանրեսցէ զնոսա զերդ մատաղատունկըն Լիբանանու,
Այն որ սիրելին է որպէս զորդեակիս միեղջերոյ:
Զայն տեառն հատանէ կայծակունս ի հրոյ. (3)
Զայն տեառնէն շարժեալ դղրդէ զանապատ, (4)
Խռովէ զանապատն տէր ըզԿադէս:
Զայն տեառն հատատուն առնէ զեղջերուս, (5)
Եւ զանտառախիտսն յայտնի առնէ: (6)
Փառս ամենեքեան ի տաճարի տեառն ասասցեն նմա.
Տէր ըզջրհեղեղս ընդունուցանէ եւ յարուցանէ. (7)
Թագաւորեսցէ տէր ի յաւիտեան.
Տէր ժողովրդեան իւրում՝ տէր հրզօր տացէ զօրութիւն,
Եւ ըզժողովուրդ իւր տէր օրհնեսցէ ի խաղաղութիւն:

(1) Եւ ապա 'ի կարգ անկեալ բանիւքն զզօրութիւն ձայնին Աստուծոյ բացայայտէ. ձայն տեառն զօրութեանց, « զի կենդանի է բանն Աստուծոյ և ազդող հատու քան զամենայն սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն հոգւոյ և ոգւոյ և յօդից». (Եբր. Դ. 12.) և ձայն տեառն մեծվայելչութեանց, փառաւորեալ զքանչելիսքն և նշանսքն և արուեստիւք:

(2) Մայրեօք Լիբանանու յայտ առնէ որ ինչ բարձր և հզօր ընդդէմ քարոզութեան աւետարանին յարեան, որոց ամենայնի յաղթեաց զօրութիւն բանին Աստուծոյ. ճարտարմտութեան իմաստասիրաց, զօրութեան թագաւորաց, ամպարշտութեան, կռապաշտութեան, ամբարտաւանութեան, և նոցին իակ դրանց գժոխոց: Զայս ամենայն փշրեաց և մանրեաց զօրութիւն աւետարանին որպէս որ զի զմատաղատունկ ընձիւղեալ մայրի մանրեալ փշրեսցէ:

(3) Զի 'ի հրամանէ տեառն և 'ի ձայնէ որոտալոյ նորա հատանին բոցք և կայծակունք 'ի հրոյ: Սուրբ Հաքք իմանան աստանօր զիմաստն Հոգւոյն սրբոյ 'ի վերայ առաքելոց 'ի հնչիւն սաստիկ հողմոյ և 'ի տեսիլ բոցեղէն լեզուաց:

(4) Անապատ զՀեթանոսս կոչեն սուրբ գիրք և այլուր (Եսայ. Լ. 1.) վասն անպտղութեանն. արդ ձայնն Աստուծոյ և քարոզութիւն աւետարանին շարժեաց զնոսա և դղրդեցոյց: Կադէս է անապատ լայնատարը յԱրաբիա, որ կոչի և Փառան:

(5) Զայն տեառն և թեթևընթաց եղջերուաց փախստէից տայ զկայ առնուլ: Այլաբանութիւն մեղաւորաց փախստէից 'ի տեառնէ, որք 'ի ձայն կոչելոյ նորա զկայ առնուն և դառնան առ նա: Որպէս և սաղմոսերգուն որոյ փախստէի զինքն նմանեցուցանէ յասելն. «Ահեղք քո Հարան յիս, և յիս հաստատեցար ձեռն քո»:

(6) Զայն տեառն յայտնի առնէ զանտառս, այսինքն զնեսմաստուեր անտառախիտս լուսաւորէ, 'ի դաշտավայրս զնոսա դարձուցանէ. որ նոյն է ընդ մարգարէին բանի. « Ամենայն ձորք լցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեցին, և եղեցին առաջարքն 'ի դաշտս »:

(7) Տէր է Աստուած հեղեղաց ջուրց 'ի յարուցանել և 'ի ցածուցանել, հզօր է և թագաւորէ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ ԼԵ

Քաղաքս յանդգնութեան ամպարշտին, և երկայնմտութեան և արդարութեանն Աստուծոյ. և ապաշխարել արդարոյ յողորմութիւն նորա :

Ասաց անօրէնն ի մրտի իւրում՝ զի է թէ մեղայց.
Զի չիք առաջի երեսաց նորա երկիւղ Աստուծոյ.
Նենգեաց Բարձրելոյն, անօրինեցաւ, եւ ատեաց ըզնա.
Անօրէնութիւն ի շրթունսս իւր, նենգ ի բերանի,
Չիք ինչ բարութիւն ի սրտի նորա :
Խորհեցաւ երկնեաց զանօրէնութիւն յանկողնի իւրում, (1)
Գրնաց ընդ շաւիղ՝ որ ոչ է բարի,
Եւ ոչ ձանձրացաւ նա ի գործելոյ հանապազ չարիս :
Տէր մինչեւ յերկինս է գթութիւն քո, (2)
Ճշմարտութիւն քո մինչեւ յամպս երկնից.
Արդարութիւն քո զերդ լերինք Աստուած,
Եւ իրաւունք քո որպէս խորք բազումք.
Դու ինքն ըզմարդիկ, դու եւ զանասուն կեցուցանես տէր : (3)
Որպէս զի բազում արարեր Աստուած զողորմութիւն քո.
Այլ որդիք մարդկան յուսացին թեւոց քոց ի հովանի, (4)
Արբեսցին նոքա ի պարարտութիւն տան քո, եւ ատցես
Զուղխսս փափկութեան քո ըմպել նոցա :
Ի քէն, տէր, աղբիւր ի քէն է կենաց. (5)
Եւ լուսով եւեթ երեսացըդ քոց տեսանեմք ըզլոյս.
Ծագեա այնոցիկ զողորմութիւն քո, որ զքեզ ճանաչեն. (6)

(1) Այսինքն երկնեաց գիշերի՝ որ ինչ ի տուէ անօրինելոցն էր :

(2) Տէր, երկայնմտութեան քո 'ի վերայ այսպիսեաց չիք սահման, հասանէ մինչև յերկինս. նոյնպէս և ճշմարտութիւն քո և արդարութիւն :

(3) Սուրբն Աթանաս մարգկաւ զՀրեայս, և անանովք զՀեթանոսս իմանայ. իբր ասել՝ ոչ միայն զկաշինս քո զիսրայէլ ինամարկեցեր, այլ և զգազանամիտ հեթանոսս :

(4) Զինամոցն Աստուծոյ զանհաստանելի մեծութիւն յայտ առնէ, մինչև տալ նոցա յերկնային երանութիւն իւր վայելել :

(5) Զի 'ի ընդհաց եւեթ Աստուծոյ մարթ է եղականաց հաղորդս լինել երանութեան անեղին : Ոչ հոգի մարդկեղէն, և ոչ հրեշտակք կարող են տեսանել զԱստուած զլոյսն անեղական, այլ կարողանան 'ի ձեռն աստուածապարգև ընդհաց, զոր լայ ֆարայ կոչեն աստուածաբանք, վերառեալ յԱստուծոյ 'ի դէմ յանդիման տեսութիւն :

(6) Այսինքն որք հաւատան 'ի քեզ, և սիրեն զքեզ :

Եւ զարդարութիւն քո ուղղոց սրբութիւք։
Մի ի վերայ մեր մի եկեսցէ ոտն ամբարտաւանից, (1)
Եւ մեղաւորաց մարդկան ըզմեզ ձեռք մի դողացուսցեն։
Անդ ամենեքեան անկցին ոչք գործեն զանօրէնութիւն.
Մերժեսցին եւ այլ մի եւս հաստատել կարասցեն եւ կալ։

ՍԱՂՄՈՍ ԽԱ.

Իղձք հոգւոյ զերծանիլ 'ի կարեաց աստի մարմնոյ, և լինել ընդ Աստուծոյ. վարանք հորա, և յոյս առ Աստուած։

Որպէս փափաքէ եղջերու յաղբերսս ջուրց ծարաւեալ, (1)
Այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ տէր.
Անձն իմ ծարաւի է առ քեզ Աստուած,
Աստուած իմ հզօր, Աստուած կենդանի.
Ե՞րբ լեցի ինձ դալ երեւեալ առ քեզ։
Եղեն արտասուք իմ ինձ կերակուր ըստ եւ զգիշեր,
Յասել թշնամեաց ինձ զօրհանապազ՝ ո՞ւր է Աստուած քո։ (2)
Զայս մինչ յիշէի, տարապէր անձն իմ.
Քաջալերեի մերանել ի տուն Աստուծոյ իմոյ,
Հանդէսել ընդ յարկաւ ըստանչելահրաշ տաճարի նորա,
Ի ձայն ցընծութեան խոստովանութեան,
Եւ ի ձայն յաւէրժ փառաբանութեան։
Արդ ընդէր տրտում ես դու ով անձն իմ, եւ զմի՞ խռովես զիս.
Յուսա առ Աստուած եւ խոստովանեա,
Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։ (3)
Անձն իմ խռովեցաւ յոյժ, վասն այնորիկ յիշեցի ըզքեզ (4)

(1) Այսինքն դէք ամբարտաւանք և մարդիկ մեղաւորք մի ևս գայթակղեցուցեն զմեզ 'ի ճանապարհէ ճշմարտութեան, անկեալ ինքեանք և կործանեալ անյարիր։

(1) Որպէս եղջերու թեթեւընթաց 'ի ստէպ արշաւելոյ պապաքեալ՝ հառաչէ առ աղբիւրս ջուրց։

(2) Հոգի աստուածասէր զվորձ առեալ վանագաց կենցաղոյս և նեղեալ 'ի հոգւոր վշտաց, աղաղակէ ընդ առաքելոյն. «Ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ սատի մահու»։ Այլ բանսարկու թշնամին փորձէ վհատեցուցանել զնա պէսպէս խորհրդովք. և նա յայնժամ քաջալերէ զանձն՝ յուսացեալ առ Աստուած, որպէս նկարագրէ սաղմոսերգուն։

(3) Փրկիչ երեսաց իմոց, այսինքն անձին իմոյ. որպէս (Բ. Թգ. ԺԸ. 11.) Բուսի արքացի առ Աբեսողոմ ասէ. «Քո երեսք երթիցեն 'ի մէջ նոցա»։

(4) Ի խռովել անձին իմոյ՝ յիշեմ առ 'ի քաջալերութիւն զբարերարութիւնս քո, զորս արարեր ժողովրդեան քում յերկիրն Յորդանանու և 'ի Հերմոն։

Յերկրէն՝ ընդ որ Ձեմ առնու Յորդանան,
Եւ ի Հերմոնէ ի լեռնէ փոքուէ։
Խորք խորոց եղեն ձայնատուր ի ձայն սահանացրդ քոց, (1)
Ամենայն ալիք քոյին եւ զբօսանք յորդեցին զնեւ։
Ի տուէ պատուիրեաց տէր զողորմութիւն իւր, ի գիշերի
Երգեցից նմա օրհներգութիւն նոր։
Եւ վասն կենաց իմոց առ Աստուած յաղօթիս կացից։
Ասացից նմա։ ընդունող իմ ես, ընդէր մերժես զիս,
Եւ ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոց։
Ի փշրել ի սպառ ոսկերաց իմոց (2)
Թշնամանեցին թշնամիք իմ զիս,
Ըզաբերանք յասել ցիս զօրհնանապաղ՝ ուր է Աստուած քո։
Արդ ընդէր տրտում ես դու ով անձն իմ, եւ զմէ խռովես զիս։
Յուսա առ Աստուած եւ խոստովանեա,
Փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

ՍԱՂՄՈՍ ԽԴ

Երգ հարսանեկան 'ի դեմս Քրիստոսի և եկեղեցւոյ, նկարագրութեամբ փեսայիին երկնաւորի և հարսին։

Սիրտ իմ ըզպատգամս քո բղխեսցէ պատգամս բարիս, (1)
Ասացից ըզգործս իմ թագաւորի,
Շարժեալ ըզլեզու իմ իբր ըզգրչի գրիչ արագագրի։ (2)
Գեղեցկատեսիլ դու քան զամենայն որդիս ես մարդկան։ (3)

(1) Խորք, ալիք, զբօսանք, սահանք՝ նշանակեն ստէպ 'ի սուրբ գիրս՝ վիշտս, աղէտս և փորձութիւնս. վասն որոյ ասէ. 'ի հրամանէ քումմէ հասին 'ի վերայ իմ վիշտք և անձկութիւնք, այլ յողորմութենէ քումմէ 'ի միում աւուր մարթ է նոցա դադարել, և ինձ օրհնել զբարերարդ։

(2) Խորտակմամբ ոսկերաց ցուցանէ զսաստկութիւն վշտացն՝ որոց համբերէ, նախատանաց և թշնամանաց։

(1) Աստուծոյ 'ի սկզբանէ խոստանայ մեծ իմն երգել, և ուղերձէ զերգ իւր առ Քրիստոս թագաւոր։

(2) Զլեզու իւր նմանեցուցանէ գրչի արագագիր դպրի. զի ինքն գործի միայն է 'ի գրել զթելադրեալս 'ի Հոգւոյն, որ արագարագ ազգէ անկարօտ խորհելոյ։

(3) Սկիզբն 'ի գովութեանց փեսային առնէ. և որպէս սուրբ Ոսկեբերանն ազդառնէ, զգեղեցկութիւն նորա գեր 'ի վերոյ քան զամենայն մարդկան առաւել ևս ըստ նեղբին կատարելութեանցն է իմանալ, որպէս այն՝ որ ասէ. «Տեսաք ըզփառս նորա իբրև զմածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ». (ՅՀ. Ա. 14) Եւ որպէս առաքեալն ասէ. (Եբր. Է. 26։) «Զի այսպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս»։

Սրփուհեցան շնորհք ի շրթանցդ քոց, (1)
Եւ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան։
Ա՛ծ զքսուր քոյին ընդ մէջ քո հզօր (2)
Զգվայելչութեան եւ զգեղոյ քո.
Լարեա եւ ուղղեա եւ թագաւորեա,
վասն հեզութեան քո ճշմարտութեան եւ արդարութեան.
Եւ սքանչելապէս առաջնորդեսցէ քեզ, տէր, աջ քոյին։
Նետք քո սայրասուր սրբեալ են, հզօր,
ի սիրտ թշնամեաց դիմել արքայի. (3)
Եւ անկցին ընդ քեւ ազգք եւ ժողովուրդք։
Աթոռ քո, Աստուած, կացցէ յաւիտեան. (4)
Կացցէ գաւազան արդարակորով արքայութեան քո.
Քանզի սիրեցեր դու զարդարութիւն,
Ատեցեր ի սպառ զանօրէնութիւն.
Վասն այն առաւել քան զընկերսն քո օծ զքեզ, Աստուած, (5)
Աստուած քո զքեզ յիւղ ուրախութեան։
Կասիա եւ զմուռ բուրէ եւ ըստաշնն ի զգեստս քումմէ,
Ի փղոսկրէից առեալ տաճարաց, (6)
Ուր զքեզ զբստերբք թագաւորազունք

(1) Սրփուհեցան շնորհք ի շրթանց քոց. այս այն է՝ զոր առաքեալն ասէ. (Ղկ. Դ. 22.) «Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհաց՝ որ ելանէին ի բերանոյ նորա». և սոյն իսկ շնորհք բանից ամենայն ուրեք ի սուղ ժամանակի սփռեալ՝ լցին զտիեզերս։ Վասն որոյ և Հայր օրհնեաց զնա ամենայն օրհնութեամբք, որպէս զի ի նմա օրհնեսցին և ամենայն ազգք, որպէս խոստացեալն էր Աբրահամու։

(2) Եւ քանզի թագաւորս այս գայր պատերազմել ընդ դժոխս, և ազատել զՀարան իւր յիշխանութենէ նորա, վասն այն հրաւիրէ զնա ի սպառազինութիւն, լարել զաղեղն իւր, հարկանել զթշնամին, և թագաւորել հեզութեամբ ճշմարտութեամբ և արդարութեամբ, ընդ հակառակն բանսարկուին՝ որ բռնութեամբ ստութեամբ և անիրաւութեամբ թագաւորէին։

(3) Ի սիրտ թշնամեաց արքայի, այսինքն թշնամեաց քոց՝ որպէս սովորութիւն է գրոց յերրորդ դէմն ասել։

(4) Զայս տուն սաղմոսիս ածէ առաքեալն առ Եբրայեցիս (Ա. 8.) ի վկայութիւն անանց թագաւորութեանն Քրիստոսի։

(5) Սուրբ գիրքս զԲանն մարդացեալ Քրիստոս կոչէն, այսինքն օծեալ. և ինքն իսկ փրկիչն մեր ի տաճարին, յորժամ եւտուն նմա գիրս զնեայեայ մարգարէի, եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն էր. «Հոգի տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս»։ Եւ առաքելապետն ասէ. (Գործ. Բ. 36.) «Ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի և տէր զնա և օծեալ Աստուած արար»։ Արդ սաղմոսերգուն զայս օծումն Բանին ի Հոգւոյն ոչ իբրև զայլոց ի մարդկանէ ասէ լեալ, այլ առաւել քան զամենայն թագաւորաց, քահանայից, մարգարէից, առաքելոց, և ընտրելոց Աստուծոյ։

(6) Տաճար կամ տուն փղոսկրեայ յիշատակի ի սուրբ գիրս (Գ. Թգ. ԻԲ. 3. 9.) յայսպիսեաց տաճարաց ասէ առեալ զանուշահոտ զգեստս փեսային երկնաւորի։ Զոր ի գեղ է իմանալ ի պահպանանց փղոսկրիւ պատելոց. որպէս և կէսք ի թարգմանութենէն ասեն տպիղ փոխանակ տաճարի։

Ուրախ արարին ի պատիւ քոյին։
Ընդ աջմէ քումմէ կացցէ յոսկեհուռ
Դըշխոյ ի հանդերձըս գեղազարդեալ։ (1)
Խոնարհեցո դուստր առ իս զունկըն քո,
Լուր և տես, մոռա զժողովուրդ քոյին եւ ըզտուն հօր քո։
Քանզի ցանկացաւ արքայ գեղոյ քո։
Սա ինքն է տէր քո, երկիր պագ սմա։
Եւ դուստրը Ծուրայ երկիր եւ նա ինքն պագցէ սմա։
Եւ պատարագօք զերեսըս սորա
Պաշտեսցեն աւագք ի Ժողովրդոց։
Ահեղայն իւր փառք դրստեր արքայի թագուհի ի ներքոյ (2)
Ինքն ի վերջաւորս ոսկեհուռ պըճնեալ։
Օրիորդք ըզհետ նորա մատուցին կուսանք արքայի, (3)
Եւ ընկերք նորա մատուցին նմա։
Աճցին ցընծութեամբ եւ ուրախութեամբ,
Տարցին յապարանըս թագաւորի։
Եւ հարց քոց փոխան լիցին որդիք քո։ (4)
Կացուցցես իշխանս ըզնոսա 'ընդ երկիր։
Յիշեսցի անուն քո ընդ ազգս ազգաց։
Յաղագս այսորիկ խոստովան լիցին
Ժողովուրդք առ քեզ յաւիտեանս յաւէտ։

---

(1) Դշխոյս այս է եկեղեցի սուրբ, և ոսկեհուռ զարդք նորա՝ շնորհք Հոգւոյն։ Ամբ սաղմոսերգուն յորդորէ զնա մոռանալ զազգ և զտուն հօր իւրոյ, զի թագաւորն երկնաւոր կոչէ զնա 'ի հարսնութիւն և 'ի փառս անճառելի. և ցուցանէ զազգս, յորոց եկեղեցի սուրբ ժողովեալ է։

(2) Դուստր թագաւորի կոչէ արդ զեկեղեցի, զի մինչև հարսնացեալ Քրիստոսի՝ փրկեցաւ նովաւ. վասն որոյ միանգամայն և դուստր է Քրիստոսի թագաւորին։ Եւ զամենայն փառս նորա ասէ ծածկեալ 'ի ներքոյ, որպէս նորահարսին ընդ քօղով. և այս փառք նորա թագունք՝ են հաւատք յոյս և սէր, զոր 'ի վերոյգ քան զամենայն փառս նորա արտաքինս՝ որ 'ի զարդուց։ Սուրբն Օգոստինոս արտաքին զարդս նորա համարի զարարողութիւնս և զհանդէս եկեղեցականս։

(3) Օրիորդքս այսորիկ կուսանք՝ հոգիք արդարոց են, որք զհետ գնան եկեղեցւոյ, զորոց ասէ առաքեալն (Բ. Կոր. ԺԱ. 2.) «Խօսեցայց զձեզ առն միում, իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի»։ Բստ այսմ օրինակի հոգիք միացեալք ևեթ ընդ եկեղեցւոյ ածցին 'ի տաճար տեառն յերկնաւոր հարսանիս։

(4) Փոխանակ հարց, այսինքն նահատակաց և մարգարէից, եղեն առաքեալք և յաջորդք նոցին՝ որդիք եկեղեցւոյ Քրիստոսի. և իշխանք 'ի նմանէ կացեալ ընդ ամենայն երկիր, հովուել զհօտ նորա. որով անուն նորա յիշեսցի յազգաց յազգս, և ազգք և ազինք խոստովան լիցին նմա մինչև յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ ԽԵ

Աղաչիւնորհիւն Իսրայելի առ Աստուած 'ի դէմս եկեղեցւոյ, և օգնականութեամբ նորա անհերկեւանութիւն յամենայն վտանգից և 'ի բշնամանաց :

Աստուած ապաւէն մեր եւ զօրութիւն,
Օգնական ի վիշտս՝ որ գտին զմեզ.
Ոչ երկիցուք մեք ի խռովել երկրի, (1)
Ի փոխել լերանց ի սիրտս ծովու :
Գոչեցին ալիք եւ խռովեցան ջուրք, (2)
Խռովեցան լերինք ի սաստէ նորա .
Խոխոջանք գետոց ուրախ ըղձաղաքն առնեն Աստուծոյ,
Եւ Բարձրեալն ըզյարկըս իւր սուրբ արար :
Աստուած ի միջի նոցա, եւ նոքա մի սասանեսցին.
Օգնեսցէ նոցա ի վաղորդենէ մինչ ի վաղորդայն. (3)
Խռովեցան ահիւ սարսեալ հեթանոսք, (4)
Եւ խոնարհեցան թագաւորութիւնք.
Եւ Բարձրեալն ըղձայն իւր, և զարհուրեալ խռովեցաւ երկիր :
Մարտակից ընդ մեզ է տէր զօրութեանց,
Ընդունող է մեր Աստուած Յակոբայ :
Ինքն ըզպատերազմ եհար ի ծագաց մինչ ի ծագս երկրի,
Փըշրեաց զաղեղունս, ըզզէնս մանրեաց,
Եւ այրեաց ի հուր ըզզրահ եւ զասպար :
Եկայք ծաներուք զի ես եմ Աստուած, (5)
Բարձր ի հեթանոսս եղէց, բարձրացայց ի վերայ երկրի.
Մարտակից ընդ մեզ է տէր զօրութեանց,
Ընդունող է մեր Աստուած Յակոբայ :

(1) Այս ինքն 'ի վեր 'ի վայր հարկանել երկրի, մինչև փոփոխել լերանց 'ի ծով, մեք 'ի տէր ապաստան՝ ոչ մինչ երկիցուք :

(2) Զհաղածանս եկեղեցւոյ յերեսաց Հրէից և հեթանոս պետութեանց՝ նմանեցուցանե մրրկաց ծովու և ուղխից գետոց, յորս քաղաքն Աստուծոյ եկեղեցի սուրբ թէպէտ և ալեկոծեալ՝ այլ պայծառանայ և սրբի :

(3) Այս ինքն կանխեսցէ, վաղ ընդ փոյթ հասցէ Աստուած յօգնականութիւն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ :

(4) Այլ ընդհակառակն 'ի սաստել Բարձրելոյն՝ նոքին խակ հեթանոսք խռովեցան, զահի հարան, և նուաճեցան ընդ տերութեամբն Քրիստոսի :

(5) Եկայք տեսէք սրպէս Հարի կործանեցի զկռապաշտութիւն և զամպարշտութիւն, բարձի զթշնամութիւն ազգաց, և յամենեցունց անտի ժողովեալ կանգնեցի զեկեղեցի, և ծաներուք զի ես եմ Աստուած : Զաղեղունս փշրել, ըզզէնս խորտակել, և զասպարս այրել, այս ամենայն յայտ առնեն զբարձումն թշնամութեան :

ՍԱՂՄՈՍ ԾԱ.

Յանդիմանութիւն ամպարշտի 'ի դէմս Դաւիկայ՝ որոյ գրգռեալ էր զՍաւուղ ընդդէմ Դաւթի, և յաջողութիւն արդարոյ յուսացելոյ 'ի տէր :

Զի՞ ի զօրութեան յանօրէնութիւն իւր պարծի հրզօր, (1)
Կրելով ի շրթունսն զօրհանապազ անիրաւութիւն,
Որպէս ածելի սրբեալ սայրասուր ըզլեզու ի նենգ :
Սիրեաց ըզչարիս քան ըզբարութիւն,
Սիրեաց զամենայն խօսս կործանման ըզշրթանց հրապոյր :
Վասն այսորիկ տէր եղծցէ զնա ի սպառ, (2)
Խլեսցէ եւ հանցէ ի յարկաց իւրոց,
Եւ զարմատ նորա յերկրէն կենդանեաց :
Տեսցեն զայն արդարք եւ զարհուրեսցին,
Եւ ծաղր ըզնովաւ արարեալ՝ գոգցեն.
Այս այր է որ ոչ իւր ըզտէր Աստուած արար օգնական,
Այլ ի մեծութիւնս իւր յուսացաւ, (3)
Այլ ի նանրութիւն եղեւ ապաստան :
Այլ ես ձիթենի գոգցես պըտղալից ի տան Աստուծոյ,
Զի յողորմութիւն նորին յուսացայ,
Մինչեւ յաւիտեան եւ ի յաւիտեանս յաւիտենից.
Խոստովան եղէց քեզ տէր յաւիտեան, զի դու արարեր.
Եւ անուանըդ քում հաստեալ ի սպառ,
Զի քաղցր է սրբոց քոց քեզ ըստասել :

---

(1) Գանգի Դաւիկ զեղծեալ համարձակութեամբն առաջի Սաւուղի, մինչև ըզքահանայս իսկ եւս մատնել 'ի մահ :

(2) Նախապատմէ որ ինչ ապա պատուհասաք հասին Դաւիկայ վասն չարեացն հրապուրանաց :

(3) Դաւիկ էր փարթամագոյն 'ի հովիւս Սաւուղի :

ՍԱՂՄՈՍ ԾԹ

Իսրայէլ կարդայ առ Աստուած ընդդէմ այլազգեաց 'ի դէմս եկեղեցւոյ :

Աստուած մերժեցեր եւ աւերեցեր զմեզ, բարկացար (1)
Եւ դարձեալ անդրէն գթացար ի մեզ.
Շարժեցեր զերկիր եւ խռովեցուցեր. (2)
Դարձիր բժշկեա զհարուածս սորա, զի սասանեցաւ :
Ցուցեր խրատութիւն ժողովրդեան քում,
Եւ արբուցեր մեզ բաժակ դառնութեան.
Տալ հետուր նշան երկիւղածաց քոց, (3)
Ապրել յերեսաց նովաւ աղեղան :
Որպէս փրկեցան սիրելիք քո տէր,
Կեցո աջով քով, կեցո եւ լուր մեզ:
Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ. Բարձր եղէց,
Եւ բաժանեցայց ըստ Սիւքեմ եւ զձորս յարկաց չափեցից. (4)
Իմ է Գաղաադ եւ իմ Մանասէ, (5)
Իմ՝ զբլրոյ խմոյ Եփրեմ հրազօրիչ.
Ցուդա թագաւոր իմ, յուսոյ խմոյ Մովաբ աւազան. (6)
Յեդոմն ընդդէմ ոտինս ուղղեցից, (7)

(1) Մերժեցեր զմեզ թողլով 'ի ձեռս փղշտացւոց, մովաբացւոց, և եդոմայեցւոց, զի բարկացեալ էիր 'ի վերայ մեր :

(2) Դիմանութեամբ սասանութեան երկրի յայտ առնէ զհարուածս ժողովրդեան Իսրայելի :

(3) Կանխէ Աստուած նշանօք յայտ առնել երկիւղածաց իւրոց զբարկութիւն իւր, որպէս զի խոյս տուեալ փրկեսցին սիրելիք իւր : Աղեղամբ յայտ առնէ զբարկութիւն Աստուծոյ, ուստի ոստնուն նետք պատուհասից ընդդէմ մեղաւորաց : Դիմանալ ասասնօր զնշան սրբոյ խաչին իմմանն սուրբ Հարք, որով փրկիմք յերեսաց աներևոյթ թշնամեաց, որպէս բազում ուրեք 'ի ժամերգութիւնս մեր և 'ի շաբաթանս նուագեմք :

(4) Սիւքէմ քաղաք 'ի Սամարիա, և այլ ամենայն քաղաքք յիւրատակեալք ասա՝ յայտ առնեն ըստ նկարագրին զանշարհակալութիւնս Դաւթի՝ որովք ընդարձակեաց զսահմանս թագաւորութեանն Իսրայելի. իսկ օրինակաւ յայտ առնեն զեկեղեցի Քրիստոսի, որոյ իշխանութիւն տարածեցաւ 'ի վերայ ամենայն ազգաց :

(5) Այս ինքն իմ է երկիր Գաղաադու և Մանասէի, և Եփրեմ զօրավիգն է պետութեան իմոյ՝ զօրավարս քաջս տալով ինձ և զօրս պատերազմողս :

(6) Զի 'ի ցեղէն Յուդայ 'ի Դաւթէ ելն Քրիստոս : Իսկ աւազան յուսոյ կոչել զՄովաբ, ակնարկէ 'ի սովորութիւն նախնեաց արկանելոյ զվիճակս յաւազան, և անտի հանելոյ. վասն որոյ այլաբանութեամբս այսուիկ յայտ առնէ զայս իւր, զի և երկիրն Մովաբայ առհասարակ ելցէ նմա 'ի վիճակ :

(7) Յեդոմն, իմա 'ի տրական հոլով, այսինքն յԵդոմ՝ սրպէս և 'ի ստորև. և իմաստքն են՝ յԵդոմ ևս հասից, և հնազանդեցից զնա :

Եւ ինձ այլազգիք հընազանդ լեցին։
Ո՞ զիս տանիցի ի քաղաք ամուր, (1)
Կամ ո՞ ոք ինձ անդր առաջնորդեսցէ մինչեւ Յեդոմն։
Թէ ոչ դու Աստուած՝ որ զմեզ մերժեցեր,
Եւ չելեր Աստուած դու ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնութիւն տէր ի նեղութեան,
Զի է ընդունայն փրկութիւն մարդոյ։
Լիցի մեզ տէրամբ առնել զօրութիւն։
Նա ինքն ըզնոսա, որ նեղեն ըզմեզ, ընկճեսցէ ի սպառ։

ՍԱՂՄՈՍ ԿԴ

Զի վայել է Աստուծոյ օրհնութիւն վասն բարերարութեանցն իւրոց առ եկեղեցի սուրբ, և կանխատեսութիւն կոչման հեթանոսաց։

Քեզ վայելէ, տէր, օրհնութիւն ի Սիոն, (1)
Եւ քեզ աղօթք ի տաճարի քում մատուցցին Յերուսաղէմ։
Լուր աղօթից իմոց տէր,
Զի ամենայն մարմին առ քեզ եկեսցէ։ (2)
Զօրացան բանք անօրինաց ի վերայ մեր, (3)
Դու զմեղս մեր քաւեսցես։
Երանի զորս ընտրեցեր եւ ընկալար,
Եւ ի դաւիթս քո բնակեն։
Լցցուք մեք վայելչութեամբ բարեաց տան քո։ (4)
Սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ։
Լուր մեզ Աստուած փրկիչ մեր

(1) Քաղաք ամուր ոմանք իմանան զՎէմ մայրաքաղաք Եդոմայեցւոց. այլք ըզՀռաբաթ ամմոնացւոց։ Օգնականութեամբն Աստուծոյ յուսայ տիրել և անդ, նուաւ կանգնել յաղթութիւն, և զամենայն թշնամիս Իսրայելի՝ այսինքն եկեղեցւոյ՝ նուաճել։

(1) Ի Սիոն և Յերուսաղէմ, այսինքն յեկեղեցւոջ. զի արտաքոյ եկեղեցւոյ Քրիստոսի ոչ աղօթք և ոչ օրհնութիւնք են ասատուածահաճոյ։

(2) Զի առ քեզ ամենայն մարմին, այսինքն ամենայն մարդիկ եկեսցեն. որպէս մարգարէութիւն ասէ (Յովել. Բ. 28.) « Հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ »։

(3) Ի դիմաց հեթանոսաց դարձելոց առ Աստուած խօսի. բանք անօրինաց հարց մերոց զօրացան 'ի վերայ մեր, և ամպարշտեցաք 'ի պաշտամունս կռոց, այլ դու զամպարշտութիւնս մեր քաւեսցես։

(4) Երանի զորս են յեկեղեցւոջ Քրիստոսի, և հաղորդս ցանկալ լինել բարութեանցն՝ որ 'ի նմա, այսինքն խորհրդոց սրբոց և շնորհաց։

Յոյս ամենայն ծագաց երկրի եւ որ ի ծով բնակեն հեռի.
Ո՞ զերինըս զօրութեամբ իւրով հաստատեմուս (1)
Եւ է զգեցեալ զօրութիւն.
Ո՞ զմեծութիւն ծովու խռովէ, եւ զձայն ալեաց նորա նուաճէ:
Խռովեացին ազգք, ի նշանաց քոց երկիցեն բնակիչք երկրի.
Յելս առաւօտու եւ ընդ երեկիս զուարճացուցեր.
Հայեցար յերկիր եւ զնա արբեցուցեր,
Եւ զմեծութիւն նորա բազում արարեր:
Գետն Աստուծոյ լի եղեւ ջուրբ, (2)
Դու զկերակուր նորա պատրաստ արարեր,
Զի այսպէս է պատրաստութիւն նորա ի քէն.
Զակօս նորա արբեցուցեր, (3)
Եւ զարմրտիս նորա բազում արարեր:
Ի ցօղել ամպոց ի նա՝ զուարթ եղիցի բոյս նորա,
Օրհնեսցի պըսակ տարւոյ քաղցրութեան քո: (4)
Դաշտք քո լցցին պարարտութեամբ, (5)
Պարարտացին գեղեցկութիւնք անապատի.
Բլուրք ցընծութիւն ըզգեցցին, եւ զգեցցին խոյք հօտից մաքեաց.
Հովտք բազում բերցին ցորեան, աղաղակաւ օրհնեսցեն: (6)

---

(1) Յետ կոչելոյ զնա յոյս ամենայն ծագաց երկրի, ցուցանէ որովհետեւ անդիմադարձ զօրութեամբ զբարոզութիւն աւետարանին ծաւալեցոյց ընդ տիեզերս՝ յաղթեալ զխոչ և զխութ, և քանի՞ առատութեամբ զպարգեւս իւր եհեղ՝ ի սուրբ եկեղեցի:

(2) Գետ Աստուծոյ կոչէ զՅորդանան՝ որ ոռոգանէր զերկիրն Պաղեստինու, որպէս թէ պատրաստեալ նմա կերակուր. իսկ այլաբանօրէն գետ Աստուծոյ նշանակէ զՀոգին սուրբ, որ զեղու զշնորհս իւր յեկեղեցի:

(3) Աւօ«ի երլրէ են ջրադարձք կամ առուք, որ ի գետոյ անտի առեալ զջուր ածեն յարքունի բուսոց. և այլաբանօրէն նշանակեն զառաքեալս և զյաջորդս նոցա, որ ի Հոգւոյն սրբոյ ընկալեալ զշնորհս՝ բաշխեն հաւատացելոց:

(4) Պսակ տարւոյ է պարառութիւն նորին, լրումն բոլորումն ամի, և նշանակէ զտեւողութիւն սրբոյ եկեղեցւոյ, յորում ոչ պակասեսցէ օրհնութիւն Աստուծոյ մինչև ի կատարած աշխարհի:

(5) Այս ինքն անապատք գեղեցկացին բուսովք ի ցօղել ամպոց, և այլաբանի յեկեղեցի ըստ բացատրելոյ՝ շարականին. «Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց Հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ, պարարտացան դաշտք արդարութեամբ, և գեղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ». այս ինքն կուսակրօն կարգք միանձանց:

(6) Այս ինքն հաւատացեալք առ Հասարակ, այսպանեօք բարեբարութեամբքն Աստուծոյ լցեալք, ձայն բարձեալ օրհնեսցեն զԱստուած:

ՍԱՂՄՈՍ ԿԷ

Ցաղրաւակ Քրիստոսի և եկեղեցւոյ ըստ օրինակի յաղթութեանն, զոր արար Աստուած 'ի հանել զժողովուրդ իւր յԵգիպտոսէ. և դարձուցանել առաքելոց զհերանոսս առ Աստուած :

Ցարիցէ Աստուած, եւ հալածեսցին թշնամիք նորա. (1)
Փախիցեն ի բաց ատելիք նորա յերեսաց նորա.
Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին,
Որպէս հալի մոմ առաջի հրոյ՝
Այնպէս կորիցեն մերժեալ յերեսաց տեառնէն մեղաւորք :
Ուրախ եղիցին արդարք, ցընծասցեն առաջի նորա,
Եւ յուրախութեան իւրեանց զուարճասցին.
Օրհնեցէք զԱստուած, եւ անուան նորա սաղմոս ասացէք.
Պատրաստ արարէք ճանապարհ այնմիկ
Որ ընդ արեւմուտս բազմի, եւ տէր է անուն նորա : (2)
Ցընծասցեն արդարք առաջի նորա,
Եւ խռովեսցին ջրք յերեսաց նորա.
Որ հայրն է որբոց, դատաւոր այրեաց, (3)
Աստուած 'ի տեղւոջ սրբութեան իւրում, (4)
Բնակեցուցանէ զմիակրօնս ի տան,
Եւ հանէ զկապեալս քաջութեամբ իւրով, (5)

(1) Սկիզբն սաղմոսիս առեալ է 'ի թուոց (Ժ. 35.) 'ի մովսիսական երգէն որ 'ի չու տապանակին նուագէր. « Արի տէր, և ցրուեսցին թշնամիք քո, փախիցեն ամենայն ատելիք քո » : Որով յայտ առնէ սաղմոսերգուն, զի հանդէպ ինչ պատերազմին՝ որ ընդդէմ Ամաղեկայ՝ նուագելոց է, այսինքն զյաղթութիւնն Քրիստոսի ընդդէմ դժոխոց :

(2) Բազմել ընդ արեւմուտս, նստել յարևելս, շրջել ընդ ամպս, և այլ ամենայն այսպիսի բանք գրոց նշանակեն զփառս Աստուծոյ յերկինս :

(3) Հայր որբոց և դատաւոր այրեաց բազում ուրեք կոչեն գիրք զԱստուած, առ 'ի յայտ առնել զմարդասիրութիւն նորա և զզթութիւն 'ի վերայ տկարութեան մարդոյ :

(4) Տեղի սրբութեան, ժառանգութիւն Աստուծոյ, լեառն սուրբ, տաճար տեառն և այլն նշանակեն զեկեղեցի Քրիստոսի. և բնակեցուցանել անդ զմիակրօնս՝ յայտ առնէ զմի հաւատս և զմի միաբանութիւն հաւատացելոց 'ի Քրիստոս :

(5) Հանել զկապեալս է ազատել Քրիստոսի զհոգիս արդարոց, որ արգելեալ կային 'ի բանտի. իսկ զդառնացօղս հանել 'ի գերեզմանաց՝ յայտ առնէ զազատութիւն հեթանոսաց 'ի մեռելութենէ, որք 'ի խաւարի կռապաշտութեան որպէս 'ի գերեզմանս կային :

Հանէ զդառնացօղս ի գերեզմանաց՝ ուրանօր բնակէն։
Տէր ընդ ելանելոն քում առաջի Ժողովրդեան քո, (1)
Եւ ընդ անցանել քեզ ընդ անապատ, երկիր շարժեցաւ,
Ցօղեցին յայնժամ երկինք յերեսաց քոց տէր 'ի Սինէ։
Անձրեւ երկնառատ պատրաստեցեր դու ժառանգութեան քում։
Թէպէտ խօթացաւ, այլ հաստատեցեր դու զնա վերըստին։ (2)
Եւ դալանք քո, տէր, բնակեսցէն ի նմա։ (3)
Պատրաստ արարեր քաղցրութեամբ քո Ճաշ աղքատի, Աստուած։ (4)
Տէր տացէ ըզբան աւետարանչաց զօրութեամբ բազմաւ։ (5)
Տես, ով սիրելւոյ քո Իսրայելի թագաւոր հրզօր,
Ըզգեղեցկութիւն տան քո բաժանեալ առեալ յաւարի։ (6)
Թէպէտ նընջեսջիք ի մէջ վիճակաց, (7)
Թեւք ձեր աղաւնոյ թեւք արծաթապատ,
Եւ ի գոյն ոսկւոյ թիկնամէջք նորա։
Ի համախըմբել երկնից արքայն
Անդր ըզթագաւորս ի վերայ նորա,
Ձիւնասցին զերդ ձիւն տեղեալ ի Սաղմոն, (8)

(1) Նկարագրէ զելս հեթանոսաց 'ի գերութենէ դժոխոց, օրինակաւ ելից Իսրայելի յԵգիպտոսէ. անդ շարժումն երկրի և ամենայն ինչ նիւթական, իսկ աստ շարժումն հոգւոր՝ որով կերպարանափոխ եղեն տիեզերք. անդ ցօղ և մանանայ, իսկ աստ շնորհք Հոգւոյն տեղացեալ յերկիր։

(2) Բազում հալածանս կրեաց եկեղեցի սուրբ, որպէս Իսրայէլ պատերազմունս 'ի յանապատի. այլ յամենայնէ փրկեաց զնա տէր, որպէս 'ի հիւանդութենէ հաստատեալ զնա յառողջութիւն։

(3) Այսինքն հեթանոսք գազանամիտք եկին 'ի փարախ Քրիստոսի զգօնացեալք, և բնակեցին 'ի ժառանգութեան նորա։

(4) Բանդի Քրիստոս մարգարէութեամբ իւրով պատրաստեաց յեկեղեցւոջ իւրում Ճաշ անմահական մեզ կարօտելոցս դերագոյն քան զիւղ և զմեղր աւետեաց։

(5) Զի ինքն Քրիստոս յառաքեալս իւր ազդէր Հոգւովն սրբով, որպէս և ասացն իսկ ցնոսա. (Մտթ. գ. 20.) «Զի ոչ եթէ դուք խօսիցիք՝ որ խօսիցի 'ի ձեզ»։

(6) Գեղեցկութիւն տանն Աստուծոյ կոչէ զտապանակն, և խնդրէ 'ի տեառնէ պաշտպանել զայն. քանզի պյլազգիք աւար առեալ զայն տարան նախ յԱզովտոս, և անտի 'ի Գէթ, անտի յԱսկաղոն, և ապա յանդաստանս, որպէս թէ բաժանեալ զայն յիրեանս։

(7) Վէճաւ նշանակէ և վանդ, զի ըստ բախտի են ելք նորա. որպէս ասի 'ի սուրբ գիրս (Ղաւուտ. գ. 10.) «Ի վերայ ամենայն պատուականաց նորա վիճակս արկանիցեն», առ 'ի մահ։ Վասն որոյ սաղմոսերգուն ասէ աստ 'ի դէմս առաքելոց. թէպէտ և գտանիցիք 'ի վանդս, զերծանիցիք անտի անվնաս, և սրբեալք սպիտակափայլ իբրև զաղաւնի։ Եւ ապա 'ի հաւատացեալս դարձուցանէ զբանն, և զնոցա սրբութիւն 'ի հալածանս՝ զոր կրեցին յերեսաց թագաւորաց՝ նմանեցուցանէ ձեան։

(8) Ի Սաղմոն լեառն պյլաբանէ զեկեղեցի, և զառատութիւն շնորհացն Աստուծոյ 'ի նմա յայտ առնէ պորբոր և մաքեալ կոչելով զայն, և առ լերինս բարձրաբերձս քան զայն և արդասաւորս ձայն տալով՝ մի պարծել առ նովաւ։

Ի լեառն Աստուծոյ ի լեառն պարարտ,
Ի լեառն մածեալ ի լեառն պարարտ.
Զինչ կարծէք լերինք դուք հրպարտացեալք.
Ի լեառն ուր Աստուած հաճեցաւ բնակել,
Զի եւ տէր ի նմա բնակեսցէ ի սպառ։
Կառք երկնաւորին կառք բիւրապատիկ, (1)
Եւ տէր ի նոսա ի սրբութենէ իւրմէ ի Սինէ։
Եկ նա ի բարձունս՝ գերեալ գերութիւն,
Առ աւար, բաշխեաց, ետ որդւոց մարդկան.
Դանդի եղեցի թերահաւատից եւս ի նմա բնակեալ. (2)
Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ հանապազ,
Առաջնորդեսցէ մեզ տէր Աստուած մեր,
Աստուած մեր փրկիչ, Աստուած կենարար,
Ի նմանէ ելեալ են մեզ ելք մահու։
Բայց սակայն Աստուած փշրեսցէ ըզգլուխս թշնամեաց մերոց, (3)
Խրեալ կարձնովին ըզհերս այց գենան յանօրէնութեան։
Ասաց տէր՝ հանիցի ի խոր անդունդոց դարձուցից ի վեր,
Ի միջոյ Ժանեաց զայն ի դուրս կորզեալ։
Որպէս զի թացցի ոտքն քո յարեան, (4)
Եւ լեզուք շանց քոց թացցին յարենէ թշնամեացդ քոց։
Երեւեցան տէր գընացք քո, գընացք
Աստուծոյ մերոյ, արքայի սրբոյ։ (5)

(1) Կառս Աստուծոյ կոչէ զհրեշտակս բիւրաւորս, որպէս յայտ առնէ Մովսէս յերգ իւր. (Բ Օրին. ԼԳ. 2.) « Տէր ի Սինայէ եկեսցէ . . . բիւրաւորք ի Կադեսայ, յաջմէ նորա հրեշտակք իւր ընդ իւր »։ Սովին յաղթական կառաք ասէ եւ ելեալ Քրիստոսի յերկինս յետ գերեդարձ առնելոյ ազգի մարդկան, և բաշխելոյ նոցա աւար։ Զայս և առաքեալն ածէ ի վկայութիւն առ եփեսացիս. (Դ. 7.) « Իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի, վասն որոյ և ասէ. Եկ ի բարձունս, գերեաց զգերութիւն, և ետ պարգեւս մարդկան »։

(2) Այսինքն զի Քրիստոս անհաւատից եւս հեթանոսաց բաշխեաց զպարգեւս իւր, կոչելով զնոսա յեկեղեցի իւր. վասն որոյ հրաւիրէ սաղմոսերգուն օրհնել զկենսատուն մեր Քրիստոս, որով միայն փրկեցաք ի յաւիտենական մահուանէ։

(3) Փշրել զգլուխ թշնամեաց, խրել արմատաքի զհերս անօրինաց, յայտ առնէ փլուզանել զվարատութիւն նոցա և նուաճել զնոսա։

(4) Յայտ առնէ զպաշտպանութիւն Քրիստոսի ի վերայ եկեղեցւոյ իւրոյ, և զկործանումն թշնամեաց նորա. զոր բացատրէ Թացմամբ ոտին նորա և լեզուի շանց նորա յարենէ թշնամեաց։

(5) Ի տեսանել խորայելացւոց զայնպիսի գնացս Աստուծոյ այսինքն զնամն ի վերայ իւրեանց, իշխանք նոցա ընդ Մովսիսի և օրիորդք ընդ քեռն Ահարոնի օրհնեցին զնա թմբկօք և պարուք երգելով՝ Օրհնեացուք զտէր, զի փառաւոր է փառաւորեալ. (Ելից. ԺԵ։) Զորմէ այսպէս խորհրդաբանէ սուրբ Լամբրոնացին. « Յորժամ հաւատացին հեթանոսք ի Քրիստոս, և Ծանեան զկորհուրդ նորա եւ զնամանն, իշխանք եկեղեցւոյ և վերակացուք փոխեցան յիւրաքանչիւր ազգս և

Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն
Ի մէջ կուսանաց եւ ի մէջ դուստրաց։
Ցեկեղեցիս անդ օրհնեցէք զԱստուած,
Եւ զտէր յաղբերաց տանն Իսրայելի։ (1)
Անդ Բենիամին ի տըղայութեան լեալ զարմանալի, (2)
Եւ իշխանք Յուդայ առաջնորդք նորա,
Հանդերձ իշխանօքըն Զաբուլոնի,
Հանդերձ իշխանօքըն Նեփթաղիմայ։
Հրամայեա Աստուած զօրութեամբդ քով,
Զօրացո ի մեզ զոր հաստատեցեր։
Եւ ի տաճարի քում Յերուսաղէմ
Մատուցին ազգայք քեզ ըղձատարագս։
Սատեա ի գազան ընակաւոր ի շամբ, (3)
Ի ջոկ զուարակաց, ի դաս երընչուց։
Մերժեսցին անտի ընտրեալք արծաթով.
Ցբրուեա զհեթանոսս՝ զոյք կամին ընդ մարտս.
Եկեսցեն հրեշտակք քեզ Յեգիպտոսէ,
Եւ յառաջագոյն Հընդիկք ձեռընտու լիցին առ Աստուած։
Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք զԱստուած ի Սիոն,
Սաղմոս ասացէք Նրմա օրհնութեամբ.
Պատրաստ արարէք Ճանապարհ այնմիկ,
Որ յերկինս երկնից հանդչի 'նդ արեւելս,
Ահա տացէ զձայն իւր ձայն զօրութեան, եւ տուք Նրմա փառս.
Մեծվայելչութիւն նորա 'ի վերայ տանն Իսրայելի,

յաշխարհս հանել երևեցելոյն զօրհնութիւն 'ի մէջ ժառանգակցաց իւրեանց և ժողովրդոց. ոմանք զդիրս խորհրդական մեկնութեամբ բացայայտել փութային, այլք երգս եղանակաւորս յօրինէին. և այսպէս 'ի ձեռն իշխանաց եկեղեցւոյ և վարդապետաց լցաւ տիեզերս օրհնութեամբն Աստուծոյ »։

(1) Յաղբերացն Իսրայելի, այսինքն 'ի նահապետաց և 'ի մարգարէից, օրհնութեամբք նոցին, 'ի միասին ընդ նոսա։

(2) Զչորեսին ևեթ ցեղս Իսրայելի յիշատակէ փոխանակ Իսրայելի առ հասարակ, յորմէ էին առաքեալք իշխանք եկեղեցւոյ, և առաքեալն Պօղոս 'ի ցեղէ Բենիամինի՝ որպէս ինքն իսկ յայտ առնէ. (Հռ. ԺԱ. 1։) Եւ զարմանալի 'ի տղայութեան իւրում լինել Բենիամինի, նշանակէ զլինել նորա սիրելի, որպէս այլուր 'ի սուրբ գիրս ասի. (Բ. Թգ. Ա. 26.) « Զարմանալի եղև սէր քո ինձ »։

(3) Գազան եղէգան է կենդանի, որ յեղեգնուտս գտանի. սովաւ և զուարակաւք և երընչովք յայտ առնէ զթշնամիս եկեղեցւոյ. զորս և Հեթանոսս կոչէ, և ընտրեալս արծաթով և պատերազմասէրս. և խոտել ասէ զնոսա, և 'ի բաց ցրուելոյ նոցա ապա յաւելու զկոչումն եգիպտացւոց և Հնդկաց և զամենայն թագաւորութեանց երկրի, և զշքոր զօրութիւն Փրկչատոսի և զփառս 'ի հաստատել զեկեղեցի իւր և 'ի սրբել զնա. և վախճան առնէ երգոյն դեղեցիկ բանիւն, զի թէպէտ և յամենայն խոկ գործս իւր սքանչելի է Աստուած, այլ մանաւանդ 'ի սուրբս իւր. մինչև ասել առաքելոյն (Եփ. Գ. 10.) 'ի ձեռն եկեղեցւոյ յայտնեալ զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ։

Զօրութիւն նորա մինչեւ յամպս երկնից.
Սքանչելի է տէր ի վերայ սրբոց տէր Իսրայելի.
Նա Ժողովրդեան իւրում զօրութիւն,
Նա ինքն տացէ եւ հաստատութիւն. օրհնեալ է Աստուած։

ՍԱՂՄՈՍ ՀԹ

Նախապատմէ զգերութիւն ժողովրդականն յատորևստան և զազատութիւն, 'ի դէմս գերութեան ազգի մարդկան ընդ իշխանութեամբ դժոխոց, և զփրկութիւն նորա Քրիստոսի։

Որ հովուեսդ Իսրայելի նայեաց ի մեզ,
Որ զերդ խաշին առաջնորդես Յովսէփու. (1)
Որ ի քրովբէս վերանըստիս, ՀՂ երեւեաց Եփրեմի, (2)
Յայտնեաց Բենիամինի եւ առաջի Մանասէի.
Արի զարթո ըզզօրութիւն քո, եկ ըզմեզ կեցուցանել։
Դարձո Աստուած զօրութեանց, դարձո ըզմեզ.
Երեւեցո զերեսսըս քո, եւ կեցցուք։
Զամբեցեր մեզ հաց արտասուաց,
Եւ արբուցեր մեզ արտասուս լի չափով.
Եղաք դրացեաց մերոց նախատ,
Եւ թըշնամեաց այպն եղաք կատականաց։
Դարձո Աստուած զօրութեանց, դարձո ըզմեզ. (3)
Երեւեցո զերեսսըս քո, եւ կեցցուք։ (4)
Այգի յԵգիպտոսէ փոխեցեր, (5)
Ըզհեթանոսս հաներ եւ զնա տընկեցեր,
Ածեր ըզնա, հաստատեցեր. արմատ նորա եղից զերկիր.

(1) Յովսէփ աստանօր փոխանակ անդրանկանն Յակոբայ առեալ է, և նշանակէ զԻսրայելացիս առհասարակ։

(2) Եփրեմ Բենիամին և Մանասէ երրեակ ցեղք յանդիման առանն զազգն հրէական օրինակ սրբոյ եկեղեցւոյ. քանզի 'ի գնալ ժողովրդեանն Իսրայելի ընդ անապատն՝ սորա երեքեան գնային զհետ տապանակին սրբութեան (Թիւք. Բ. 18։)

(3) Կրկնէ և երեքկնէ զտունս զայս որպէս ծայրայանգ, խնդրելով 'ի տեառնէ դարձ՝ քանզի յետս կալ 'ի տեառնէ կարօղ եմք մեզն, այլ դառնալ առանց օգնականութեան նորա ոչ ևս, վասն որոյ առէ Երեմիա. (ԼԱ. 18.) «Դարձո զիս, և դարձայց»։

(4) Երեւեցո զերեսս քո, այսինքն զՔրիստոս՝ որ է կերպարան Հօր, և է կեանք մեր և փրկութիւն։

(5) Այլաբանութեամբս այսուիկ այգւոյ վարի և Եսայի (Ե. 4.) և տէրն մեր (Մատթ. ԻԱ։)

Հովանի նորա զերբինքս ծածկեաց,
Եւ բարուխակք նորա ըզմայրս Աստուծոյ։ (1)
Զբդեաց զորթ իւր մինչեւ ի ծով,
Մինչեւ ի դեսրս շառաւիղք իւր տարածեալ։
Ընդէ՞ր ըզցանկ նորա բարձեր,
Եւ անցաւորք ճանապարհի կրթեն ըզնա.
Ապականեաց զայն եղջ ի սպառ կինճ անտառի։
Էրէ վայրի եմուտ ի նմա արածեցաւ։
Աստուած զօրութեանց, դարձիր հայեաց յերկնից եւ տես,
Եւ այց արա այգւոյս այսմիկ,
Դարման սրմա տար, զոր տընկեաց աջ քոյին։
Ան ի վերայ որդւոյ մարդոյ արկ, զոր ի քեզ զօրացուցեր, (2)
Քանզի եղեւ այրեացաւեր.
Ի սաստիկ քուսմնի ոսոխք իւր կորիցեն.
Եւ ի վերայ իւր եղիցի ձեռքն քոյին,
Եղիցի աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ,
Զոր դու ի քեզ զօրացուցեր։
Ոչ եւս ի քէն մեք ի բացեայ եղիցուք,
Եւ կեցուսցես զարձեալ զմեզ,
Եւ սուրբ զանուն քո կարդասցուք։
Դարձո Աստուած զօրութեանց, դարձո ըզմեզ.
Երեւեցո զերեսսքս քո, եւ կեցցուք։

ՍԱՂՄՈՍ ԶԳ

Յողբ արդարոյ բնակել 'ի տան տեառն, և լինել ընդ Աստուծոյ. և զի արդարք շնորհօք նորա հանդիպին ողորմութեան և փառաւորին։

Ո՞րպէս սիրելի են յարկք քո Աստուած,
Փափաքեմ անձն իմ ի գաւիթսքս քո.
Սիրտ իմ եւ մարմին ցընծասցեն առ տէր Աստուած կենդանի,
Զի եղեսցի իւր տուն ճնճղուկ տառապեալ, (1)

(1) Զմայրս Աստուծոյ, այսինքն զբարձրաբերձ մայրիս։

(2) Սուրբ Հարք իմանան ասա զՔրիստոս, որ որդի մարդոյ զինքն կոչէր, և տէր այգւոյն (Մատթ. ԻԱ. 33։) Աբդ հայեաց ասէ 'ի Քրիստոս, և ողորմեա յայգի քո այրեցեալ և աւերեալ։

(1) Որպէս ճնճղուկ և տատրակ վասատակեալ 'ի թռիչս՝ հանգչին 'ի բոյնս իւրեանց, նոյնպէս և ես 'ի սեղան քո խնդրեմ հանգչել յանձկութեանց աշխարհի։

Եւ տատրակ ըզբոյն՝ ուր դիցէ ըզձագս։
Իզձք իմ ի սեղան քո տէր զօրութեանց.
Երանելիք են որ ի տան քում անդ ծառայք քո բնակեն, (1)
Յաւիտեանս յաւէտ օրհնեսցեն ըզքեզ։
Երանեալ է այր, որում դու օգնես.
Ի յարտասուալից հովտէ կենցաղոյս (2)
Ելս ի մըտի եդ ի վայր՝ զոր ուխտեաց.
Ի զօրութենէ նա ի զօրութիւն քեւ օրհնեալ գնասցէ,
Մինչեւ երեսիս երեւիս նըմա Աստուած ի Սիոն։
Լուր տէր, ունկըն դիր աղօթից իմոց,
Յերեսս օծելոյ քո հայեաց, եւ լեր ընդունօղ իմ տէր. (3)
Լաւ է ինձ մի օր ի գաւիթըս քո քան բիւրք արտաքոյ. (4)
Ընտրեցի այո, ընտրեցի յաղբ կալ ի տանն Աստուծոյ,
Քան յոսկեձեղուն յարկս ամպարշտաց բնակակցել նոցուն։
Զի զողորմութիւն եւ ճշմարտութիւն սիրես դու Աստուած,
Եւ զողորմութիւն շնորհես եւ ըզփառս ոյց գթեան ամբիծ.
Աստուած զօրութեանց, երանեալ է այր՝ որ յուսայ ի քեզ։

ՍԱՂՄՈՍ ԶԶ

Պատմեն զփառս սրբոյ եկեղեցւոյ, զդիմել ազգաց անդր, և զերչանկութիւն նոցա։

Բարձր ի կատար լերին սրբոյ արկան հիմունք քո ով Սիոն, (1)
Եւ տէր ըզդրունսս քո սիրէ քան զամենայն յարկս Յակոբայ։ (2)
Ըզքեզ, քաղաքդ Աստուծոյ, փառաւորեալ պատմեցան բանք. (3)

(1) Որք միանգամ 'ի տան քում բնակեն, ոչ միայն յաշխարհի աստ օրհնեն զքեզ, այլ և յաւիտեան օրհնեսցեն յերկինս՝ որոյ օրինակ է տաճար քո յերկրի։

(2) Զի արդարք 'ի հովտէ աստի արտասուաց գուն գործեն ելանել ամբիծ կենաց 'ի տեղի՝ յոր ուխտիւք ցանկան, նկրտելով 'ի բարձրագոյն առաքինութիւնս, մինչև հասանեն առ Աստուած՝ որ է վարձ նոցա և մրցանակ։

(3) Յամենայն ժամանակի 'ի ձեռն Քրիստոսի, որ է միակ յոյս մարդկան, լսելի եղեն, լինին և լեցին աղօթք նոցա առ Աստուած։

(4) Ցուն Աստուծոյ է եկեղեցի սուրբ, իսկ աղանդք և հերձուածք յարկք մեղաւորաց. վասն որոյ ընտրեմ սաղմոսերգուն անարգ և յետին գոլ յեկեղեցւոջ, քան արտաքոյ նորա փառաւորեալ. յաւելու և զվանսերն, և վախճան առնել երգոյն՝ երանելով զյուսացեալսն 'ի տէր։

(1) Երուսաղէմ, ուր սկիզբն եղև սրբոյ եկեղեցւոյ, 'ի վերայ լերին Սիոնի էր կառուցեալ։

(2) Մասն փոխան բոլորի դնէ, դրոշոս փոխանակ քաղաքի։

(3) Իսա որ ինչ մարգարէք զեկեղեցւոյ սրբոյ փառաւորեալս նախասատմեցին։

Ցիշեսցէ տէր ըզԻսահաք, յուշ եւ Բաբէլ լեցի նըմա, (1)
Ընդ այնոսիկ՝ ոյք Ճանաչէն ըզնա ընտրեալքն ի սիրըզբանէ։
Ահա Ծուր եւ այլազգիք, ահա եւ ազն հընդկատանեաց,
Դիմեսցեն եւ նոքա գայցեն ի քեզ ապաստանել.
Եւ մայրակոչ լեցին քեզ, յորջորջեսցիս դու մայր Սիոն,
Բազմահոյլ բամից ոզուոց յայնժամ զերկուսիս քո լուծեալ.
Զի Բարձրեալն ինքնին հիմունս արկ հաստահիմն քեզ Սիոն,
Եւ նա ինքն ըզհամար ժողովրդեան քո եւ զպեսաց (2)
Ի զբաղութեան կենաց դրոշմեալ ի քերս անջինջ արձանագրէ։
Ո՛հ զի ուրախ լեցին ի քեզ եւ ցընծասցեն ամենեքեան,
Որոց բաժին եղ բարեբաստ բնակել, քաղաքըդ սուրբ, ի քեզ։

ՍԱՂՄՈՍ ՂԸ

Զօրուրիւն և մեծվայելչուրիւն Աստուծոյ 'ի ստեղծանելն և 'ի փրկել զաշխարհ։

Տէր Թագաւորեաց վայելչութիւն ըզգեցաւ.
Ըզգեցաւ տէր զօրութիւն, ըզփառս ընդ մէջ իւր ածաւ։
Կառոյց զերկիր անսասան, զատարաստ յերկինս է աթոռ իւր. (1)
Ի սկիզբանէ յաւիտենից ես դու տէր։
Ամբարձան գետք, եւ ամբարձին ըզձայն իւրեանց. (2)
Յարիցեն գետք ի գնացս իւրեանց։
Ընդանչելի եղեն ծովու զբօսանք ի ձայն ջուրց բազմաց.
Այլ առաւել դու սքանչելի ես ի բարձունս.
Վըկայութեանց քոց տէր մեք յոյժ հաւատացաք։
Տան քում վայել է ընդ երկայն աւուրըս տէր սրբութիւն։

(1) Ուահաք իմա ասա ոչ զպատնիկն Երիքովի, այլ զդաւառ Եգիպտոսի. վասն որոյ իմաստքն են՝ զի և զեղիպտացիս և զբաբելացիս, զորս Թողեալն էր Աստուած և անտես արարեալ յիշեսցէ երբեմն, և ընդ այլ ազգս կոչեսցէ յեկեղեցի իւր։

(2) Այս ինքն զի գիտէ տէր զթիւ իշխանաց և ժողովրդոց՝ որ հանդերձեալ են դիմել յեկեղեցի իւր 'ի նորն Սիոն, որպէս հովիւ՝ զի զոչխարս իւր գիտէ, և որպէս զօրավար՝ որ ունի զհամար զօրաց իւրոց։

(1) Զի 'ի սկզբանէ յաւիտենից նախ քան զաշխարհս պատրաստեալ էր յերկինս աթոռ Քրիստոսի, որ ոչ միայն 'ի ստեղծանել զերկինս և զերկիր՝ զգեցաւ մեծվայելչութիւն և փառս, այլ առաւել ևս 'ի կառուցանել զեկեղեցի իւր անսասանելի։

(2) Զայնիւ գետոց իմանան ասա սուրբք Հաւք զքարոզութիւն առաքելոց, որք վկայեցին Քրիստոսի արեամբ չափ, և որոց վկայութեամբ առաւել սքանչելի եղև տէր և ահաւոր քան թէ ծով 'ի գոչիւն ալեաց իւրոց։ Զան որոյ և զհետ բերէ զաներկբայելի հաւատս, և զաւանէ զարբութիւն քրիստոսական կրօնից։

ՍԱՂՄՈՍ ՂԶ

Յաղագս թագաւորութեանն Քրիստոսի, և փառաց և զօրութեան նորա :

Թագաւորեաց տէր, ցընծասցէ երկիր·
Ուրախ եղիցին կղզիք համօրէն : (1)
Ամպ շուրջանակի եւ մէգ է զնովաւ, (2)
Ուղղեալ յիրաւունս եւ յարդարութիւն է աթոռ նորա :
Հուր եւ բոց գնասցեն առաջի նորա,
Շուրջ ըզթշնամիս նորա այրեսցեն·
Երեւեցան ցոլք եւ փայլատակունք իւր տիեզերաց·
Տես զայն երկիր եւ սասանեցաւ :
Լերինք որպէս մոմ լուծեալ հալեսցին յերեսաց նորա,
Յերեսաց նորա ամենայն երկիր :
Պատմեսցեն երկինք զարդարութիւն իւր, (3)
Տեսցեն ժողովուրդք ըզփառս նորա :
Ծածկեսցէ ամօթ զայնոսիկ՝ որ կռոց երկիր պագանեն, (4)
Եւ որք ի դրօշեալսս իւրեանց պարծին :
Երկիր առաջի երեսաց նորա (5)
Պագցեն ամենայն հրեշտակք Աստուծոյ·
Զի լուաւ Սիոն եւ ուրախ եղեւ, (6)

(1) Կղզիս կոչէին Հրեայք և զամենայն ցամաք երկիր՝ ուր ընդ ծով հարկ էր անցանել. այլ աստանօր կղզի ըստ բնիկ նշանակութեան եդեալ է, առ՝ի բովանդակել զամենայն մասունս երկրի :

(2) Եւ քանզի հզօր զօրութիւն Քրիստոսի՝ ի միւսանգամ գալստեան նորա յայտնագոյնս երևելոց է, զայն նկարագրէ աստանօր. այսինքն զգալուստ նորա ընդ ամպս երկնից՝ առնել իրաւունս և արդարութիւն՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս, և՝ ի բոց հրոյ մատնել զամպարիշտս :

(3) Երկինք ևս ցուցցեն յայնժամ զփառս նորա՝ ի թօթափել փայլատակունս և հուր՝ ի վերայ երկրի, յորմէ «բնութիւնք կիզեալ լուծցին, և երկիր և որ միանգամ՝ ի նմա գործք գտանիցին». (Բ Պետր. Գ. 10.)

(4) Ընդ կռապարիշտս է ասա իմանալ և զամենայն ամպարիշտս, զորս յայնժամ ծածկեսցէ ամօթ դատապարտութեան :

(5) Այս է, զոր առաքեալն ասէ (Եբր. Ա. 6.) «Յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ» :

(6) Յայնժամ ուրախասցի Սիոն, այսինքն եկեղեցի սուրբ. և ցնծասցին դրստերք Յուդայ, այսինքն արդարք :

Եւ ընդ իրաւունքս քո ցընծասցեն, տէր, դբստեղք Յուդայ։
Զի բարձրեալ ես դու ի վերայ երկրի, (1)
Եւ յոյժ բարձրացար ի վերայ կըռոց։
Որ սիրէիք ըղտէր, ատեցէք ըղչար։
Պահէ տէր զանձինքս սրբոց իւրոց, (2)
Եւ փրկիէ զնոսա ի ձեռաց չարաց։
Լոյս երանաւէտ ծագեաց արդարոց, (3)
Եւ ուղղոց սրտիւք եղեւ խընդութիւն։
Ուրախ լերուք սուրբք եւ արդարք ի տէր,
Եւ յիշատակի սրբութեան նորա խոստովան լերուք։

ՍԱՂՄՈՍ ԺԳ

Օրհնեմ զտէր վասն համագոյից յիսկզբանէ և պահպանութեան։

Օրհնեա անձն իմ, օրհնեա ըղտէր։ տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ։
Ըզփառս ահեղահրաշ ըզգեցար,
Արկար ըզլոյս որպէս զոթոց, ձգեցեր զերկինս որպէս խորան, (1)
Եւ յարկար ի վերայ ջուրց ըզվերնայարկս նորա։
Որ դընես յամպս ըզդնացքս քո, շրջիս ի թեւս թեւեաց հողմոց։ (2)
Որ ըզհրեշտակս քո հոգիս արարեր, (3)
Եւ զպաշտօնեայս քոյին ի հուր կիզելոյ։
Որ ի վերայ հաստատութեան իւրոյ զերկիր կառուցեր, (4)
Եւ մի երկիր սասանեսցի յաւիտեան։
Որպէս ըզդեստ խորք վերարկու են նորա, (5)

(1) Զի յայնժամ բարձրասցի Քրիստոս և յաղթանակեսցէ փառաք 'ի վերայ ամենայն թշնամեաց իւրոց։

(2) Ուչ ևս այնուհետև կրեսցեն ինչ արդարք 'ի դիւաց և 'ի մեղաւորաց վիշտս և չարիս։

(3) Լոյս յաւերժական երանութեան ծագեսցէ նոցա, և օրհնեսցեն զտեր, և գոհասցին զնմանէ 'ի յաւիտեան։

(1) Լոյս ասասանօր ոչ զգալի լուսոյ է խմանալ, այլ զոր առաքեալն ասէ զԱստուծոյ (Ա. Տիմ. Զ. 16.) « Բնակեալ 'ի լոյս անմատոյց »։

(2) Բազում ուրեք սուրբ գիրք զմեծութիւն Աստուծոյ բացատրեն՝ ասելով շրջել նմա յամպս, բազմել 'ի վերայ ամպոց, գալ ընդ ամպս և այլն։

(3) Այսինքն զպաշտօնեայս քո զՀրեշտակս արարեր թեթևընթացս և հզօրս, զի հոգի՝ արագութեան, և հուր՝ զօրութեան է նշանակ։

(4) Զերկիր 'ի վերայ հաստատութեան իւրոյ կացուցանել, նոյն է ընդ ասել Յոբայ (ԻԶ. 7.) « Կախեաց զերկիր 'ի վերայ ոչընչի »։ այսինքն ինքնակայ, ինքն յինքեան հաստատեալ։

(5) Յանդիման առնել զերկիր որպէս էրն 'ի սկզբանէ, պատեալ յանդնդոց և 'ի ջուրց։ և 'ի հրամանէ տեառն ասէ փախուցեալ զկաւար, և զջուրս ամփոփեալ 'ի ծովս, զլերինս և զդաշտս 'ի վեր երևեալ, և ելից բոլորից զկայ առեալ յիւրաքանչիւր տեղւոջ։ յորում հրամանն արարչական զնոսա հաստատեաց։

Եւ ի վերայ լերանց ըզկայ առցեն ջուրք.
Ի սաստէ քումմէ ի բաց փախիցեն,
Եւ ի ձայնէ որոտալոյ քո սարսիցեն.
Ելանեն լեռնանան եւ իջանեն դաշտանան
Ի տեղի՝ յոր դու զնոսա հաստատեցեր.
Սահման եդիր, եւ ոչ անցցեն, ոչ եւս դարձցին ծածկել զերկիր։
Առաքեցեր զաղբիւրս ջուրց ընդ ծորոր,
Ի մէջ լերանց գնասցեն վազակք արբուցանել զերեւ վայրի.
Ցագեսցին անդ ցիռք ի ծարաւոյս իւրեանց.
Բոյնս անդանօր գիցեն թռչունք,
Եւ ի միջոյ վիմաց տացեն ըզձայն իւրեանց։
Արբուցանես դու ի գանձուց քոց ըզլերինս, (1)
Եւ ի յուղեսից նոցին պտղովք լցցի երկիր.
Խոտ ի լերինս բուսուցեր, ի դաշտավայրս դեղ դալար
Առ ի մարդկան ծառայութիւն. հաներ ըզհաց ի յերկրէ,
Գինի ուրախս առնէ զնոսա եւ իւղ զլուրթ,
Հաց հաստատէ ըզսիրտ մարդոյ։
Ցագեսցին ծառք տեառն եւ մայրք Լիբանանու, զոր տընկեցեր.
Զագս ի նոսա հանցեն թռչունք, բոյն արագղն ամրոց նոցա։ (2)
Լերինք բարձունք են եղջերուաց, վէմք ապաւէն նապաստակաց։
Արարեր ըզլուսին ի ցոյց ու ի չափ ժամանակի, (3)
Եւ արեգակն ըզժամ մտոյ իւրոց ծանեաւ։
Արարեր դու ըզխաւար, եղեւ գիշեր.
Եւ գնան ի նմա գազանք բնակիչք անտառի. (4)
Մռընչեն կորիւնք առիւծուց,
Ցափըշտակեն զորս, ի յերկնից խընդրեն ճարակ.
Ի ծագել արեգական ամփոփին
Եւ ի մրիս իւրեանց անդրէն դադարեն.
Ելանէ մարդ ի վաստակ իւր,
Ի գործ ձեռին իւրոյ մինչեւ յերեկոյ։
Ո՛րպէս զի մեծ են գործք քո տեր,
Զամենայն ինչ իմաստութեամբ արարեր,
Եւ ստեղծուածովք քովք ծայր ի ծայր լցցաւ երկիր։

(1) Ի գանձուց կամ 'ի շտեմարանաց ջուրց, այսինքն յամպոց։
(2) Արագիլ առաւելագոյն զգուշութիւն ապահովելոյ զբոյն իւր 'ի բարձունս՝ աներկեան առնէ զայլս 'ի թռչնոց ամրանալ առընթեր նոցա։ Եղջերուք 'ի լերինս բարձունս, և նապաստակք 'ի ծերպս վիմաց ապաւինին։
(3) Պանաւանդ հինք լուսնով չափեին զժամանակ, զամիս և զտարիս։
(4) Ի հրամանացն Աստուծոյ կարգեալ փոխառութիւն տունջեան և գիշերոյ, գիշերի առիւծք և այլք 'ի գազանաց երանեն, յորոց խնդրել որս և ճարակ։

Այս ծով՝ մեծ եւ անդորը, ի սմա սողունք՝ ոյց ոչ գոյ թիւ. (1)
Գազանք ի սմա գազանք մանուանք եւ մեծամեծք.
Ի սմա եւ նաւք սահեալ գընան.
Վիշապն մեծ, զոր ստեղծեր, խաղալ նովաւ:
Ամենեքեան քեզ ըսպասեն, եւ դու նոցա ի ժամու
Ցաս կերակուր, տաս դու նոցա եւ կերակրին.
Բանաս ըզձեռըն կերակրես զամենեսեան կամօք քովք:
Դարձուցանես զերեսըս քո ի նոցանէ, եւ խռովին. (2)
Հանես զոգի ի նոցանէ, եւ պակասին ի հող դառնան.
Առաքես զոգի քոյին եւ ըստեղծաս ըզնոսա, (3)
Եւ նորոգես զերեսս երկրի:
Եղիցին փառք տեառն յաւիտեան,
Եւ տէր ի ձեռակերտըս իւր ուրախ եղիցի.
Որ ի յերկիր հայի եւ տայ դողալ սըմա.
Մերձի ի բլուրս եւ ծըխեսցին:
Օրհնեցից ըզտէր ի կեանս իմ՝ հանապազ,
Եւ Աստուծոյ իմոյ սաղմոս, մինչեւ իցեմ ես, ասացից.
Պակասեսցին յերկրէ ի սպառ մեղաւորքք,
Եւ ամպարիշտք մի՛ եւս ի սմա գըտցին. օրհնեա անձն իմ՝ ըզտէր:

---

(1) Կատարեալ գնկարագիր երկրի, անցանէ արդ՝ ի ծով. և յետ յիշելոյ զկենդանիս մանուանս և զմեծամեծս՝ որ՝ ի նմա, և զնաւս՝ որ գնան ընդ նա, յաւելու զմեծագոյնն՝ ի նշանագաց՝ զոր վիշապ կոչէ, և է կէտն մեծ՝ որ աներկիւղ՝ ի խորոց խաղայ ընդ ահագին ալիս ծովու:

(2) Նկարագրեալ զարգասիս աստուածախնամ տեսչութեան, յաւելու ապա հակառակաւն ցուցանել զնոցին եղծումն:

(3) Այս ըստ նկարագրին ցուցանէ զյաջորդութիւն էից՝ որ եղծանին, և կամաքն Աստուծոյ նորոգին անդրէն՝ այլոց՝ ի տեղի նոցա յաջորդելով. բայց այլաբանօրէն ցուցանէ զնորոգութիւն ազգի մարդկան՝ ի ձեռն Հոգւոյն, զոր առաքեաց Քրիստոս: Որում՝ ի դէպ ևս զհետ գայ ուրախ լինել տեառն յարարածս իւր, և պակասել յերկրէ մեղաւորաց և ամպարշտաց:

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ.

Թանդուրիւն Իսրայելացւոց երկիրղուածաց յայց առնել 'ի տաճարն Աստուծոյ Յերուսաղէմ, խնդրելով 'ի տեառնէ պահպանել զժողովուրդ իւր և զքաղաք 'ի խաղաղութիւն:

Ուրախ եղէ ոյք ինձ հրաւէր տային երթալ ի Սիոն. (1)
Արի եկ ընդ մեզ ի տուն տեառն Աստուծոյ երթիցուք:
Ահաւասիկ առ դրունսդ քո հասեալ կան ոտք մեր ով Սաղմ.
Սաղմ. քաղաք աստուածակերտ, ուր միակրօն բնակէ որեաք. (2)
Անդր ի խորանն Իսրայելեան ուխտին ելին երկրպագուք,
Ազգ ազգ տեառնէն խոստովան լինել անուան նորա մեծի:
Անդանօր աստեան կանգնեալ, աթոռք արկան դատաստանի. (3)
Աթոռք դատողականք արկեալ կան անդ ի տան Դաւթի:
Որ սիրէքդ զՍաղմ, զբոյց զողջունէ նորին հարցէք,
Զբոյց ըստորին շինութիւնք, եւ զայս օրհնից հեղէք աղերս. (4)
Եղիցի խաղաղութիւն ի բնակութեան քում ով Սաղմ,
Եւ աշտարակք քո շինեսցին ամրակառոյցք եւ սպառազէնք:

(1) Սովորութիւն էր Հրէից երիցս 'ի տարւոջ այց առնել 'ի տաճարն՝ որ Յերուսաղէմ. արդ սաղմոսերգուն 'ի դէմս միոյ ուրուք յաստուածասիրաց անտի ուխտաւորաց յօրինէ զերգս, դիմելով նորա ուրախութեամբ 'ի հրաւէր գնալոյ 'ի տաճար անդր: Հրեայք եւս այլաբանօրէն իմանան աստ զերկնաւորն Երուսաղէմ. այլ մեք և զերկնաւորն, և զերկրաւորս՝ որ է եկեղեցի սուրբ. զոր աւետարանիչն Յոհաննէս (Յայտն. ԻԱ. 2.) ետես «Իջեալ յերկնից դքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ, և լուաւ ձայն յերկնից՝ որ ասէր. Ահաւասիկ խորանն Աստուծոյ 'ի մէջ մարդկան»:

(2) Միակրօնիւ ցուցանէ զմի հաւատս ամենեցուն՝ որ են յեկեղեցւոջ յամենայն ազգաց, որպէս ապա 'ի 6 տողին յայտ առնէ: Եւ այս այն է, զոր Եսայի ասէ (Բ. 1.) «Զի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, և տուն Աստուծոյ 'ի վերայ գլխոց լերանց . . . և եկեսցեն 'ի նա ամենայն հեթանոսք, և երթիցեն ժողովուրդք բազումք, և ասասցեն. Եկայք ելցուք 'ի լեառն տեառն, և 'ի տուն Աստուծոյ Յակոբայ»:

(3) Զիմաստս այսոցիկ եւս տանց սաղմոսիս յաւելու անդ նոյն մարգարէ. «Զի 'ի Սիոնէ ելցեն օրէնք, և բան տեառն Յերուսաղէմէ, և դատեսցի 'ի մէջ հեթանոսաց»:

(4) Թելադրէ հաւատացելոց որ ինչ պարտն է նոցա մաղթել 'ի տեառնէ վասն եկեղեցւոյ, զոր և մաղթեմքն միշտ. «Զխաղաղութիւն պարգևեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն 'ի թշնամեաց պատերազմ. և հաստատեա 'ի մի հաւատ զկամեցողիկէ եկեղեցի»: Եւ խաղաղութեամբ յաճախ ուրեք սուրբ գիրք իմանան զպարարութիւն ամենայն բարեաց, որով և կնքէ սաղմոսերգուն զերգն:

Վասն ընկերաց իմոց հայցեմ, եւ պաղատիմ ի սէր եղբարց. (1)
Վասն քո եւ վասն տան տեառն Աստուծոյ աղերս արկեալ,
Զխաղաղութիւն եւ զբոլորից բարեաց լրումն քեզ մաղթեմ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ

Գոհութիւն 'ի դիմաց Իսրայելի, այլաբանելով 'ի դեմս եկեղեցոյ, վասն ազատելոյ 'ի հալածանաց և 'ի վտանգէ:

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասցէ ընդ իս երդ Իսրայէլ,
Եթէ ոչ տէր էր առ մեզ, ազգք՝ որ ի մեր վերայ յարեան՝
Կենդանւոյն արդեօք ըզմեզ յափշտակեալ եւ կլանէին.
Ընդ զայրոյթ սրբամտութեան նոցա ընդդէմ մեր գումարեալ
Եւ ալիք ուրեանն ըզմեզ ըսպառնային ընկղմուզանել: (1)
Այլ տէր օգնեաց մեզ, և ընդ ուղիս անցին անձինք մեր անվրտանգ.
Անցին անձինք մեր ընդ ջուրս, որ զմեօք գային ի փլուզանել:
Օրհնեալ տէր, որ ոչն ըզմեզ եհատ առամանց նոցին ի յորս.
Որպէս ճնճղուկ մազապուր ի յորսողացն որոգայթէ, (2)
Այնպէս անձինք մեր ապրեցան՝ զորոգայթիւք նոցին վազեալ.
Որոգայթքն փշրեցան, եւ մեք աջով տեառն ապրեցաք:
Զի որ զերկին եւ զերկիր ի յանգոյից էած ի գոյ
Եւ ինքն ուղղէ զամենայն, մեզ ի նմանէ է օգնութիւն:

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Օրինակաւ ազատութեան Հրէից 'ի գերութենէն Բաբելոնի, երգէ զփրկութիւն ազգի մարդկան 'ի գերութենէ դժոխոց:

Ի գերեդարձ առնել քո տէր Սիոնի, սիրտք մեր ըսփոփեալ՝
Եղեն բերանք մեր խընդալեցք, լեզուք մեր օրհնութեամբ.

(1) Ասա և զիւրն յաւելու մարգարէն, և զնոյն լիութիւն բարեաց հայցէ վասն եկեղեցւոյ և վասն ամենայն հաւատացելոց՝ զոր ես եղբարս իւր կոչէ 'ի Քրիստոս:

(1) Ալիք, ջուրք, գետք, բազում ուրեք 'ի սուրբ գիրս նշանակեն հալածանս, նեղութիւնս, վիշտս: Եկեղեցի սուրբ այնպիսի հալածանս անդստին 'ի սկզբանէ կրեաց, զի եթէ ոչ էր տէր ընդ նոսա՝ չկարէր կալ և մնալ:

(2) Խնա յաներևոյթ թշնամեաց, որոց որոգայթք բազմավտանգ ևս են քան զերևելեաց. և հնարքօք ևեթ փրկչին, որ արարիչն է երկնի և երկրի, զերծանիմք յայնցանէ անվնաս:

Յայնժամ համբաւ ի հեթանոսս արկ հիացումն, եւ ասէին.
Մեծ արար տէր ընդ Իսրայէլ, մեծ յոյժ զառնել իւր ընդ նոսա.
Զի գերեցաւ նա ի մեզ, սրբբեաց զարտասր աչաց մերոց:
Որպէս ուղղեալ ի հարաւոյ լուծեալք դարիւ գան դարիւ, (1)
Դարձո հանդոյն այնոցիկ տէր եւ ըղմերոցըս գերութիւն.
Ոյք վարէին արտասուօք, հընձեսցեն գոհք եւ բերկրալոյ. (2)
Երթալով երթային, եւ ողբս ի գնալն առեալ լային,
Ոլորք ի սփիւռ ըղսերմանիս իւրեանց առեալ տանէին,
Գալով եկեսցեն, եւ զուարթք ի հունձըս ցընծասցեն,
Հասկաթուռ զորայս իւրեանց բարձեալ ի գիրկըս բերելով:

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ

Զի 'ի զուր եւն հոգք և վաստակք առանց օգնականուրեանն Աստուծոյ:

Եթէ ոչ տէր շինէ ըզտուն, ի զուր շինօղքն վաստակին. (1)
Եթէ ոչ տէր պահէ զքաղաք, ընդ վայր տրքնին անդ պահապանք.
Ի զուր է ձեզ վաղայարոյց գոլ ոյք ուտէք հաց զբրկանաց.
Այլ արեալ ի ժամու շահել ըզկեանս արդարութեամբ:
Քուն սիրելեաց նորա տացի, քուն եւ հանգիստ աներկեւան.
Ժառանգեսցեն որդիս, եւ Հոխս ըզհետ իւրեանց թողցեն թոռնեայս:

(1) Ազատեալքն 'ի գերութենէ, յաւելուն խնդրել զազատութիւն և զմնացեալսն 'ի գերութեան, իբր ասել պլաբանօրէն. գոհանամք զքեզ տեր, զի փրկեցեր զմեզ 'ի գերութենէ սատանայի. այլ բազումք 'ի մարդկանէ կան և մեան տակաւին կամակար 'ի նմին գերութեան. դարձո և զնոսա, գայցեն յեկեղեցի բազմութեամբ՝ որպէս ուղղս յորդեալ 'ի հալելոց ձեռանց 'ի շնչել գարնանաբեր հարաւային հողմոյ:

(2) Զառաժամայն վիշտս հաւատացելոց ցուցանէ աշխատութեամբ վարողաց զերկիր և սերմանահանաց, որք ասա 'ի հունձն բերկրին ըստ տեառն բանի (Ղկ. Զ. 21.) « Երանի՝ որ լան այժմ՝ զի ծիծաղեսցին »:

(1) Տամք իմս զընտանիս, որոց ամենայն բարիք 'ի տեառնէ յաջողին. նոյնպէս և քաղաքաւ իմս զպետութիւն, որոյ բարեկարգութիւն և հաստատութիւն յաջողէ տերամբ: Վասն որոյ զհետ բերէ, զի որք զրկանօք ազքատաց կամին մեծանալ՝ չյաջողէ նոցա տէր, թէպէտ և վաղայարոյցք զամենայն գուն գործիցեն. այլ լաւ է նոցա առանց առաւելազանց հոգոց և ճգանց խնդրել զարդարութիւն, որով այլն ամենայն յաջողի ըստ տեառն բանի. (Մտթ. Զ. 33.) « խնդրեցեք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ »: Ըստ այսմ և սաղմոսերգուն յարէ զհետ, զի տացի քուն սիրելեաց Աստուծոյ. այսինքն զի և հանգիցեն, զի թէ և ոչ այնչափ հոգ և ճիգն յանձին բերիցեն, սակայն յաջողեսցի նոցա և որդիս ունել և ինչս և զխաղաղութիւն:

Որպէս աղեղնն լայնալիճ՝ եւ նետք ի ձեռս հրզօրի, (1)
Այնպէս որդիք տառապելոց ընդդէմ հինից անընդամոց։
Երանի՛ զորոց լցին երկինք նոքօք ըզցանկութիւն. (2)
Մի ի գիմել Թշնամւոյ՝ գլոցին առ դրան ամաչեցեալք։

ՍԱՂՄՈՍ ՃԻԸ

Գոհուրիւն Իսրայելի՝ ի դէմս եկեղեցւոյ վասն զերծանելոյ՝ ի հալածանաց բազմաց՝ զորս կրեաց՝ ի սկզբանէ, և նախատանացուրիւն հալածչացն պատուհասելոյ։

Բազում անգամ մարտեան ընդ իս
Ի տղայ տիոց իմոց, ասաց Իսրայէլ։ (1)
Բազում անգամ մարտեան ընդ իս
Ի տղայ տիոց իմոց, եւ ոչ յաղթեցին ինձ։
Հարին զթիկունս իմ մեղաւորք, (2)
Եւ ընդերկար ըզմեզս իւրեանց արարին.
Այլ տէր արդար է, ընկճէ զու

ն ամպարիշտաց.
Ամաչեսցեն, յետս դարձցին, ոչք ատեին ըզՍիոն.
Որպէս ըզխոտ լիցին տանեաց՝ որ չեւ հընձեալ չորանայ, (3)
Ուստի ոչ բուռն երբէք լընու հընձողի,
Եւ ոչ գիրկ այնորիկ՝ որ ժողովէ զորայն ընդ արտ.
Ոյց անցաւորք ոչ ասացին՝ թէ օրհնութիւն տեառն է ընդ ձեզ, (4)
Եւ ի տանէ տեառն օրհնեալով ըզհունձքս ձեր օրհնեցաք։

(1) Յաւելու խոստանալ արդարոյ և որդիս բարիս, որք իբրև զէն և աղեղն լիցին՝ ի պաշտպանութիւն հօր իւրեանց ընդդէմ չարաց։

(2) Երանէ զհարս, որոց որդիս այնպիսիս շնորհէ Աստուած, զի և դատափետեալ՝ ոչ յամօթ լիցին յատենի. այս է չամաչել առ դրան. զի դատաւորք առ դրան՝ ի գաւթի առնէին իրաւունս։

(1) Ի տղայ տիոց, այսինքն՝ ի սկզբանէ. քանզի եկեղեցի Աստուծոյ՝ ի սկզբանէ հետէ կրեաց հալածանս, վասն որոյ և փրկիչն մեր որպէս առաջին յարդարս յիշատակէ զԱբէլ՝ որ սպանաւն յեղբօրէն։

(2) Թուի ակնարկել՝ ի խոշտանգանս վկայից, և՝ ի գանանորին խակ տեառն՝ զոր հարին զինուորք Պիղատոսի։

(3) Զսոյն և Եսայի ասէ (Լէ · 27.) «Եղեն իբրև զխոտս ցամաքեալ՝ ի վերայ տանեաց»։ Մանաւանդ՝ ի տանիս տօթակէզն Պաղեստինու, ուր առ՝ ի չգոյէ հիւթոյ՝ ընդ ծագել արեգական ցամաքին սեգք՝ զիշերի բուսեալք. այսպէս և մեղաւորք արագ արագ կորիցեն։

(4) Սովորութիւն է անցաւորաց ընդ արտորայս և ընդ այգեստան՝ օրհնել զարտունս և զվշակս, և մաղթել նոցա հունձս և կութս առատս։ Յայսպիսւոյ օրհնութենէ զրկեացին, ասէ, ատեցօղք Սիոնի։

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ

Զի բարի է միաբանութիւն յեկեղեցւոջ, և օրհնեալ յԱստուծոյ:

Ո՛հ զի բարի, զի վայելուչ,
Բնակել եղբարց ի միասին համաշունչ.
Որպէս ի գլուխն Ահարոնի
Եւ ի մօրուս իւղն որ ի՝ջեալ զեղանի,
Եւ ի մօրուաց անտի նորուն
Մինչ ի գրպանս անդր ի՝ջանէ ի զգեստուն.
Կամ որպէս ցօղ քաղցրածաւալ
Ի Հերմոնէ ի Սիոն լեառըն ցօղեալ: (1)
Անդ պատրաստեաց տէր զօրհնութիւն, (2)
Ի նմա ըզկեանս յաւէրժ անմահ մընայուն:

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ

Իսրայելացւոց զերկոց 'ի Բաբելոն իդձք դառնալոյ 'ի հայրենիս, և կանխաւասացութիւն պատուհասի նոցին և բաբելացւոց: Այլաբանութիւն զերութեան ազգի մարդկան 'ի ձեռս դժոխոց:

Ցեղըդ գետոյն բաբելացւոց անդ նստաբաք մեք եւ լայաք,
Ի յիշել մերում անձկով անդ ըզՍիոն,
Ի մէջ ուռեաց նոցին ըզքնարըս մեր կախեալ: (1)
Գերիչքն մեր անդ հարցանէին զերգս օրհնութեանցըն մերոց,
Գերեվարքն մեր ըստիպէին ըզմեզ ի նուագ եւ ասէին. (2)

(1) Ի Հերմոնէ 'ի Սիոն, այսինքն և 'ի Հերմոն և 'ի Սիոն՝ որ այլ և այլ լերինք են, Հերմոն բարձրագոյն քան զՍիոն. վասն որոյ անտի 'ի Սիոն ասի ցօղն ծաւալեալ, որպէս իւղ 'ի գլխոյն Ահարոնի 'ի մօրուսն, և 'ի մօրուաց 'ի գրպանս զգեստուն:

(2) Ուր խաղաղութիւն է և միաբանութիւն, անդ տայ տէր զօրհնութիւն իւր: Աստանօր սաղմոսերգուն յաւելու և զկեանս յաւիտենից, յայտ իմն այսպէս արարեալ՝ զի խօսի զեկեղեցւոյ սրբոյ, յորում հաւատացեալք սիրով և միաբանութեամբ կեցցեալ՝ ժառանգեսն զկեանս յաւիտենից:

(1) Զի 'ի գերութեան անդ իւրեանց Հրեայք առ տրտմութեան լեալ էին յերգոց, զնաղմոսարանս իւրեանց 'ի բաց եդեալ:

(2) Բաբելացիք գերեվարքն Հրէից, առ հեռաքրքիր ցանկութեան լսելոյ զերգս նոցա, և առ 'ի հեգնել ևս, ստիպէին զնոսա յերգս: Իսկ նոքա ոչ առ տրտմութեան ևեթ չկամէին երգել, այլ և զի մի զբանս աստուածային երգոցն 'ի լուր անհաւատից անսուրբ առնիցեն:

Օրհնեցէք մեզ զի լուիցուք յօրհնութենէն Սիոնի։
Ա՛յլ թէր էր մեզ զօրհներգութիւնքս տեառն երգել յերկիր օտար։
Թէ մոռացայց ըզքեզ Սաղէմ, թող եւ զնա աջ իմ մոռասցի.
Լեզուս ի քիմն իմ կցեսցի, թէ զքեզ ոչ եւս յիշեցից,
Թէ ոչ ըզքեզ Երուսաղէմ ի նախերգանս իմ նուագեցից, (1)
Թէ ոչ ի սկիզբն ուրախութեան իմոյ ըզքեզ երգեցից։
Յիշեա տէր յօրէն Սաղէմի, յիշեա զորդիս Եդովմայ, (2)
Զի ասէին. Քակեցէք զայդ, եւ հիմն ի վեր տապալեցէք։
Դուստրը դու հէք բաբելացւոց, երանի այնմ որ հատուցցէ
Ի ծոց քոյին ըզհատուցումն՝ զոր դու մեզ հատուցեր.
Երանի՛ որ ըզմանկունսդ քո կալեալ հարցէ զքարի։

ՍԱՂՄՈՍ ՃԽԷ

Յորդորէ աստ սաղմոսերգուն զովել զտէր, վասն լցուցանելոյ նորա հոգեւոր և մարմնաւոր բարեօք զնկեղեցի։

Գովեա ըզտէր, Երուսաղէմ. օրհնեա զԱստուած քո, Սիոն.
Զի զնկեղս դրանց քոց զօրացոյց, օրհնեաց զորդիս քո՝ի քեզ։ (1)
Ո՞ ըզսահմանս քո եդ յերանաւէտ խաղաղութիւն, (2)
Եւ ծածանեալսն ցորենով՞ զանդաստանս քո լցոյց.
Առաքէ զբան իւր յերկիր, վազվազ գընան պատգամք նորա. (3)

(1) Ա՛յս ինքն՝ի վեր քան զամենայն երգս ուրախութեան և որպէս առաջին՝ի բերկրանս իմ երգեցից զքեզ։ Ա՛յսպիսի գութ և գորով որդիական՝ի դէպ է քրիստոնէի առ եկեղեցի սուրբ, վշտակից գոլ ընդ նմա՝ի վիշս, և ուրախակից՝ի սփոփանս։

(2) Եդովմայեցիք միաբանեալ ընդ զօրս Նաբուգոդոնոսորի՝ խրախուսէին զնոսա՝ի կործանումն Երուսաղէմի. վասն որոյ ասէ սաղմոսերգուն, զի և անգթութեան նոցա հասցէ պատուհաս յաւուր կործանման Երուսաղէմի։ Քանզի օր՝ի սուրբ գիրս նշանակէ բազում ուրեք օրհաս կամ պատուհաս (Սղմ. ԼԶ. 13։ Երեմ. ԺԼ. 16։) Եւ որպէս պատմէ Յովսեպոս, հինգ ամաւ յետոյ քան զաւերն Երուսաղէմի՝ եհար Նաբուգոդոնոսոր և զեդովմայեցիս։ Իսկ Բաբելն՝ի ձեռն Կիւրոսի ընկալաւ զպատուհաս իւր, աղէտս՝ի վերայ աղէտից կրեալ մինչև ցկործանումն՝ զոր և Իսայի նախագուշակեալ (ԺԳ. 16։)

(1) Զօրացուցանել զնկեղս՝ է ապահովել յամենայն վտանգաց, աներկեան առնել զեկեղեցի սուրբ. և օրհնել զորդիս նորա՝ է ընել զնոսա շնորհօք։

(2) Ա՛յս այն խաղաղութիւն է, զոր տայ Քրիստոս հաւատացելոց իւրոց. խաղաղութիւն ներքին՝ որ՝ի վեր է քան զամենայն միտս և զբան։ Իսկ ցորենով՝ի սուրբ խորհուրդն հաղորդութեան ակնարկէ։

(3) Բան և պատգամ քարոզութիւն աւետարանին է, որ արագ արագ՝ի ձեռն առաքելոց և յաջորդաց նոցա ծաւալեցաւ ընդ տիեզերս։

Տեղայ ըզձիւն որպէս զասր, եւ զմէգ հանդոյն փոշւոյ ցանէ. (1)
Արկանէ զսառն որպէս պատառս բիւրեղեայս,
Եւ ի սարսուռ ցրտոյ նորա ո՞ կարասցէ հանդարտել.
Յրդէ հրաման, եւ լուծանին սառամանիք.
Շընչէ հարաւահողին, եւ գնան առուք ջուրց ի ծաւալ:
Պատմէ ըզբան իւր Յակոբայ, (2)
Զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայելի:
Ոչ այսպէս արար ազգաց տէր եւ ազանց բոլորեցուանց.
Ուստիք ի նոցանէ ըզդատաստանս իւր ոչ յայտնեաց:

ՍԱՂՄՈՍ

ԻՆՔՆԱԳԻՐ ԴԱՒԹԻ ԱՐՏԱՔՈՑ ԹՈՒՈՑ*

Ի ժամանակի՝ զի կէ նա նահատակ ընդդեմ Գողիաթու առաջի Սաւուղայ և զօրացն Իսրայելի:

Փոքր ի յեղբարս իմ ես էի, կրտսեր ի տան հօր իմոյ.
Ի սոյլ սրընդի ընդ արօտ արածէի զխաշն հայրենի:
Արարին ձեռք իմ ինձ քընար, գործի մատուանք իմ օրհնութեան.
Իսկ արդ ո՞ ըզտեառն իմոյ նուագել ըզնորհս կարիցէ.
Այլ լսելի սրբոյ ադիտին է եւ համբոյ սրբոյ բարբառ:
Օրհնեսցէ անձն իմ ըզտէր, որ ըզհրեշտակ իւր առաքեաց (1)
Եւ ի հօտէ անտի խաշանց էառ ամբարձ զիս յաթոռ.
Իւղ ըզգըլխով իմով եհեղ, էօծ կացոյց զիս թագաւոր:
Ահա եղբարք իմ մեծամեծք, ահա եղբարք իմ գեղեցիկք.

(1) Մէջ կոչէ զեղեամն և զցօղ, և այսպէս իսկ զսուն սաղմոսիս թարգմանէ Եղնիկ (գլ. ԾԸ.) «Եւ զեղեամն որպէս զփոշի ցանեաց»։ Զայս ամենայն յեղմունս տարեաց 'ի նեղբս ածէ սաղմոսերգուն, առ 'ի ցուցանել զինամս Աստուծոյ յաշխարհս բերոյ երկրի և 'ի մնունդ մարդկան։

(2) Յայտ առնէ զմարգասիրութիւնն Աստուծոյ, որ 'ի ձեռն աւետարանին յայտնեաց մեզ զճշմարտութիւնս հաւատոյ և զաստուածային խորհուրդս, յորոց զրկեալ դատեին անհաւատք և կռապարիշտք։

* Սաղմոսս այս չիք 'ի բնագիրն եբրայական, և ոչ 'ի քաղդէացի թարգմանութեան. պակասէ և յընտիր օրինակս Եօթանասնից, և յառաւելագոյնս 'ի լատինացւոյն։ Այլ գտանի յասորին, յարաբացին, և յօրինակս ինչ յոյն թարգմանութեան. վասն որոյ և առ ոմանս 'ի նախնեաց յիշատակի օրպէս արտաքոյ կանոնական սաղմոսաց, որում և մակագիր սաղմոսիս 'ի ճահ պատահէ՝ ինքնաքէր կոչելով զսա և արտաքոյ խառոյ ՃԾ սաղմոսաց։

(1) Զհրեշտակ իւր, այսինքն զՍամուէլ մարգարէ։

Այլ ոչ ընտրեաց ըզնոսա տէր, ոչ հաճեցաւ տէր ընդ նոսա։
Եւ 'նդ առաջ այլազգւոյն, ըզդիս նորա նըզովեցի։ (1)
Հանի զսուսերն ի նմանէ, հատի զգըլուխս նորա նովին,
Ի բաց յորդւոցն Իսրայելի ըզնախատինքս բարձեալ։

(1) Նզովել Դաւթի զկուռս այլազգւոյն ոչ է պատմեալ 'ի սուրբ գիրս։ այլ 'ի նզովել սորա զԴաւթի դիմաքն խրոմք՝ որպէս անդ պատմի՝ (Ա Թգ. ԺԷ. 43.) հարկաւորապէս և Դաւթի զդիս նորա նզովեաց։

ՃԱՇԱԿ

Ի ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՑ

ՅՈՎԵԼԵԱՅ ԳԼՈՒԽ Բ

Յովել մի յերկոտասան մարգարէիցն է, որք վասն սակաւ ինչ մարգարէութիւնս գրով թողեալ՝ փոքր մարգարէքն կոչին։ Եկաց սա առ Եզեկիաւ, ըստ նախադրութեան մարգարէական գրոց։ իսկ ըստ այլոց՝ յաւուրս Յովակիմայ արքայի։ Երիս և եւթ գլուխս մարգարէութեանց եթող, և յերկրորդումն 'ի սոցանէ, զոր ընծայեմք ասա 'ի Ճաշակ, զերս առորեստանուցն 'ի վերայ իսրայելացւոց վասն մեղաց նոցա գուշակէ։ և միայն հնարս զերծանելոյ 'ի պատուհասէ անտի ցուցանէ գառնալ առ Աստուած։ Եւ ապա զբարերարութիւնս Աստուծոյ 'ի վերայ ապաշխարելոց նկարագրեալ, զնորհս փրկչին, զէջս հոգւոյն 'ի վերնատունն, և զդէպս լեզուացն՝ որ առաքելոցքն լինելոց էր՝ պատմէ, և 'ի դէմս Իսրայելի աւետաւորէ ամենայն ազգաց զփրկութիւն։

Փող հարէք, ձայն ի Սիոն տուք, և քարոզ կարդացէք։ (1)
Ի լերինն սրբութեան ժողովեսցին բնակիչք երկրի,
Զի աւասիկ մերձ է օր տեառն, օր խաւարի եւ մթի։
Տարածեսցի իբր առաւօտ զօր ի լերինս բազմազօր, (2)

(1) Փող ասէ հարկանել, ոչ 'ի զօրաժողով և 'ի զէն, այլ ընթանալ 'ի տաճար, խնդրել ողորմութիւն 'ի տեառնէ ապաշխարութեամբ և աղօթիւք առ 'ի զերծանել 'ի հասեալ պատուհասէն։

(2) Ոմանք ասա զօրօք խմանան զբազմութիւն մարախոյ՝ որով պատժէրն Աստուած զիսրայելացիս, և զորս կոչէ ապա 'ի տողն 64 զօր իւր մեծ։ Այլ ըստ այսմ ևս պարտ է խմանալ այլաբանօրէն զզօրս քաղդէացւոց, զորս նմանեցուցանէ լուսոյ առաւօտու՝ որ 'ի քթթել ական ծաւալն ընդ երկիր։ քանզի սոքա վնասակարագոյնք քան զամենայն թշնամիս եղեն իսրայելացւոց, վասն որոյ ասէ մարգարէն։ «Նման նմա ոչ եղև յաւիտենից, և զհետ նորա ոչ ևս յաւելցի լինել ազգաց մինչև յազգս»։

Որպիսի ոչ տեսին երբէք, եւ ոչ տեսցեն յաւիտեանք։
Առաջ նորա հուր ծախիչ, եւ վերջ նորա բոց բորբոքեալ։ (1)
Դաշտք առաջի իւր գեղազուարճք իբրեւ ըզդրախտ փափկութեան,
Խոպան ըզհետ իւր անապատ, չիք ի նմանէ եւ ծիլ ապրեալ։
Տեսիլ նորա իբր ըզտեսիլ ահեղախրոխտ երիվարաց։ (2)
Որպէս ըզգունդքս հեծելոց հասանեն դան արշաւասոյր,
Իբր ըզաչիւն կառաց ի գլուխքս լերանց դան ասպատակեալ։ (3)
Որպէս շառաչ բոցոյ հրոյ որ ընդ եղէգն ընթանայցէ։
Իբր յոգնախուռմբ եւ հրզօր պատրաստեալ զօր ի պատերազմ։
Յերեսաց նորա բանակք ըսպառազէնք խորտակեսցին։
Իբր այրեցած պուտան յահէ դէմք բոլորից այլագունեալ։
Յարձակեսցին իբր ախոյեանք դիմեալք յահեղ ճակատամարտ,
Եւ ընդ պարիսպս ընդոստ ի վեր ելցեն իբր արք պատերազմողք։
Անբստերիւր ի շաւղաց գնասցեն անձնիւր զիւր ճանապարհ։ (4)
Մի յընկերէ ոք յիւրմէ, եւ մի զատցի այր յեղբօրէ։
Զինու ծանու ըզեհիկք՝ անխոցք ընդ տեղ նեռից եւ ընդ տարափ,
Հասցեն առ դրունսքս քաղաքին, եւ զպարըսպօքն ճեմ առցեն։
Մըտցեն ի խորս ապարանից, ելցեն զերդ գողք ընդ պատուհանս։
Յերեսաց նոցա սարսեալ երկինք ուերկիր դողդողեսցին։
Խաւարեսցի արեգակն, արկցէ լուսին զքօղ զերեսօք։ (5)
Ծածկեսցեն նրսեմաստուեր ըզլոյս իւրեանց բոյլք աստեղաց։
Եւ տէր ըզձայն իւր յամպոց տացէ ի շրմնդն աստուածասաստ,
Բանակին իւրում մեծի կարապետեալ յառաջընթաց։
Զի հրզօր եւ ահարկու է գործ մարտին՝ զոր տէր մըղէ,
Զի է օր տեառն երեւելի, եւ ո՞ կարէ կալ հակառակ։
Ա՛յլ ինքն ըզգէն եւ զասպար ընդդէմ ասատիցն իւր ընձեռէ։
Դարձարո՛ւք առ իս, ասէ տէր, ի բոլոր սրտէ ձերմէ։
Առ տէր Աստուած ձեր դարձարո՛ւք պահօք լալով եւ կոծելով։
Հերձէ՛ք պատառեցէ՛ք ըզսիրտս ձեր եւ մի զհանդերձ։
Զի ողորմած է տէր դըթած անոխակալ եւ մարդասէր։
Ո՞ գիտէ, դարձցի թերեւս եւ զըղջասցի նա ի չարեաց,

(1) Ընդ ուր ուրեք և անցանէ բանակն այն, ծախէ սպառասպուռ զամենայն որպէս հուր։

(2) Զիոց ճակատելոց 'ի պատերազմ նմանեցուցանէ զմարախ և աւետարանիչն 'ի Յայտնութեան. (Թ. 7.) «Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ»։

(3) Պատմէ Պլինիոս (գիրք ԺԱ. գլ. ԻԹ.) զի բազմութիւն մարախոյ 'ի թռանելն ածէ շառաչ մեծ որպէս զՀաւուց մեծամեծաց թռուցելոց։

(4) Սուրբն Հերոնիմոս ականատես լեալ 'ի Պաղեստին, վկայէ զյարձակումն բազմութեան մարախոյ զօրէն ճակատու և իբրև զփաղանգ պնդակազմ։

(5) Ի Թանձրախիտ բազմութենէ մարախոյ ծածկի երկին և արև որպէս յամպոյ։

Զոր սպառնացաւն ածել ըզձեզ, ողորմեցի Թերեւս ի ձեզ.
Թերեւս ի բոյր անուշահոտ Սրնկոցդ հաճեալ հոտոտեսցի,
Եւ հաշտ ի զոհ ձեր ակնարկեալ, Թողցէ ըզհետ իւր օրհնութիւն:
Փող հարէք ի Սիոն, քարոզել պահ եւ պաղատանս.
Սրբեցէք զեկեղեցի, եւ ժողովուրդդ խմբեցէք,
Ի սրընդիայ մանկանէ մինչեւ ցրծերն ալեւորեալ.
Թողցէ հարսն ըզսրբոսկապան, ելցէ փեսայ յառագաստէ.
Լացցեն քահանայք ընդ աստիճանս եւ ընդ սեղան, (1)
Եւ դերարտասրը պաշտօնեայք տեառն ինքնացեն հեծեծելով.
Խնայեա ի ժողովուրդ քո, տէր, խնայեա. եւ մի Թողուր
Տիրել ազգաց ժառանգութեանդդ քում, զի մի ասիցեն
Ո՞ւր է Աստուած նոցա, Թող ըզժողովուրդ իւր փրրկեացէ:
Ցայնժամ խնայեաց տէր ի Սիոն, զարթեաւ նախանձ իւր, եւ պաս-
Ահա ես առաքեցից ի ձեզ ցորեան իւղ եւ գինի. [գամ.
Ոչ եւս ըզձեզ ի նախատինս ազգաց ու ի սուր մատնեցից.
Յերկիր անջրդի զհիւսիսայինն հալածեցից. (2)
Զառաջ նորա մինչեւ ի ծովն մերժեցից առաջին,
Եւ զվերջ նորա վանեցից արկից ի ծով անդր ի վերջին.
Անդ նեխեսցի, եւ դիականցն ընդ ծուխս ելեաց խառնեալ շարաւ, (3)
Բուրեսցէ դարշահոտ, լուծցէ ըզվրէժ ցասման իմոյ:
Քաջալերեաց երկիր խընդա, զի սքանչելս արար քեզ տէր.
Քաջալերեաց երէ վայրի, դալարացան դաշտք ի յարօտ.
Երկնեաց որթ եւ թըզենի, ծանրեալ ծառոյ կողերք ի միդ:
Եկա՛յք որդիք Սիոնի, ի տէր Աստուած ձեր ցընծացէք,
Զի խնայեցի ի ձեզ, զի տայ ձեզ կերակուր արդարութեան.
Զի տեղացից ձեզ անդրէն անձրեւ կանուխ եւ անագան,
Եւ հատուցից ընդ տմացն՝ յորրս մարախն եւ ջրեակ
Ցորրս թըրթուրն ապականիչ եհար աւար, զոր իմ մեծ:
Ուտելով կերիջիք, եւ կըշտասկնդ վայելեսջիք.
Ըզտէր Աստուած ձեր օրհնեսջիք, զի մեծացոյց զառնել իւր ձեզ.

(1) Քանզի անդ քահանայք զաղօթս մատուցանէին, այսինքն ընդ աստիճանս՝ ուր էին սրբութիւն սրբոց, և ընդ սեղան զոհից՝ որ էր յանդաստակի տաճարին:

(2) Յաճախ ուրեք սուրբ գիրք 'ի հիւսիսակողմն դնեն գլաղդեացին, որպէս և էրն 'ի հիւսիսոյ երկրին Պաղեստինու:

(3) Որպէս յարտաքնոց խակ 'ի գրոց յայտ է, տեղատարափ մարախոյ 'ի կողմանս հրէաստանի հողմավարեալ 'ի ծովափունս նեխի, մինչև ժանտախտ իսկ ապականութեամբն ածել: Զսոյն պատուհաս սպառնայ մարգարէն զօրաց քաղդէացւոց, արկանել զդիակունս նոցա ծովէ 'ի ծով 'ի նեխ ապականութեան:

Եւ մի եւս ամաչեցէք դուք Ժողովուրդ իմ յաւիտեան, (1)
Զի Ծանուցից տիեզերաց թէ եմ ի մէջ Իսրայելի,
Եւ Ծանիցեն թէ ես եմ տէր, եւ չիք ոք այլ բաց յինէն։
Յետ այսորիկ հեղից յոգւոյ իմմէ ի սիրտս մարմնեղէն.
Յայնժամ ուստերք ձեր եւ դստերք հերձցեն ըզքօղ հանդերձելոց.
Մանկտին տեսիլքս տեսցէ, ծերք երազովք երազեսցին.
Եւ ծառայք եւ աղախնայք իմ եղիցին ի մարգարէս.
Եւ տաց նշանս յերկինս ի վեր, նշանս յերկիր ի խոնարհ,
Արիւն եւ հուր, ծուխ եւ մրրրիկ. լուսին մրոայլ ներկցի յարիւն,
Դարձցի արեւ ի խաւար, չեւ եցէ օրն այն մեծ հասեալ։ (2)
Յայնժամ կեցցէ ամենայն՝ որ զանուն տեառնէն կարդայցէ.
Զի ի Սիոն եւ ի Սաղիմ պատրաստեցէ տէր ապաւէն,
Որոց կոչ երկնահրաւէր ի տեառնեակոլմէն կոյս հասեալ։

(1) Դարձուցանէ զբանն 'ի Նորն Սիոն, և նախ զմշտնջենաւորութենէ նորա աւետաւորէ ըստ տեառն բանի. «Ես ընդ ձեզ եմ մինչև 'ի կատարած աշխարհի»։ Եւ ապա նկարագրէ զշնորհս Հոգւոյն հեղեալ յառաքեալս, և նոքօք 'ի հաւատացեալս։ Զիք երկբայել զայսմանէ, Նորին իսկ առաքելապետին յառաջնումն քարոզութեան զբանս զայս 'ի դէմս ածելով առ ժողովուրդն զարմացեալ։

(2) Օր Դէ իմա զերկրորդի գալստեանն Քրիստոսի, որպէս սովոր են կոչել զայն գիրք. և չեն ինչ զարմանք, զի մարգարէք և Քրիստոս ինքնին զերկրորդ գալստենէն ընդ առաջնումն 'ի միասին ճառեն, առ 'ի շարժել ահիւ երկրորդին յապաշխարութիւն զայնոսիկ՝ որք առաջնոյն ընդհանրաբար չյորդորին։

2059

ՀՀ Ազգային գրադարան

NL0029078

カ5ナ6